

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOSOPHY, PSYCHOLOGY

№ 1(49)
2026

«Բանբեր Երևանի համալսարանի, Փիլիսոփայություն, Հոգեբանություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Философия, Психология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета». Three issues of "Journal of Yerevan University. Philosophy, Psychology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Редакционная коллегия:

Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝

Главный редактор:

Editor-in-chief:

Հարությունյան Էդվարդ (փ.գ.դ., պրոֆ.,
edvardharutyunyan@ysu.am)

Արսյոնյան Էդուարդ (դ.փլ.հ., պրոֆ.)

Harutyunyan Eduard (*Sc. D. in Philosophy, Professor*)

Ավանեսյան Հրանտ (հ.գ.դ., պրոֆ.,
avanesyanh@ysu.am)

Аванесян Грант (д.псих.н., проф.)

Avanesyan Hrant (*Sc. D. in Psychology, Professor*)

Բաղրամյան Մարիա (փ.գ.դ., պրոֆ.,
Grigoriyana, maria.baghratian@ucd.ie)

Баграмян Мария (д.флс.н., проф., Ирландия)

Baghratian Maria (*Sc. D. in Philosophy, Professor, Ireland*)

Բարսեղյան Հակոբ (փ.գ.դ., Կանադա,
hakob.barseghyan@utoronto.ca)

Барсегян Акоп (д.флс.н., Канада)

Barseghyan Hakob (*Sc. D. in Philosophy, Canada*)

Գոսсерիես Աքսել (փ.գ.դ., պրոֆ., Բելգիա,
axel.gosseries@uclouvain.be)

Госсериес Аксель (д.флс.н., проф., Бельгия)

Gosseries Axel (*Sc. D. in Philosophy, Professor, Belgium*)

Ջաքարյան Մելան (փ.գ.դ., պրոֆ.,
szakaryan@ysu.am)

Закарян Сейран (д.флс.н., проф.)

Zakaryan Seyran (*Sc. D. in Philosophy, Professor*)

Ճեմոյել-Պյոտրովսկա Մազդալենա

(հ.գ.դ., պրոֆ., Լեհաստան, *m.zemojtel-piotrowska@uksw.edu.pl*)

Жемойтель-Петровска Магдалена

(д.псих.н., проф., Польша)

Zemojtel-Piotrowska Magdalena (*Sc. D. in Psychology, Professor, Poland*)

Լոբովսկի Դմիտրի (հ.գ.դ., պրոֆ.,

Лубовский, lubovsky@yandex.ru)

Лубовский Дмитрий (д.псих.н., проф., Россия)

Lubovski Dmitri (*Sc. D. in Psychology, Professor, Russia*)

Խաչատրյան Նարինե (հ.գ.թ., դոց.,
n_khachatryan@ysu.am)

Хачатрян Нарине (к.псих.н., доц.)

Khachatryan Narine (*PhD in Psychology, Associate Professor*)

Մարկոշյան Մարիաննա (փ.գ.դ., պրոֆ.,
UUG, markosh@uga.edu)

Кошкарян Марианна (д.флс.н., проф., США)

Koshkaryan Marianna (*Sc. D. in Philosophy, Professor, USA*)

Գայանեսյան Գայանե (հ.գ.դ., պրոֆ.,
gayaneshahverdyan@ysu.am)

Шавердян Гаяне (д.псих.н., проф.)

Shaverdyan Gayane (*Sc. D. in Psychology, Professor*)

Պետրոսյան Սիլվա (պրոֆ. քարոզչության,
փ.գ.թ., դոցենտ, silva.petrosyan@ysu.am)

Петросян Сильва (отв. секретарь,

к.флс.н., доц.)

Petrosyan Silva (*Executive Secretary, PhD, Associate Professor*)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ
ФИЛОСОФИЯ
PHILOSOPHY

- Չարինե Յարայան* – «Ես-Ուրիշը» երկխոսության ձախողումը որպես ինքնության ճգնաժամի պատճառ..... 5
Karine Yaryan – Несостоявшийся диалог «Я-Другой» как причина кризиса идентичности
Karine Yaryan – The Disruption of Self–Other Dialogue as a Cause of Identity Crisis
- Վարդան Վարապետյան* – Գեղագիտական արժեքի ըմբռնումը Շ. Պերպերյանի արժեքաբանական ուսմունքում..... 16
Вардан Карапетян – Понимание эстетической ценности в аксиологическом учении Шахана Перперяна
Vardan Karapetyan – The Views of Aesthetic Value in Shahan Perperyan’s Theory of Value
- Նարե Շալունց* – Մարդկային հատկանիշը առաձներում ու ասացվածքներում. լեզվի բնորոշման ճանաչողական-փիլիսոփայական դիտանկյուն..... 27
Наре Шалунц – Человеческая характеристика в пословицах и поговорках: когнитивно-философский взгляд на определение языка
Nare Shalunts – The Human Trait in Proverbs and Sayings: A Cognitive-Philosophical Insight into the Characterization of Language
- Ալբերտ Հազարյան* – Գիտական գիտելիքի ճշմարտության արտակարուցվածքային և ներկարուցվածքային գնահատման չափանիշները..... 43
Альберт Казарян – Внеструктурные и внутрискруктурные критерии истинности научного знания
Albert Ghazaryan – Extra-Structural and Intra-Structural Criteria for the Truth of Scientific Knowledge

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ПСИХОЛОГИЯ
PSYCHOLOGY

- Հրանտ Ավանեսյան, Դիանա Ավթանդիլյան, Անահիտ Ամիրջանյան* – Բռնի տեղահանված անձանց մոտ կուտակային սթրեսի միջառարկայական գնահատման անհրաժեշտության մեթոդաբանական սկզբունքներ..... 51
Грант Аванесян, Диана Автандилян, Анаит Амирджанян – Методологические принципы необходимости междисциплинарной оценки кумулятивного стресса у насильственно перемещенных лиц

Hrant Avanesyan, Diana Avtandilyan, Anahit Amirjanyan – Methodological Principles for the Need for an Interdisciplinary Assessment of Cumulative Stress in Forcibly Displaced Persons

Էլինա Ասրիյան, Հասմիկ Մարգսյան – Քաղաքական դիրքորոշումների գնահատման մեթոդիկայի մշակում և հուսալիության ստուգում..... 63

Элина Асриян, Асмик Саргсян – Разработка методики оценки политических диспозиций и проверки надежности

Elina Asriyan, Hasmik Sargsyan – Development of a Methodology for Assessing Political Dispositions and Measuring Reliability

Էմմա Մարգսյան – Իրական և թվային սոցիալականացման գործոնների ազդեցությունը անձի առկա հոգեբանական բարեկեցության վրա..... 73

Эмма Саркисян – Влияние факторов реальной и цифровой социализации на актуальное психологическое благополучие личности

Emma Sargsyan – The Impact of Real and Digital Socialization Factors on Personality's Current Psychological Well-Being

Մարիամ Մանուկյան – «Անձի ինքնափոփոխման ներուժ» հարցաշարի բովանդակային վավերականության գնահատումը CVI մեթոդի կիրառմամբ..... 90

Мариам Манукян – Оценка содержательной валидности опросника «потенциал самоизменений личности» с использованием метода CVI

Mariam Manukyan – Content Validity Assessment of the "Personal Self-Transformation Potential" Questionnaire Using the CVI Method

Եվա Դուկասյան, Եվա Ասրիբաբայան – Քաղցկեղ ունեցող անձանց շրջանում հիվանդության փուլի վերաբերյալ տեղեկացվածության դերը մտերիմների հետ կապվածության, կյանքի իմաստավորման և հուսահատության դրսևորումների համատեքստում..... 101

Ева Гукасян, Ева Асрибабаян – Роль информированности о стадии заболевания у лиц с онкологическими заболеваниями в контексте привязанности к значимым другим, смыслообразования жизни и проявлений безнадёжности

Yeva Ghukasyan, Yeva Asribabayan – The Role of Awareness of the Disease Stage Among Individuals with Cancer in the Context of Attachment to Relatives, Meaning in Life, and Manifestations of Hopelessness

«ԵՍ-ՈՒՐԻՇԸ» ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՉԱԽՈՂՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՃԱՌ

ԿԱՐԻՆԵ ՅԱՐԱԼՅԱՆ 

Երևանի պետական համալսարան

Մարդը մշտապես Ուրիշի որոնման և իր մեջ վերջինիս բացահայտման վիճակում է, ինչն էլ հնարավորություն է տալիս մեզ՝ որպես Ես-ի/Մենք-ի՝ ընդարձակելու մեր ինքնաճանաչողության հորիզոնները: Ես-ի և Ուրիշի գոյաբանական միասնությունը նշանակում է, որ երկրորդը առաջինի ինքնության կառուցարկման կարևոր մասնակիցներն են: Այդ միասնությունը դրսևորվում է Ես-ի բովանդակային երկակիությամբ: Բացի այդ, վերջինիս լինելիության հայտարարագրումը Ուրիշի կողմից իրականացվում է «ժամանակային ձևաչափով», քանի որ միայն Ուրիշն է ունակ տեղավորելու Ես-ին ներկայում, ինչպես նաև սահմանելու վերջինիս «կյանքի ժամանակը»՝ իր վրա վերցնելով նրա կյանքի առանցքային իրադարձությունների (ծննդյան և մահվան) հուզական ծանրաբեռնվածությունը: Քանի որ Ես-ի վերջավոր լինելու փաստը գրանցելու հնարավորությունը տրված է Ուրիշին՝ ստացվում է, որ նրա գոյության արժեքը ևս ամրագրվում է վերջինիս կողմից, ինչը ընդգծում է երկկողմանի բարոյական լեգիտիմության անհրաժեշտությունը: Հետևաբար, Ուրիշի հետ հաղորդակցության ձևաչափում, որի արդյունքում փլուզվում է երկխոսության մասնակիցների միջև առկա բարոյական կամուրջը, կարող է դառնալ ինքնության ճգնաժամի պատճառ: Նման ճգնաժամի հաղթահարումը առաջին հերթին Ուրիշի ընդունման և վերջինիս առջև սեփական պատասխանատվության բարոյագիտական խնդիր է: Ուրիշի հետ երկխոսությունը մոտեցնում է ընդհանուր եզրագծին, ինչը ապահովում է կողմերի ինքնարնկալման համարժեքությունն ու սեփական Ես-ի ամբողջականությունը:

Բանալի բառեր - *Ես, Ուրիշը, ինքնության ճգնաժամ, երկխոսություն, գոյաբանական միասնություն, բարոյական կամուրջ, պատասխանատվություն, ազատություն*

Կարինե Յարալյան – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ

Карине Яралян – кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики ЕГУ

Karine Yaralyan – Candidate of Philosophical Science, Associate Professor at the Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics, YSU

Էլ. փոստ՝ karineyaralyan@ysu.am ORCID ID: <https://orcid.org/0009-0001-0876-6620>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 03.03.2026

Գրախոսվել է՝ 11.03.2026

Հաստատվել է՝ 02.04.2026

© The Author(s) 2026

Մարդկայինի որոշակիությանը վերաբերող ամենաբարդ գործընթացներից մեկը ինքնանույնականացումն է, ինչը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, այդ թվում՝ մարդկային բնույթի սուբստանցիոնալ հակասականությամբ: Որպես կանոն, ինքնության տակ հասկանում են պատկերացումների, համոզմունքների և արժեքների այնպիսի մի համախումբ, որն անհատական կամ կոլեկտիվ մակարդակներում այս կամ այն սոցիալական միավորի կողմնորոշիչ առանցքն է: Եվ հաճախ այս մեկնաբանությունը տանում է մեզ դեպի գուտ ներկային կողմնորոշված Ես-ի կամ Մենք-ի դիտարկում: Սակայն նշենք, որ ինքնության նման ստատիկ ընկալումը, հատկապես անցումային իրավիճակներում և փոխակերպումների պայմաններում, հաճախ դառնում է այս կամ այն Ես-ում կամ Մենք-ում ալեկոծությունների առաջացման պատճառ, ինչը լրացուցիչ անգամ շեշտում է այն փաստը, որ ինքնությունը պետք է ընկալվի որպես ինքնակառուցարկման գործընթաց. մոտեցում, որն ընդլայնում է գոյության ժամանակայնությունը (տեմպորալությունը) և ներկա ինքնության սահմաններում ընդգրկում է ինչպես անցյալը, այնպես էլ ապագան՝ առաջ քաշելով ոչ միայն այն հարցը, թե «ով եմ ես», այլև ընդգծելով մեր սեփական նախագծի թեման, այն է՝ «ով եմ ես ձգտում լինել»:

Ինքնության նման ներքին դինամիկան գլխավորապես պայմանավորված է այնպիսի գոյաբանական բնութագրիչով, ինչպիսին է հաղորդակցումը, որի պահանջը կրկին բխում է մարդկային ներքին անհամասեռ (հետերոգեն) բնությունից: Սա նշանակում է, որ մարդը մշտապես Ուրիշի որոնման և իր մեջ վերջինիս բացահայտման վիճակում է, ինչն էլ հնարավորություն է տալիս մեզ որպես Ես-ի կամ Մենք-ի՝ ընդարձակելու մեր ինքնաճանաչողության հորիզոնները: Ստացվում է, որ Ուրիշը՝ որպես հաղորդակցման գործընթացի անհրաժեշտ մասնակից և, հետևաբար, մեզ համար չափազանց կարևոր իմաստակերտ էակ, մեր Ես-ի կամ Մենք-ի կառուցարկման ակտիվ գործոն է: Ավելին՝ որոշ փիլիսոփաներ ընդհանրապես բացառում են որևէ գուտ Ես-ի հնարավորությունը:

Եթե պատմափիլիսոփայական փոքրիկ ակնարկ կատարենք, ապա կտեսնենք, որ ինքնության հարցը սուբյեկտի ինքնանույնականացման գործընթացի համատեքստում (այսինքն՝ այն մեկնաբանությամբ, որը գերակշռում է ներկա ժամանակներում) առաջին անգամ դրվել է Ջոն Լոկի կողմից, ըստ որի՝ անձի նույնացումը հաստատվում է գիտակցության, ինչպես նաև հիշողության ամբողջականությամբ և միասնականությամբ¹: Մյուս կողմից, ինչպես արդեն նշել ենք, ինքնությունը ոչ այնքան այն մասին է, թե *ով եմ ես*, որքան այն մասին է, թե *ինչպիսին եմ ես* ուզում լինել, *ինչպիսիք են* իմ ինքնակառուցարկման հեռանկարներն ու ուրվագծերը: Եվ եթե ինքնությունը գործընթաց է, ապա այն

¹ См. у Локк Дж., Опыт о человеческом разумении // Сочинения в трех томах: Т. 1. М.: Изд-во «Мысль», 1985, с. 70:

առաջին հերթին ենթադրում է ինքնաընկալում, ինքնանկարագրում և ինքնամեկնություն, ինչն էլ իր հերթին փաստում է, որ այդ գործընթացի շրջանակներում տեղի է ունենում իմաստների մշտական կուտակում, որը դառնում է ժամանակի մեջ հավաքագրվող բովանդակության և հստակեցվող որոշակիության հիմք: Եվ ակնհայտ է, որ ձևավորվող բովանդակության հեղինակը միայն Ես-ը չէ, այլ վերջինիս հետ հարաբերվող աշխարհը, այդ աշխարհը Ես-ի հետ կիսող և գուգահեռաբար իմաստավորող այլ սուբյեկտներ:

Հասկանալի է, որ այս գործընթացը դյուրին չէ, քանի որ վերջինիս էությունը ընկալելու համար անհրաժեշտ է դուրս գալ ստանդարտ տրամաբանության սահմաններից, ինչը պահանջում է համակցում այլ տիպի մտածողության հետ՝ ենթադրելով մեկ Այլ-ի առկայությունը:

Այս պարագայում կարող է ծագել հետևյալ հարցը. իսկ ո՞ր Ուրիշն է մեզ տալիս ինքնանույնականացման և ինքնաճանաչողության ավելի լայն հնարավորություններ. արդյո՞ք նշանակություն ունի՝ այդ Ուրիշը Յուրային ու Մոտիկն է, թե Օտարն ու Թշնամին:

Նախ նշենք, որ Ես-ի կյանքում Ուրիշի ակտիվ ներգրավվածությունը և Ես-ի տարասեռ բնույթի հաստատումը բնավ չեն ենթադրում ձուլում, այլ հակառակը՝ այն Ուրիշին ընկալելու հնարավորությունն է, որի միջոցով Ես-ը փորձում է գտնել դեպի իրեն տանող ճանապարհը: Հաղորդակցումը՝ որպես մարդու կեցության ֆենոմեններից մեկը, ինքնին հնարավոր է դառնում հենց այն պատճառով, որ մեր ներսում բացառված է միատարրությունը, ինչն էլ մեզ տալիս է Ուրիշին ընկալելու հնարավորություն: Այսինքն՝ ինքնությունը ոչ միայն սուբյեկտիվություն է, այլև առաջին հերթին ինտերսուբյեկտիվություն, որը մշտապես փոխվում է՝ կախված ուրիշների հետ մեր հարաբերությունների բնույթից և այն սոցիալական դերերից ու կերպարներից, որոնք մենք ընտրում ենք, կամ որոնք մեզ պարտադրվում են: Եվ այս պարագայում մեզ տրամադրված դերերի ինքնակամ կամ պարտադրված բնույթից, ինչպես նաև Ուրիշի հետ հարաբերությունների յուրահատկություններից կախված են ինքնության ամբողջականությունն ու ինքնաընկալման համարժեքությունը:

Եթե ինքնությունը դինամիկա է, որը ենթադրում է ոչ միայն իրականություն, այլև հնարավորություն, ենթադրում է ինքնակերտման ընթացքի ուղի, ապա կարևոր է պատասխանել այն հարցին, թե ինչն է խախտվում այս ընթացքում, երբ Ուրիշի հետ հարաբերությունները դառնում են ապակառուցողական, և ինչպես կարող է այդ ապակառուցողականությունը աղավաղել Ես-ի սեփական կերպարը: Իհարկե, պատճառները կարող են լինել բազմաթիվ, որոնցից մեկը իրականության դիցականացման դրսևորումների ակտիվացումն է, ինչի հետևանքով էլ մենք բախվում ենք թե՛ ինքնաընկալման, թե՛ Ուրիշի ընկալման անհամարժեքությանը: Մյուս հարցն էլ այն է, թե որքանով են ճգնաժամային իրավիճակներում մեզ վերագրված կամ, ավելի ճիշտ, պարտադրված դերերը (որոնցից մենք ի վիճակի չենք հրաժարվել և ստիպված ենք կրել)

հեռացնում մեզ մեր էությունից: Վերաձևակերպելով ասվածը՝ կարող ենք հարցնել, թե մարդկային էության որ կողմերն են դրսևորվում սահմանային իրավիճակներում, և կարող ենք արդյոք նման իրավիճակներ, ինչպիսիք են, օրինակ, պատերազմը կամ բռնության այլ դրսևորումները, դիտարկել ոչ միայն որպես ոչնչացում, այլև որպես ինքնաոչնչացում:

Քանի որ Ես-ի վերաբերմունքը իր նկատմամբ հաստատվում է աշխարհի, Ուրիշի միջոցով, ապա հաճախ մեկնաբանվում է, որ երբ մարդը ապրում է ինքնության ճգնաժամ, Ուրիշի հետ փոխհարաբերությունը կարող է օգնել այդ ճգնաժամի հաղթահարմանը: Արդյո՞ք սա չի նշանակում, որ Ուրիշի հետ հարաբերությունների ճգնաժամն էլ իր հերթին կարող է հանգեցնել ինքնության ճգնաժամի: Այս իրավիճակը ավելի լավ հասկանալու համար կարևոր է անդրադառնալ Ուրիշի հետ փոխազդեցությունների գոյաբանական հիմքերի փիլիսոփայական իմաստավորմանը (Մարտին Բուբեր, Միխայիլ Բախտին, Ժան-Պոլ Սարտր, Կառլ Յասպերս, Էմանուել Լևինաս և ուրիշներ):

Մասնավորապես, Մարտին Բուբերը, լինելով հենց այն փիլիսոփաներից, ով բացառում է եզակի Ես-ի գոյությունը, նշում է, որ Ես-Ուրիշը հարաբերության անխուսափելիությունն ու դրա ներդաշնակեցման անհրաժեշտությունն արդեն իսկ դրված են աշխարհի գոյաբանական երկակիության հիմքում, որն էլ իր հերթին պայմանավորված է մարդու կողմից արտաբերված և դիրքորոշում արտահայտող խոսքերով, քանի որ խոսքը ինքնին եզակի չէ և յուրաքանչյուր խոսք արդեն իսկ բառային գույզ է²: Հետևաբար, չի կարող լինել նաև ինքնին Ես-ը, որի բովանդակային երկակիությունը դրսևորվում է Ես-Դու և Ես-Այն՝ սկզբունքորեն տարբերվող կոնֆիգուրացիաներում: Այս համատեքստում Մ. Բուբերը Ես-Դու հարաբերության գոյաբանական հիմքը տեղավորում է «կյանքը որպես հանդիպում» կարևոր ձևաչափում՝ նկարագրելով այն որպես միակ անմիջականը՝ զուրկը վերացարկումից, երևակայությունից, ցանկությունից: «Կյանքը որպես հանդիպում» բուբերյան ձևաչափը ներկայացվում է ուղղակի որպես մեկ ամբողջության հաստատում, ինչը Ես-ի ամբողջականության գրավականն է: Պետք է նշել, սակայն, որ ինքնության համատեքստում բուբերյան այս ձևաչափի մեկնաբանությունը կարևոր է ոչ միայն վերջինիս ամբողջականության ապահովման տեսանկյունից, այլև որպես *ներկայության* հաստատում, ինչը հնարավորություն է տալիս ըմբռնելու *ներկան* ոչ միայն որպես ժամանակային բնութագիր, այլև որպես գոյաբանական կեցություն, որպես լինելիության հայտարարագրում: Այս համատեքստում եթե մենք արձանագրենք Ես-Ուրիշը հարաբերության խաթարումը և դրադուրս մղումը Ես-Դու առողջ, էքզիստենցիալ տեսանկյունից բարձրագույն մակարդակից, ապա կարող ենք բախվել ինքնության ճգնաժամի համատեքստում առաջ եկող տեմ-

² Տե՛ս Բյբեր Մ., Я и Ты //Квинтэссенция: Филос. альманах, 1991, М., Политиздат, 1992, էջ 294:

պորալության խնդրին, երբ Ես-ը՝ որպես սուբյեկտ (լինի անհատ, ազգ, ժողովուրդ), կորցնում է ժամանակի ճիշտ ընկալումը՝ բաց թողնելով ներկան և որպես առանցքային կողմնորոշիչ վերցնելով անցյալը կամ երբեմն ապագան: Ի դեպ, այս հանգամանքը հաճախ դրսևորվում է մեր ժողովրդի պատմական, սոցիոմշակութային որոնումներում, երբ Ուրիշի հետ խաթարված կապը հաճախ ստիպում է ֆիզիկապես լինել ներկայում, բայց ապրել անցյալով, ինչն էլ երբեմն դառնում է արդիականացման հնարավորությունների չեզոքացման պատճառ և ինքնության ստատիկ ձևաչափի ամրագրում: Նման «մոլորված Ես-ը», ինչպես նկատել է Մ. Բուբերը, թեև շրջապատված է բազմաթիվ բովանդակություններով, բայց Դու-ի հետ հարաբերություններ չունենալու պատճառով ապրում է միայն անցյալում՝ զրկելով ակնթարթը իր ներկայությունից³:

Իսկապես, ակնհայտ է այն փաստը, որ ինքնաձանաչողության և ինքնիրացման ձախողման, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակի առաջացման առումով ներկայի հետ սուբյեկտի կորսված կապը, ներկայի զոհաբերումը հանուն անցյալի ու ապագայի և սիմուլյաստիվ իրականության ակտիվացումը չեն կարող մնալ անհետևանք: Դա պայմանավորված է նրանով, որ ներկայի կորուստն ու անցյալի կամ ապագայի մշտական շեշտադրումներն ավելացնում են երևակայականի կշիռը, ինչը հեշտությամբ նպաստում է ներկայի դիցականացմանը՝ Ես-ին հեռացնելու սեփական էության համարժեք ընկալումից: Եվ հակառակը, որպես անցում անցյալից ապագա՝ ներկան ամփոփում է երևույթների և իրադարձությունների ժամանակային հաջորդականությունն ու դինամիկան, ընդգծում ժամանակների կապը և արտացոլում ոչ միայն մարդու կողմից ժամանակի ընկալումն ու իմաստավորումը, այլև նրա կապը իրական իրադարձությունների հետ: Այս տեսանկյունից միայն «բուբերյան հանդիպումը»՝ որպես իրացված ներկա, կարող է դառնալ ապագայի հնարավորության պայման:

Քանի որ ժամանակը մեր կյանքի հիմնական սահմանադիրներից մեկն է, այդ իսկ պատճառով էլ ինքնության հարցի տեմպորալ համատեքստը չէր կարող անտեսվել նաև այլ փիլիսոփաների կողմից: Այս տեսանկյունից չափազանց հետաքրքրական է Էմանուել Լևինասի մեկնաբանությունը, ըստ որի՝ ներկան Ես-ի անցյալում և ապագայում իմաստային փոփոխություններ կատարելու՝ Ուրիշին տրված հնարավորությունն է⁴: Եվ ընդհանրապես, ժամանակը «ապրելու» և դրա հետ կապված բոլոր փոփոխությունները զգալու կարողությունը պայմանավորված է մեր կյանքի ասպարեզում Ուրիշի հայտնությամբ: Միայն վերջինս կարող է Ես-ի համար փոխել ժամանակը, ինչը, իհարկե, առաջին հերթին պետք է ընկալվի ոչ թե որպես իրադարձությունների, այլ իմաստների (և առաջին հեր-

³ Տե՛ս նույն տեղը, էջ 300:

⁴ Տե՛ս Լևինաս Է., *Время и Другой*. Санкт-Петербург, Высшая религиозно-философская школа, 1998, էջ 80-83:

թին՝ բարոյագիտական իմաստների) տեսանկյունից: Որպեսզի ավելի հասկանալի լինի, թե ինչի մասին է խոսքը, կարող ենք դիտարկել որոշ բարոյագիտական կատեգորիաներ: Օրինակ՝ ներումը՝ որպես բարոյագիտական կատեգորիա, ժամանակի հետ մեկտեղ դառնում է կեցության կառուցվածքային տարր: Ներված լինելու փորձը, ի տարբերություն մոռացության, որը խզում է կապը անցյալի և ներկայի միջև, ազդում է անցյալի վրա՝ հաղորդելով նրան նոր իմաստ: Նույնը կարելի է քննարկել նաև ապագայի վերաբերյալ, երբ, օրինակ, հույսը՝ որպես բարոյագիտական կատեգորիա, ենթադրում է հնարավորի սահմանների հաղթահարման ակնկալիք, ինչը կրկին տրվում է Ես-ին Ուրիշի միջոցով: Այսպիսով, թե՛ Մ. Բուբերի, թե՛ Է. Լևինասի պատկերացմամբ՝ Ուրիշի հետ հարաբերությունը կարող է միավորել անցյալը, ներկան և ապագան, որի ընթացքում Ուրիշի մշտական Այլությունը ապահովում է Ես-ի կյանքում իմաստների ընդարձակում, ինչն էլ հնարավորություն է տալիս ըմբռնելու իրական ժամանակը և սեփական գոյությունը այդ ժամանակի մեջ:

Ես-ի ինքնաձանաչողության և ինքնակառուցարկման հնարավորությունների թեման խորությամբ շարունակվում է նաև մեկ այլ փիլիսոփայի՝ Միխայիլ Բախտինի հայեցակարգում, որտեղ նա կարևորում է Ուրիշի «արտագտնվելիության դիրքը»՝ որպես չափազանց ակտուալ էքզիստենցիալ շերտ, որն էլ իր վրա է վերցնում Ես-ի կյանքի զգացմունքային կշիռը: Այստեղ կրկին խոսքը ժամանակի մասին է, և կրկին Ես-ը ժամանակի մեջ տեղավորելու պարտականությունը հանձնված է Ուրիշին: Բանն այն է, որ Ես-ի կյանքի հուզական կշիռը վերջինիս համար, ըստ էության, գոյություն չունի, քանի որ Ես-ը երբեք չի լինում իր կյանքի այնպիսի կրիտիկական պահերի վկան, ինչպիսին են սեփական ծնունդը կամ մահը: Սա նշանակում է, որ Ես-ի կյանքի ժամանակը էականորեն տարբերվում է Ուրիշի կյանքի ժամանակից, և Ես-ը, չունենալով իր կյանքում ավարտվածություն և ինքնաբավություն, ըստ էության, նույնիսկ հայտնվում է ժամանակից դուրս, մինչդեռ Ուրիշը, որը դառնում է Ես-ի աշխարհի գալու և այս աշխարհից հեռանալու վկան, մնում է ժամանակի մեջ⁵: Քանի որ Ես-ի վերջավոր լինելու փաստը գրանցելու հնարավորությունը տրված է Ուրիշին, ստացվում է, որ Ես-ի գոյության արժեքն էլ է ամրագրվում այդ Ուրիշի կողմից, որովհետև Ես-ը, ինչպես արդեն նշեցինք, էմոցիոնալ տեսանկյունից չի կարող լինել իր կյանքի ամենակարևոր իրադարձությունների մասնակիցը: Այդ իրադարձությունները՝ Ես-ի ծնունդն ու մահը, չեն կատարվում վերջինիս համար. էքզիստենցիալ առումով այդ պահերին գրանցող հանդիպման բերկրանքը, բաժանման հուսահատությունը կամ էլ կորստի տառապանքը հնարավոր են միայն Ուրիշի ներկայությամբ: Ստացվում է, որ Ես-ի կյանքի էմոցիոնալ ծանրաբեռնվածությունը բաշխվում է Ուրիշի մեջ, ինչը, մի

⁵ Տե՛ս **Бахтин М.**, Автор и герой в эстетической деятельности. Проблема отношения автора к герою // Вопросы литературы, #12, 1978, էջ 269-310:

կողմից, դուրս է հանում Ես-ին ժամանակից, բայց, մյուս կողմից, նույն Ուրիշի շնորհիվ տեղավորում է նրան կյանքի իմաստային շարքում:

Պետք է նշել, որ սեփական կյանքի իրադարձությունների վկան լինելու անհնարինությունը ոչ միայն արտաքին, այլև արժեքային տեսանկյունից ներքին երևույթ է: Սեփական մահվան վախն ու կյանքի պահպանման ձգտումը սկզբունքորեն այլ բնույթի են, քան ուրիշին ուղղված այդ զգացողությունները: Առաջինի դեպքում բացակայում է երկրորդ իրավիճակի համար չափազանց էական մի դրվագ՝ եզակի անհատի կորուստը, ինչը անխուսափելիորեն հանգեցնում է սեփական կյանքի աղքատացմանը. կյանք, որտեղ Նա՝ այդ միակ ու անկրկնելի Ուրիշը, կար և հիմա՝ չկա: Միաժամանակ, բացի կորստի այս հիմնական փաստից, չափազանց տարբեր են նաև սեփական մահվան և Ուրիշի մահվան վախի բարոյական գործակիցները: Սեփական մահը չի կարող դիտարկվել որպես բաժանում որոշակի և սիրելի մարդուց, քանի որ ի սկզբանե գուտ Ես-ի կյանքը չունի ինքնին սիրելի և ուրախալի լինելիության էմոցիոնալ ծանրաբեռնվածություն: Ես-ի կողմից չի կարող նաև վերապրվել այն աշխարհի արժեքային պատկերը, որտեղ նա եղել է և այլևս չկա: Մարդը, իհարկե, կարող է պատկերացնել իրենից հետո եկող աշխարհը, բայց չի կարող վերապրել այն՝ զգացմունքայնորեն նկարագրված իր մահվան փաստով: Դրա համար նա պետք է հայտնվի Ուրիշի տեղում, Ուրիշի փոխարեն, որի համար այդ մահն ու բացակայությունը կդառնան իր կյանքի իրադարձությունը: Այս իրավիճակը ակամա հիշեցնում է Ալբեր Բամյուի «Անկումը» ստեղծագործությունը, երբ գլխավոր հերոսը խոսում է սեփական մահը պատկերացնելու անհնարինության մասին և շեշտում, որ նման փորձերի ժամանակ մենք կարող ենք ընդամենը երևակայել թաղման արարողություն, որի ընթացքում մարդը հայտնվում է «բեմի» կենտրոնում միայն խղճահարություն, սեր կամ այլ զգացմունք արտահայտող հայացքների ներքո և շնորհիվ⁶: Փորձելով էմոցիոնալ և արժեքային ընկալել սեփական մահվան իրադարձությունը՝ Ես-ը ըստ էության դառնում է հնարավոր Ուրիշի հոգով համակված, ինչը իր հերթին դուրս է բերում իրեն միայնության ձևաչափից ու հնարավորություն է տալիս գննելու պատմության հայելիում իր կյանքի ամբողջականությունը այնպես, ինչպես դա երևում է դրսից:

Ես-ի ինքնաընկալման նկարագրված սահմանափակումներն ըստ էության պայմանավորված են օբյեկտ-սուբյեկտ հարաբերության յուրահատկություններով, ինչը կարող է տեղավորվել «կյանքը որպես սյուժե» համատեքստում, որտեղ մասնակիցներն են հեղինակը (Ես-ը) ու հերոսը (Ուրիշը): Եվ որպես հեղինակ՝ առաջինն իր կյանքով ու ակտիվությամբ ունակ է ամբողջացնել երկրորդին, սակայն չի կարող ամբողջացնել ինքն իրեն: Մ. Բախտինը սա բացատրում է Ես-ի սուբյեկտայնությամբ՝ մեկնաբանելով, որ բարոյագիտական տե-

⁶ Տե՛ս **Camus A.**, *The Fall*. New York, VINTAGE BOOK, 1956, էջ 75-76:

սանկյունից գործող սուբյեկտը միայն Ես-ն է, իսկ մնացածը՝ ընկալման, ճանաչողության կամ արարքի օբյեկտներ: Եվ քանի որ միայն Ես-ն է, որպես սուբյեկտ, օժտված ակտիվությամբ, նա չի կարող դառնալ օբյեկտ ինքն իր համար, չի կարող ամբողջությամբ գիտակցել, ինքն իրեն ճանաչել ու ինքն իրեն ամբողջովին ավարտել: Ես-ը երբեք ինքն իր հետ չի կարող համընկնել, քանի որ որպես ակտոր, որպես գործող սուբյեկտ նա միշտ դուրս է գալիս այդ գործողության բովանդակության սահմաններից⁷: Եվ սա լրացուցիչ անգամ փաստում է, որ Ես-ի ինքնաճանաչողության ամբողջականությունն ու ավարտվածությունը կարող են ապահովվել միայն Ուրիշի միջոցով:

Ես-Ուրիշը հարաբերությունների այս շարքում նկատելի է բարոյագիտական շերտի կարևորությունը, քանի որ, ինչպես պնդում են գրեթե բոլոր հեղինակները, ցանկացած հարաբերություն գնահատական է, որը ենթադրում է կեցության մեջ որոշակի անհատական դիրք: Ոչ ոք չի կարող չեզոք դիրքավորվել Ես-ի կամ Ուրիշի նկատմամբ, ոչ ոք չի կարող հայտնվել մյուսի տեղում, ինչն էլ նշանակում է, որ Ես-Ուրիշը հարաբերությունը անշրջելի է: Գրեթե բոլոր հիշատակված փիլիսոփաները, մեկնաբանելով հարաբերությունը որպես գնահատական և շեշտելով բարոյական կողմը, պնդում են, որ Ուրիշը ապահովում է Ես-ի կեցության *արժեքաբանական ավարտվածությունը*: Արդեն նշվել է, որ Ես-Ուրիշը հարաբերության համար Մ. Բախտինը դուրս է բերում մեկ ընդհանուր բանաձև, որն ամփոփված է *արտագտնվելիության* փաստի մեջ: Վերջինս նաև նշանակում է, որ այս աշխարհում Ես-ի և Ուրիշը-ի դիրքը տարբեր է, հետևաբար, նրանք նաև տարբեր տեսանկյուններից են մեկնաբանում այս աշխարհը: Բայց իրավիճակը սկզբունքորեն փոխվում է միմյանց ուղղված հայացքի շնորհիվ, երբ տարբեր աշխարհներ սկսում են արտացոլվել մեր՝ որպես Ես-ի և Ուրիշի աչքերում: Միայն նման հարաբերություններում հնարավոր «տեսանելիության ավելցուկն» է ապահովում մեր ամբողջականությունն ու ավարտվածությունը:

Նկատելի է, որ, անկախ օբյեկտ-սուբյեկտ բաշխվածությունից, այս հարաբերությունները բնութագրվում են մասնակցությամբ, ակտիվությամբ և ցանկությամբ՝ ստեղծելու համատեղ կեցություն, ինչը ավարտվածության պայմաններից է արդեն գործողության մակարդակում. համատեղ կեցության կառուցարկման պայմաններում Ես-ը Ուրիշի նկատմամբ կատարում է գործողություններ, որոնք Ուրիշը իր նկատմամբ կատարել չի կարող, և հակառակը: Ավարտվածության այս կտրվածքի բարոյագիտական կշիռն ավելին է, քանի որ այն ենթադրում է այնպիսի բարոյական ակտ, ինչպիսին է *արարքը*, որը հնարավորություն է տալիս երկու կողմերին ստանալու իրենց գոյության հավաստագիրը: Հարաբերությունների այս փոխպայմանավորվածությունը ընդգծում է այն թեզը, որ յուրաքանչյուր հարաբերություն փոխադարձություն

⁷ См. у Бахтин М., Автор и герой в эстетической деятельности, էջ 269-310:

է, որը կատեգորիալ տեսանկյունից կարելի է ամփոփել «բարոյական պատասխանատվություն» հասկացությամբ:

Ես-ի և Ուրիշի փոխապայմանավորվածության, փոխազդեցության մասին կարելի է խոսել բազմաթիվ դիտանկյուններից և անվերջ: Բայց խնդիրն այն է, որ մարդու հակասական էությունը, միավորելով ռացիոնալն ու իռացիոնալը, եսասիրությունն ու այլասիրությունը, հավերժությունն ու ակնթարթը, թույլ չի տալիս իրեն ազատագրվել կոնֆլիկտայնությունից և չմտնել հակամարտության մեջ գոնե այն ամենի հետ, որը վերջինիս, այն է՝ մարդու կեցությային առանցքներից է: Բայց մարդը բխվում է և՛ բնության հետ, որն իր գոյության առաջին պայմանն է, և՛ այլ մարդու հետ, որն իր սոցիալականության գրավականն է: Ու քանի որ արդեն խոսվեց Ես-ի ինքնաճանաչողության և ինքնարնկալման գործում Ուրիշի մասնակցության անվիճելի կարևորության մասին, արդեն իսկ հասկանալի է, որ այդ հարաբերությունների աղավաղումը չի կարող չհանգեցնել Ես-ի ինքնակառուցարկման թերություններին և ինքնաճանաչողության խաթարմանը, ինչը հաճախ տեղավորում են «ինքնության ճգնաժամ» ձևակերպման տակ:

Մովորաբար ինքնության ճգնաժամը մեկնաբանվում է որպես անորոշության զգացում, որն արդիականացնում է «ով եմ ես» հարցը: Սակայն կասկածելի է, արդյո՞ք ինքնաորոնման դրսևորումները կարելի է ընկալել որպես ճգնաժամային, եթե մարդը մշտապես իմաստներ փնտրող էակ է: Միգուցե ինքնության ճգնաժամը ոչ այնքան նման հարցադրման առկայությունն է, որքան սեփական Ես-ի ոչ համարժեք, աղավաղված ընկալումը, ինչը կարող է լինել չսպառված իմաստների արդյունք: Ես-Ուրիշը հարաբերությունների վերլուծությունը վկայում է, որ այդ հարաբերություններում մարդկային Ես-ի ինքնաբացահայտումը առաջին հերթին բարոյական էակի բնութագրիչ է: Եթե մի շարք ապակառուցողական դրսևորումների արդյունքում Ես-ի և Ուրիշի միջև փլուզվում է բարոյական կամուրջը, ապա սա առաջին հերթին նշանակում է հեռացում սեփական էությունից և լիարժեք Ես-ի՝ ինքնիրացման հնարավորությունից: Ինքնության ամբողջականությունը առաջին հերթին որոշվում է ցանկացած Ես-ի՝ որպես բարոյական սուբյեկտի ընկալմամբ, քանի որ ինքնությունը, լինելով մարդկային փնտրտուք մարդու մեջ, առաջին պլան է մղում բարոյական պատասխանատվության և բարոյական պարտականության խնդիրը: Դրանց չեղարկման արդյունքում Ես-ն ու Ուրիշ-ը դուրս են մնում բարոյական ժամանակից, այսինքն՝ այն սկզբունքների համակարգից, որոնք ենթադրում են բարոյական պարտականությունների, պատասխանատվության, ինչպես նաև հետևանքների ժամանակային ասպեկտը, որը պահանջում է մարդու գործողությունների գնահատականը բարոյական սկզբունքներին համապատասխան: Ըստ էության, բարոյական ժամանակի կորուստը կարող է մեկնաբանվել «ծխնուց ընկած ժամանակ»-ի տրամաբանությամբ. հասկացություն, որն ակտիվ շրջանառվել է Ժ. Դերիդայի կողմից և ստացել այնպիսի բնութագրիչներ,

ինչպիսիք են վախի, անհանգստության, տագնապի, ինքնավստահության կորուստը, որի հիմնական պատճառը բռնությունն է⁸:

Իսկ ո՞րն է Ես-ի և Ուրիշի նման հակամարտության հաղթահարումը. առաջին հերթին Ուրիշի *այլության իրավունքի* ընդունումը ու վերջինիս առջև բարոյական պատասխանատվության ստանձնումը: Այլ ձևաչափ հանգեցնում է Ուրիշի ազատության սահմանափակմանը, ինչն էլ ինքնիրացման և ինքնության ճգնաժամի լուրջ պատճառ է, քանի որ ինքնությունը, ենթադրելով դինամիկա և հանդիպելով պատնեշների, կորցնում է Ես-Ուրիշը ներդաշնակ հարաբերությունները որպես կառուցարկման աղբյուր, այդ հարաբերություններում առաջանում են անհամաչափություն, աններդաշնակություն, ինչը ենթադրում է, որ կողմերը սկսում են կասկածի տակ դնել միմյանց բարոյական լեզվափոխությունն ու հայտնվում բարոյական տարբեր ժամանակներում:

Ըստ էության, այն անհրաժեշտը, որի մասին մենք խոսում ենք Ուրիշի հետ հարաբերությունների համատեքստում, *ընդունումն ու ազատությունն* են: Ուրիշի կողմից այս երկու պայմանների ապահովումն է, որը պետք է Ես-ին, համարժեք ինքնամեկնության համար: Հիշենք, որ հենց այս երկու չափանիշներն է Ֆրենսիս Ֆուկույաման դիտարկում որպես ինքնության հիմնական ասպեկտներ: Մասնավորապես, նա նշում է, որ ազատության ձգտումը ոչ միայն ինքնաճանաչողության կարևոր պայմանն է, այլ ընդհանրապես պատմության շարժիչ ուժը: Ազատությունն ու ինքնությունը անխզելի են, տարանջատելի չեն, քանի որ ցանկացած Ես՝ որպես սոցիալական միավոր, ոչ միայն ձգտում է ազատ ընտրության, այլև առաջին հերթին սեփական յուրահատկության ազատ դրսևորմանը⁹: Միաժամանակ Ուրիշի որպես լեզվափոխ բարոյական ազդեցիկ ընդունումը սոցիալական արդարության կարևոր պայման է, որն էլ ապահովում է հարաբերությունների ներդաշնակությունը և բռնության ու հակամարտության հաղթահարումը: Հետևաբար, ինքնության ճգնաժամի հաղթահարումը առաջին հերթին Ուրիշի հաստատման և սեփական պատասխանատվության ընդունման բարոյագիտական խնդիր է, և Ուրիշի հետ երկխոսությունն է, մոտեցնելով հատվող կետերին, հնարավորություն տալիս գտնելու քեզ այս աշխարհում:

КАРИНЕ ЯРАЛЯН – Несостоявшийся диалог «Я-Другой» как причина кризиса идентичности. – Человек постоянно находится в поисках Другого и в состоянии обнаружения последнего в себе, что является для нас как Я / Мы возможностью расширения горизонтов самопознания. Онтологическое единство Я и Другого означает, что второй является важным участником формирования идентичности первого. Данное единство проявляется в содержательной двойственности Я. Кроме того, декларирование бытийности последнего осуществляется Другим во «временном формате», так как только Другой способен поместить Я в настоящем, а также определить «время жизни» последнего,

⁸ St' u **Derrida J.**, Given Time: I. Counterfeit Money. The University of Chicago Press, 1992, էջ 3-33:

⁹ St' u **Фукуяма Ф.** Идентичность. Стремление к признанию и политика неприятия. М., Альпина Паблшер, 2019:

взяв на себя эмоциональную нагрузку таких осевых событий, как рождение и смерть. Так как регистрация факта конечности Я дана Другому, получается, что и ценность его существования также фиксируется последним, что подчеркивает необходимость двусторонней нравственной легитимости. Соответственно, нарушение коммуникации с Другим, в результате чего между сторонами диалога рушится этический мост, может стать причиной кризиса идентичности. Преодоление подобного кризиса в первую очередь является нравственной проблемой принятия Другого и собственной ответственности перед ним. Диалог с Другим приближает к линии соприкосновения, обеспечивая адекватность самовосприятия и целостность собственного Я.

Ключевые слова: Я, Другой, кризис идентичности, диалог, онтологическое единство, этический мост, ответственность, свобода


KARINE YARALYAN – *The Disruption of Self–Other Dialogue as a Cause of Identity Crisis.* – The human being exists in a constant state of searching for the Other and discovering the latter within oneself—a process that enables us, as an "I" or a "We," to expand the horizons of our self-knowledge. The ontological unity of the Self (the "I") and the Other implies that the latter is a crucial participant in the construction of the Self's identity. This unity manifests itself in the substantive duality of the Self. Furthermore, the declaration of the latter's existence is carried out by the Other in a "temporal format," since only the Other is capable of situating the Self in the present and defining its "lifespan," shouldering the emotional weight of such pivotal events as birth and death. Since the registration of the Self's finitude is given to the Other, it follows that the value of its existence is also recorded by the Other, which underscores the necessity of two-sided moral legitimacy. Accordingly, the failure of communication with the Other—resulting in the collapse of the moral bridge that exists between the participants in dialogue—can become a source of identity crisis. Overcoming such a crisis is, first and foremost, a moral–philosophical task that involves the acceptance of the Other and the acknowledgment of one's responsibility before the Other. Dialogue with the Other reveals points of intersection, thereby ensuring the adequacy of the parties' self-perception and the integrity of the Self.

Key words: *the Self, the Other, Crisis of identity, Dialogue, Ontological Unity, Moral Bridge Responsibility, Freedom*

Օգնագրերի ցանկ / References

- Бахтин М., Автор и герой в эстетической деятельности. Проблема отношения автора к герою // Вопросы литературы, #12, 1978 [Bakhtin M., *Avtor i geroy v esteticheskoy deyatel'nosti. Problema otnosheniy avtora k geroyu // Vorposy literatury, №12, 1978, ss.269-310*].
- Бубер М., Я и Ты //Квинтэссенция: Филос. альманах, 1991., М., Политиздат, 1992 [Buber M., *Ya i Ty //Kvintessentsiya: Filos. al'manakh, 1991., M., Politizdat, 1992, s.294*].
- Левинас Э., Время и Другой. Санкт-Петербург, Высшая религиозно-философская школа, 1998 [Levinas E., *Vremya i Drugoy. Sankt-Peterburg, Vysshaya religiozno-filosofskaya shkola, 1998, ss.80-83*].
- Локк Дж., Опыт о человеческом разумении // Сочинения в трех томах: Т. 1. М.: Изд-во «Мысль», 1985 [Lokk Dzh., *Opyt o chelovecheskom razume // Sochineniya v trekh tomakh: T. 1. M.: Izd-vo «Mysl'», 1985, s.70*].
- Фукуяма Ф. Идентичность. Стремление к признанию и политика неприятия. М., Альпина Паблишер, 2019 [Fukuyama F. *Identichnost'. Stremleniye k priznaniyu i politika nepriyatiya. M., Alpina Publisher, 2019*].
- Camus A., *The Fall*. New York, VINTAGE BOOK, 1956.
- Derrida J., *Given Time: I. Counterfeit Money*. The University of Chicago Press, 1992

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ Շ. ՊԵՐՊԵՐՅԱՆԻ ԱՐԺԵՔԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՈՒՄ

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏԻԱՆ 
Երևանի պետական համալսարան

Շահան Պերպերյանը (1861-1956) 20-րդ դարի առաջին կեսի արևմտահայ այն մտավորականներից է, ով մեծագույն ջանքեր է գործադրել և անուրանալի աշխատանք կատարել Սփյուռքում և հայկական հոգևոր կենտրոններում ազգային ինքնության, հայ մտքի պահպանման, հայեցի կրթության ապահովման ու զարգացման համար: Գիտակցական ողջ կյանքը Պերպերյանը նվիրաբերել է գիտամանկավարժական գործունեությանը՝ իր ուրույն տեղը զբաղեցնելով հայ փիլիսոփայական մտքի, գեղագիտության, երաժշտագիտության, պարագիտության, մանկավարժության ոլորտներում: Հոդվածում ներկայացված և ամփոփված են Շ. Պերպերյանի գեղագիտական հայացքները՝ արժեքաբանության համատեքստում: Առանձնացնելով արհեստի և արվեստի գործերը՝ քննարկվում են մարդու ստեղծագործական էության, արվեստին, արվեստագիտական գործունեության երեք հիմնական փուլերին, ձևերին, դրդապատճառներին առնչվող հարցեր: Վերլուծվել են Պերպերյանի արժեքաբանական և գեղագիտական ընկալումները, որտեղ փորձ է արվում բացահայտել մարդու և արժեքների փոխհարաբերությունը, արվեստի գործի գնահատման գործընթացը, չափանիշները: Անդրադարձ է կատարվում Պերպերյանի արվեստի փիլիսոփայությանը, արվեստի տեսակներին, որտեղ հիմք ընդունելով արվեստագիտական արժեքի տարրողունակությունը՝ Պերպերյանն առանձնացնում է ավագ և կրտսեր արվեստներ: Ավագ արվեստները վեցն են. Ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն, պար, բանահյուսություն, երաժշտություն, իսկ մնացած բոլոր արվեստները՝ կահագործություն, ոսկերչություն, դերձակություն և այլն, համարվում են կրտսեր արվեստներ: Ներկայացվել է նաև Շ. Պերպերյանի հայացքները արվեստի սեռերի, առաջացման ազդակների ու արվեստագիտական ողջ գործընթացի մասին:

Բանալի բառեր – *արժեք, արժեքային իմացում, արվեստ, արվեստի գործ, արվեստագիտական գործընթաց*

Վարդան Կարապետյան – ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի հայցորդ

Вардан Карпетян – соискатель кафедры истории и теории философии и логики ЕГУ

Vardan Karapetyan – Applicant at the Chair of History, Theory and Logic of Philosophy, YSU

Էլ. փոստ՝ Vardan1983karapetian@gmail.com ORCID ID: <https://orcid.org/0009-0003-4799-5869>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 10.12.2025

Գրախոսվել է՝ 17.01.2026

Հաստատվել է՝ 02.04.2026

© The Author(s) 2026

Սկսած անտիկ դարաշրջանի փիլիսոփաներից և փիլիսոփայական դպրոցներից մինչև մեր օրերը՝ արժեքները եղել են մտածողների ուշադրության կենտրոնում, քանի որ դրանք բանական մարդու գործողությունների և նպատակն են, և դրդապատճառը, և իմաստը: Արժեքների խնդրին անդրադարձել է նաև 19-20-րդ դարերի հայ փիլիսոփա Շ. Պերպերյանը՝ դրա իմաստասիրությունը դիտարկելով որպես մարդու կողմից իր իսկ գործունեության և շատ անգամ բնության մեջ տեղ գտած արժեքների վերլուծություն: Մենք ապրում ենք տիեզերքում, որը մեզ համար չեզոք, անտարբեր տիեզերք չէ, ընդհակառակը՝ այն ունի ձգողականություն¹: Այսինքն՝ մեզ շրջապատող էակներն ու իրերը իրենց հատկություններով, մեզ համար պարզապես գոյ չեն, դրանք մեզ ձգում, հրապուրում են, քանի որ արժեք են մեզ համար: Աշխարհաճանաչման գործընթացում մենք ոչ միայն հաստատում ենք ինչ-որ բանի գույտ գոյությունը, այլև այն գնահատում ենք արժեքի տեսանկյունից:

Ուրեմն կան արժեքներ, որոնք մեզ գրավում են, որովհետև մյուս կողմից մեր մեջ այդ արժեքների իմացությունը, դրանք տեսնելու և իմանալու կարողությունը կան, մենք այդ արժեքները տեսնելու հոգեկան կարողությունն ունենք: Եթե չունենք այդ իմացումը, եթե կույր ենք արժեքների հանդեպ, ուրեմն մեզ համար այդ արժեքները գոյություն չունեն, այնպես, ինչպես կույրի համար գույնը գոյություն չունի, և ի ծնե կույրը չի կարող երևակայել, հասկանալ գույները, որքան էլ բացատրենք նրան: Գեղեցկության իմացումը չունեցողը կարող է տեսնել գույնը, բայց չի տեսնի գեղեցկությունը, և եթե անգամ նրան բացատրենք, միևնույնն է, նա, լավագույն դեպքում կարող է իմացականորեն ըմբռնել այն, բայց չի կարող այն զգալ ու ապրել:

Ամեն արժեք ունի իր իրագործման համար նախատեսված գործունեության ձև և այդ գործունեությունը կատարող ենթակա: Օրինակ՝ քանի որ գոյություն ունի գեղագիտական արժեք, այն իրագործելու համար մարդը ծավալում է արվեստագիտական գործունեություն, այսինքն՝ կատարողն արվեստագետն է և այլն: Գոյություն ունի ճշմարտության արժեք. մարդը ոչ միայն հիանում, ապրում է գեղեցիկ աշխարհով, այլև փորձում է ճանաչել, գիտենալ այդ իրականությունը, բացահայտել պատճառահետևանքային կապերը և այսպես շարունակ: Յուրաքանչյուր արժեք իր հայեցումը ունի, մեր իմացումին, կարողություններին համապատասխան իմաստավորվելու հանգամանքը: Օրինակ՝ տնտեսականների գոհացումը տնտեսական արժեքների վայելքն է, գեղագիտականների բավարարումը՝ գեղեցկության դիտումը, և այլն:

Պերպերյանն արվեստը սահմանում է որպես կարողությունների, գիտելիքների և դրանցով կատարված գործողությունների համալիր ամբողջություն: Արվեստագետը, ըստ նրա, այն անձն է, ով ունի անհրաժեշտ գիտելիքներ, վարպետություն, և որի գործունեությունը արտացոլվում է ստեղծած բազմա-

¹ Տե՛ս **Պերպերյան Շ.**, Արժեքաբանություն կամ արժեքներու իմաստասիրություն, Անթիլիաս, 1976, էջ 9:

զան գործերում, որոնք գնահատվում են գեղեցիկ և կատարյալ: Մակայն պերպերյանական վերլուծության տեսանկյունից արվեստի հետ առնչությունը միայն չի վերաբերում «մասնագետ» արվեստագետին. բոլոր մարդիկ առնչություն ունեն արվեստի հետ ստեղծագործելու և ստեղծվածը գնահատելու գործընթացում: «Արվեստը մեզ տալիս է իրականության ավելի հարուստ, ավելի կենդանի ու գունագեղ պատկեր և նրա ձևական կառուցվածքի մեջ ավելի խոր ներթափանցելու կարողություն»²: Պերպերյանն առանձնացնում է «արվեստ» և «արվեստի գործ» հասկացությունները՝ նշելով, որ դրանք հաճախ նույնականացվում են, երբ արվեստ ասելով հասկանում ենք ոչ միայն հատուկ կարողություններով, գիտելիքներով և վարպետությամբ կատարված գործողությունը, այլև դրա արդյունքը: Ըստ նրա՝ ավելի հստակ և մեթոդաբանական կիրառության համար անհրաժեշտ է «արվեստ» եզրույթը գործածել գործողության իմաստով, իսկ արդյունքի համար կիրառել «արվեստի գործ» հասկացությունը՝ գաղափարներն առավել հստակ ու տարբերակված ընդգծելու համար:

Մարդու ստեղծագործական գործունեությունը դրսևորվում է ոչ միայն արվեստում, այլև արհեստում: Այս տեսանկյունից հարկավոր է հասկանալ, թե ինչ տարբերություն կա արվեստի և արհեստի միջև: Արհեստի պարագայում նպատակը արհեստի բուն գործունեությունից դուրս ցանկալի արդյունքին հասնելն է: Արհեստի արդյունքն արժեքավոր է անմիջական «նյութական» օգտակարության տեսանկյունից: Այնինչ արվեստում ստացված նյութական ձևը տրված է վայելելու համար, հոգեպես վեհացնելու համար: Արվեստն ինքն իր մեջ վախճան ունի, «տրված ձևը ոչ թե արտավախճան կամ այլավախճան է, այլ ինքնավախճան, ներավախճան»³:

Այդ արվեստագիտական գործընթացը ունի փուլեր, որոնք, ըստ Պերպերյանի, երեքն են.

1. առաջին փուլը ստեղծումն է, որտեղ մարդն է *ստեղծագործող արվեստագետը*,

2. երկրորդ փուլը արվեստի գործի ներկայացումը, գործադրությունը կամ վերլուծումն է: Կան արվեստի տեսակներ, որոնց համար ստեղծված լինելը բավարար չէ, հարկավոր է միջտ ժամանակի մեջ առաջ բերել դրանք: Այդպիսի արվեստներ են, օրինակ, երաժշտությունը, պարը, թատերգությունը: Ի հակադրումն սրանց՝ ճարտարապետությունը կամ քանդակագործությունը մնալուն են ժամանակի մեջ: Ուրեմն արվեստագիտական հայեցման համար այս երկրորդ փուլն անհրաժեշտ է ստեղծման վերջում, բայց ոչ բոլոր արվեստների համար, որոնցում մարդը *գործադրող արվեստագետն* է, ինչպես նվագողը, երգիչը, դերասանը, և այլն,

² Կասսիրեր Է., Էսսե մարդու մասին, Եր., Փրինթինգտոն, 2008, էջ 261:

³ Պերպերեան Շ., նշվ. աշխ., էջ 33:

3. Երրորդ փուլը ներկայացված արվեստի դիտումը, ունկնդրումն է: Արվեստի գործի ստեղծումն ու գործադրումը ենթադրում են այս երրորդ փուլը, որտեղ *մարդը ճաշակողն է*⁴:

Արվեստի ստեղծման համատեքստում խիստ կարևոր է ստեղծող արվեստագետի կերպարը: Պերպերյանի կարծիքով՝ արվեստագետը պիտի ունենա հոգեկան բոլոր անհրաժեշտ կարողությունները, այն էլ՝ սովորականից բարձր աստիճանի վրա: Նա պետք է լինի տեսնող, դիտող, ըմբռնող, խելացի և մտածող: Եվ քանի որ արվեստը զգայականի ոլորտում է, արվեստագետը պետք է ունենա զգայական սրություն: Օրինակ՝ նկարիչը պետք է զգայուն լինի նուրբ երանգների հանդեպ, գույները պետք է խոսեն իր հետ, երաժիշտը զգայուն պիտի լինի ձայների հանդեպ, հնչյունները հատուկ հուզականությամբ պիտի ընկալի: Եվ վերջապես, բացի իմացական և զգայական սրությունից, արվեստագետը պետք է ունենա նաև որոշակի հմտություններ ու կարողություններ: Արվեստագետի կերպարին նմանատիպ նկարագիր է տալիս փիլիսոփա Ռ. Ջ. Քոլլինգվուդը՝ ասելով, որ արվեստագետի կարողություններն ավելին են, քան մնացածներինը, քանի որ նա կարող է զատել այն ամենը, ինչ արվեստ է, այն բաներից, որ կեղծ արվեստ են, և կարող է ասել, թե ինչ են այդ մյուս բաները⁵: Շարունակելով արվեստագետի կերպարի վերլուծությունը՝ Պերպերյանն անդրադարձ է կատարում «հանճար» հասկացությանը՝ նշելով, որ արվեստի գլուխգործոցները ստեղծվում են հանճարների կողմից: Հանճարը հանկարծակի ստեղծագործական ներշնչումներ ունենալու, հիացում ու զարմանք առաջացնող գյուտեր անելու բնատուր բացառիկ կարողություն է: Ներշնչումը ստեղծագործական գործունեության նախաազդակն է, որին հաճախ *Մուսա* են անվանում: Պլատոնը գրում է. «Մուսան ներշնչում է որոշ մարդկանց, և այդ ներշնչվածներից ձգվում է մյուս ներշնչվածների շղթան: Բոլոր լավ էպիկական պոետները ստեղծում են իրենց գեղեցիկ պոեմները ներշնչանքի և մոլեգնության մեջ»⁶: Հանճարի հասկացությունը բովանդակային իմաստով մոտ է տաղանդին: Տաղանդը ևս բնատուր է, սակայն տարբերվում է այն բանով, որ ենթադրում է որոշ հարցերում ուրիշներից ավելի շնորհք, կարողություն ունենալ: Մարդը կարող է հանճար լինել՝ առանց տաղանդ ունենալու, և հակառակը⁷:

Արվեստագիտական արժեքի էությունը պարզելու համար նախ պետք է հասկանանք մեր խնդրո առարկա հեղինակի արվեստի տեսակների դասակարգումը: Հիմք ընդունելով արվեստագիտական արժեքի տարրորունակությունը՝ Պերպերյանն առանձնացնում է առաջնակարգ կամ ավագ արվեստներ

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 30-31:

⁵ Տե՛ս **Քոլլինգվուդ Ռ. Ջ.**, Արվեստի հիմունքները, Եր., Փրինթինգտոն, 2007, էջ 9:

⁶ **Պլատոն**, Իոն, Երկեր չորս հատորով, հատոր III, Եր., Փրինթինգտոն, 2011, էջ 197:

⁷ Տե՛ս **Պերպերեան Շ.**, Գեղագիտություն և գեղարուեստ, Պէյրուս, 1975, էջ 83, 88-89:

(Ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն, պար, բանահյուսություն, երաժշտություն) և կրտսեր արվեստներ (կահագործություն, ոսկերչություն, դերձակություն և այլն)⁸:

Կենտրոնանալով Ավագ վեց արվեստների վրա՝ հեղինակը փորձում բացահայտել, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ ճյուղեր, սեռեր ունի, այլ խոսքով փորձում է դասակարգել դրանք: Ըստ դասակարգումներից մեկի՝ արվեստներ, որոնց մասերը միաժամանակ տրված են կամ տարածական են (ճարտարապետություն, քանդակագործություն և նկարչություն), և արվեստներ, որոնց մասերը հաջորդաբար են գոյանում, և որոնց ձևը տևողության մեջ է առաջ գալիս, այսինքն՝ տևողության արվեստներ (բանահյուսություն, պար և երաժշտություն):

Պերպերյանն այս դասակարգումը համարում է ոչ այնքան տրամաբանական՝ նշելով, որ այս երկու խմբերի միջև սահմանը հստակ չէ, երկուսում էլ կան թե՛ տևողության, թե՛ տարածական հանգամանքներ: Օրինակ՝ պարարվեստը՝ հատկապես խմբակային պարը, ամեն վայրկյան տարածության արվեստի գործի տեսարան է ներկայացնում՝ հաջորդական շարժումներով և դիրքերի փոփոխությամբ՝ գեղագիտական նույնքան արժեք ներկայացնող և տպավորիչ, որքան այդ շարժումների հաջորդականությամբ առաջ եկած ձևը:

Պերպերյանն առաջարկում է դասավորել արվեստների սեռերը, քանի որ յուրաքանչյուր արվեստի գործ իր սեռն ունի: Գլխավոր արվեստների սեռերը կազմելու համար հիմք ենք ընդունում դրանց նյութը⁹: Սեռերը դասավորելու համար պիտի որոշենք նյութերի գլխավոր տեսակները, որովհետև նյութի միևնույն տեսակը կարող է դրսևորվել տարբեր արվեստներում: Օրինակ՝ պատմական դեպքը կարող է ներկայացվել թե՛ գրականությամբ, թե՛ նկարչությամբ կամ քանդակագործությամբ: Հեղինակն առաջարկում է նյութերը բաժանել երկու խմբի՝ առաջինում ներառելով նյութերը, որոնք ամենից առաջ ուրիշ արժեք իրագործելու նպատակ ունեն, իսկ արվեստագիտական արժեքն իրագործվում է այդ առաջնային արժեքին զուգահեռ: Այս տեսակն անվանում է *Պաշտոնային (Fonctionnel) սեռեր*, քանի որ արվեստի գործն ուրիշ պաշտոն ունի, նախքան արվեստագիտական արժեքի իրագործումը՝ ստեղծվել է ուրիշ արժեք իրագործելու համար: Օրինակ՝ կրոնական քանդակագործության առաջնային նպատակը ոչ թե գեղեցկության ցուցադրումն է, այլ Աստծու պատկերի դրսևորումը, այսինքն՝ ստեղծված է այլ արդյունքի համար: Երկրորդ խմբում այն նյութերն են, որոնց միակ նպատակը արվեստագիտական արժեքի իրագործումն է: Այս խմբի սեռերը կոչվում են *Ձուտ սեռեր*, քանի որ իրագործում են զուտ արվեստագիտական արժեքը:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 18:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 31:

Դիտարկելով նյութը մեկ այլ տեսանկյունից՝ Պերպերյանը կատարում է ևս մեկ բաժանում՝ սեռերը կրկին բաժանելով երկու խմբի: Առաջինն այն սեռերն են, որոնք միայն և ուղղակի ինչ-որ իրական բան են ներկայացնում: Մրանք կոչվում են *Կայացուցիչ*: Այստեղ պետք է հասկանանք արվեստի այն գործերը, որոնցում գործը ուղղակի իրականությանն ու կյանքին պատկանող ինքնին առարկա է, օրինակ՝ շենք, կուժ, սեղան և այլն: Երկրորդն այն սեռերն են, որոնք թեև դարձյալ առարկա են ներկայացնում, բայց ուրիշ բանի խաբկանք ունեն և կոչվում են *Վերակայացուցիչ*: Այստեղ պետք է հասկանանք արվեստի այն գործերը, որոնք, իրենց եղածից զատ, ուրիշ բան են ներկայացնում: Օրինակ՝ կուժը պարզապես կուժ է՝ օգտակար և պիտանի, իսկ նկարը թեև առարկա է, ինչպես կուժը, բայց կրում է ուրիշ առարկաների խաբկանքը, և արժեքը հենց այդ խաբկանքի մեջ է, այլ ոչ թե այն կրողի:

Համադրելով այս երկու տեսակ բաժանումները՝ հեղինակն ի վերջո առանձնացնում է չորս տեսակ սեռեր. պաշտոնային կայացուցիչ, պաշտոնային վերակայացուցիչ, զուտ վերակայացուցիչ, զուտ կայացուցիչ¹⁰: Առաջինը ներառում է բոլոր Ավագ արվեստները, հաջորդ երեքը՝ բոլորը, բացի ճարտարապետությունից:

Արվեստագիտական գործընթացի և ստեղծագործության ամբողջական ընկալումը պահանջում է բացահայտել այն հիմնական բաղադրիչները, որոնց փոխազդեցության արդյունքում է ձևավորվում արվեստի գործը: Շահան Պերպերյանը առանձնացնում է վեց հիմնարար ազդակ՝ նյութ, գաղափար, նյութեղեն, ճարտարություն, հորինվածք, ոճ¹¹:

Ազդակների այսպիսի տարանջատումը զուտ տեսական բնույթ և վերլուծական նշանակություն ունի, քանի որ արվեստի գործում սրանք հանդես են գալիս միասնաբար, համադրված: Նյութը օգնում է տարբերելու արվեստի մեկ գործը մյուսից: Նյութը կարելի է սահմանել որպես երբեմն օգտակար և երբեմն էլ բուն գեղագիտական արժեքի համար բերված իրականություն: «Հոս նիւթը տեսակ մը հոգեկան խորք է որ անտիպ պատկեր մը կու տայ գործին»¹²: Արվեստագետը նյութն ընկալում է իր յուրահատուկ ձևով՝ ստեղծելով գաղափարը: Տվյալ համատեքստում գաղափարը պետք է հասկանալ փիլիսոփայական լայն իմաստով՝ իբրև զանազան մասերից, տարրերից կազմված ամբողջություն: Գաղափարը գործում է հորինման ողջ ընթացքում և առաջնորդում է այդ ընթացքը՝ նյութը ենթարկելով իրեն: Իրագործման համար ամենից առաջ հարկավոր է նյութեղենը, առանց որի արվեստի գործ լինել չի կարող: Նյութեղենն իր արտահայտման ուժը ստանում է գաղափարի հետ ունեցած փոխկապակցությունից: Արվեստագետը, որն ուզում է իրագործել գաղափարը, պետք է

¹⁰ Տե՛ս **Պերպերեան Շ.**, Արժեքաբանություն կամ արժեքներու իմաստասիրություն, էջ 38:

¹¹ Տե՛ս **Պերպերեան Շ.**, Գեղագիտություն եւ գեղարուեստ, էջ 129:

¹² **Պերպերեան Շ.**, Արժեքաբանություն կամ արժեքներու իմաստասիրություն, էջ 47:

հարմարեցնի նյութեղենն այդ գաղափարին, և քանի որ նյութեղենն իրենից անկախ է, երբեմն գաղափարը պետք է հարմարեցնի դրան: Նյութեղենը գործի արվեստագիտական արժեքում որոշակի դեր է խաղում, որովհետև յուրաքանչյուր նյութեղեն իրեն հատուկ տպավորությունն է գործում նայողի կամ ունկնդրողի վրա, հետևաբար՝ արվեստագետն անտարբեր չէ դրա ընտրության հարցում: Այսպիսով, տեսնում ենք ներքին փոխկապակցվածությունն ու հարաբերությունները նյութի, գաղափարի և նյութեղենի միջև:

Յուրաքանչյուր արվեստ ունի իրեն հատուկ ճարտարությունը կամ տեխնիկան, որը նախ իբրև սպասողական գիտություն և սովորությունների ամբողջություն կրում է արվեստագետը, այնուհետև արվեստագիտական գործունեության ժամանակ դրսևորվում է արվեստի գործում՝ արտահայտելով վարպետությունը, որով կատարված է աշխատանքը: Ըստ Պերպերյանի՝ ճարտարությունը կարող ենք սահմանել որպես գիտելիքների և սովորությունների գումար, որով արվեստագետը տրված նյութեղենին իր նյութի պահանջած ձևն է կարողանում տալ: Ռ. Ջ. Քոլլինզվուդն այս առնչությամբ գրում է. «Արվեստագետը պետք է ունենա վարպետության որոշակի մասնագիտացված ձև, որ կոչվում է տեխնիկա: Նա ձեռք է բերում իր վարպետությունը, ինչպես արհեստավորը՝ մասամբ անձնական փորձով և մասամբ էլ կիսելով ուրիշների փորձը, որոնք այս կերպ դառնում են նրա ուսուցիչները: Այսպես ձեռք բերված տեխնիկական վարպետությունն ինքնին նրան չի դարձնում արվեստագետ, որովհետև մասնագետ դառնում են, բայց արվեստագետ՝ ծնվում»¹³: Արվեստի գործ ստեղծելիս կարևոր նշանակություն ունի հորինվածքը, որը կարող ենք սահմանել որպես տրված նյութի մասերն ըստ գաղափարի դասավորելու գործընթաց: Իրագործման վերջին ազդակը ոճն է, որը ներառում է մնացած բոլոր ազդակները: Յուրաքանչյուր արվեստագետ իր ոճն ունի: Մարդու էությունը, խառնվածքը, ընկալումը դրսևորվում են նրա ոճում: Արվեստագետի ոճը ստեղծագործության տարբեր մասերը ներդաշնակության բերելու իր տեսիլն է:

Գեղագիտական արժեքի իսկության քննումը Պերպերյանը շարունակում է ներկայացնելով արվեստների էաբանությունը կամ գոյաբանությունը: Պետք է հասկանանք, թե իբրև իրականություն ինչ էություններ է ներկայացնում արվեստի գործը, ինչ գոյ է: Հեղինակը ներկայացնում է արվեստի գործի գոյության չորս աստիճան (փլան), որոնց տալիս է բրգաձև դասավորվածություն: Ամենաներքևում ֆիզիկական, *նյութական* աստիճանն է: Արվեստի իրագործման համար առաջնային անհրաժեշտությունը ֆիզիկական հիմքն է: «Տակէն արձանը իր ձևին մէջ բռնող նիւթեղէն մը կայ առանց որուն արձանը երազ պիտի մնար արձանագործի մտքին մէջ»¹⁴: Ճարտարապետությունը քար է ենթադրում, նկարը՝ կտավ, պարարվեստը՝ մարմին և այլն:

¹³ Քոլլինզվուդ Ռ. Ջ. , նշվ. աշխ., էջ 37:

¹⁴ Պերպերեան Շ. , Արժեքաբանութիւն կամ արժեքներու իմաստասիրութիւն, էջ 59:

Հաջորդ աստիճանը *երևութայինն* է կամ այլ խոսքով՝ զգայական որակների ամբողջությունը: Քանդակագործության մեջ եթե արձանը մարմարից է, ապա տեսնում ենք դրա ճերմակությունը, ստվերները, խորդուբորդությունները: Նկարչության մեջ կտավը ծածկված է ներկերով, գույներով: Երևութային աստիճանը ծածկում է առաջինը՝ շերտավորվելով մինչև չորրորդը:

Երրորդ աստիճանը *իրայինն* է: Երևութային աստիճանը զուտ երևութային մնալ չի կարող, զգայական որակները միաձուլվում են որոշակի ձևի մեջ՝ առաջ բերելով *իրը*: Այս աստիճանի միջոցով, կարելի է ասել, արվեստի գործը իմաստ է ստանում: Նկարում գույները, ձևերը միանում են ներդաշնակության մեջ՝ արտահայտելով պատկերը՝ դեմք, առարկա, տեսարան և այլն:

Վերջինը *անդրանցային* աստիճանն է: Արվեստի գործն ունի ոգեկանություն: Արվեստը դիպչում է մարդու հոգուն, ներշնչում, ոգևորում, բարձրացնում է: «Ամեն արուեստին գործ տեսակ մը անպատմելի, իր բուն եղածէն անդին անցնող բան մը, զգացում մը կը բերէ, որ կարծէք այն մթնոլորտն է որուն մեջ կը շնչէ»¹⁵:

Արվեստի գործի ստեղծումը, էությունը, կառուցվածքը վերլուծելով՝ Պերպերյանը հանգում է դրա գեղագիտական արժեքի գնահատմանը՝ փորձելով բացահայտել, թե ինչպես է ընդունվում ստեղծագործությունն ընկալողի կողմից, ինչպես է դատվում և վայելվում: Նախ պետք է հասկանանք, թե մարդն առհասարակ ինչպես է ընկալում ցանկացած արժեք, ինչ հարաբերություն ունեն մարդն ու արժեքը:

Բնության մեջ որոշ տեսարաններ՝ լեռ, ձոր, երկինք, մեզ համար ոչ միայն պարզապես տեսարաններ են, այլև *գեղեցիկ* են: Գեղեցիկն այդ տեսարաններին տալիս է մեկ այլ որակ (հանգամանք), որը մեզ հրապուրում է: Ուրեմն գեղեցիկն *արժեք* է, որը գտնում ենք այդ տեսարաններում: Մեզ քաշող, ձգող այդ որակը ոչ թե զգայական, այլ ոգեկան է, հետևաբար՝ տեսարանը նայում ենք, իսկ դրա գեղեցկությունը՝ ապրում, զգում:

Ուրեմն կան արժեքներ, որոնք մեզ գրավում են, որովհետև մյուս կողմից՝ մեր մեջ այդ արժեքների իմացումը, դրանք տեսնելու, իմանալու կարողությունները կան, մենք այդ արժեքները տեսնելու ոգեկան կարողությունն ունենք:

Պետք է հաստատել, որ ապրում ենք տիեզերքում, որտեղ շատ իրեր, էակներ և որակներ անտարբեր են թողնում մեզ, բայց դրանց մի մասն էլ հրապուրում է, խոսում մեզ հետ իր արժեքներով, որովհետև մենք այդ արժեքների իմացումն ունենք մեր մեջ: Այս տեսանկյունից՝ կարող ենք սահմանել մեզ՝ որպես արժեքների իմացումն ունեցող էակ, հետևաբար՝ իրերը մեզ համար հավասար չեն, դրանք կարող են ունենալ կա՛մ դրական քաշողություններ, կա՛մ ժխտական վանողականություն: Մի կողմից՝ անտարբեր չենք, երբ տեսնում

¹⁵ Նույն տեղում, էջ 62:

ենք տեսարանի գեղեցկությունը, մյուս կողմից՝ անտարբեր չենք, երբ դրա հակառակն ենք տեսնում, սգեղությունը չենք սիրում և խուսափում ենք դրանից:

Ամեն արժեք կյանքի իրագործումն է, որը բնութագրվում է ուրախությամբ, կյանքը ցավ է պատճառում, երբ չի արդարացնում մեր սպասելիքները: Արժեքը, որպես այդպիսին, կյանքի լինելիությունն է, հաջողությունը: «Ուր որ արժեք մը կայ՝ կ'ապրուի իբրև ուրախություն մը»¹⁶: Հետևաբար՝ երբ արվեստի գործում տեսնում ենք արժեքը, ուրախություն ու հրճվանք ենք ապրում, որն այլ խոսքով կոչում ենք *հիացում*: Մա հանդիպում ենք նաև Հյուսիս հայացքներում: Ըստ Հյուսիսի՝ ո՛չ գեղեցիկը և ո՛չ էլ սգեղն առհասարակ գոյություն չունեն, դրանցից առաջինը, ըստ էության, հաճույք է, մյուսը՝ ցավ, տհաճություն¹⁷:

Պերպերյանն անդրադառնում է նաև *ճաշակ* հասկացությանը, որը սահմանում է որպես գեղեցկությունը տեսնելու, իմանալու կարողություն: Այն իմացումը, որով արվեստի գործում կարողանում ենք տեսնել, ճանաչել, զգալ գեղագիտական արժեքը ու միևնույն ժամանակ հիանալ դրանով, կոչվում է ճաշակ: Նա, ով գուրկ է գեղագիտական ճաշակից, արվեստի գործը կարող է տեսնել, բայց դրա ներկայացրած արվեստագիտական արժեքը՝ ոչ, հետևաբար՝ չի կարող նաև հիանալ դրանով և վայելել այն:

Կան հոգեկան իմացումներ, զգացողություններ, որոնք փաստում են որևէ արժեքի ներկայությունը, օրինակ՝ ողջամտությունը՝ ճշմարտության, խիղճը՝ բարոյականության, ճաշակը՝ գեղեցկության: Այս երեք իմացումները օգնում են գնահատել արժեքները: Հեղինակն այստեղ առաջ է բերում *Տիեզերական Դատաստանի* հասկացությունը, որը օբյեկտիվ գնահատման նշանակություն ունի. միայն դատողի համար չէ, այլ բոլորի: «Ճիշդը ճիշդ է ամեն միտքի համար, որովհետև ճշմարտությունը տիեզերական արժեք մըն է»¹⁸: Այդ իմացումների կատարած դատաստանը տիեզերական և առարկայական է, քանի որ ինչպես օբյեկտիվ գոյություն ունեցող առարկան գոյություն ունի բոլորի համար, այնպես էլ երեք արժեքների դատաստաններն առարկայական են և ընդհանրական իրենց ձևով և պարունակությամբ:

Գնահատում արվում է նաև օգտակարության և հաճելիության տեսակետից, սակայն դրանք հարաբերական են: Մի կերակուրը կարող է մեկին հաճելի լինել, մյուսին՝ ոչ, որովհետև հաճելիությունը կախված է անձի կենսաբանական, հոգեբանական, բնական առանձնահատկություններից, որոնցով մի մարդը տարբերվում է մյուսից: Մակայն մյուս երեք արժեքների պարագայում պատկերն այլ է. դրանք ոգեկան, հասարակական և ընդհանրական են: Մակայն ինչպե՞ս է ստացվում, որ միևնույն գործը մեկի համար գեղեցիկ է, մյուսի համար՝ ոչ: Պերպերյանն այս երևույթը բացատրում է նրանով, որ որոշ մարդիկ

¹⁶ Նույն տեղում, էջ 63:

¹⁷ Տե՛ս **Hume D.**, A Treatise of Human Nature, Clarendon Press, Oxford, 1965, էջ 299:

¹⁸ **Պերպերյան Շ.**, Արժեքաբանություն կամ արժեքներու իմաստասիրություն, էջ 65:

արվեստի գործը չեն գնահատում ամբողջության մեջ, չեն տեսնում այնպես, ինչպես ստեղծել է արվեստագետը, գնահատում են միայն մի տեսանկյունից, մասերը տեսնում են, հարաբերություններն ու ներդաշնակությունը միասնության մեջ՝ ոչ: Եթե արվեստի գործը ընկալվի և գնահատվի ամբողջապես, ապա բոլորը նույն կերպ կգնահատեն: Վեց ազդակներից ոչ մեկն առանձին արժեք չէ, և դրանց տարանջատ գնահատումը հանգեցնում է սխալ դատաստանի: Այս առնչությամբ Արիստոտելը նշում է, որ գեղեցիկը՝ լինի էակ կամ առարկա, բաղկացած է ոչ միայն հատուկ դասավորված մասերից, այլև ունի հատուկ, ոչ պատահական ծավալ, որում այդ մասերը միաձուլված են ընկալողի համար¹⁹:

Ամփոփելով կարող ենք ասել, որ արվեստի գործի ստեղծումը, ըստ Պերպերյանի, հոգեկան և ոգեկան գործընթացների բարդ ու բազմաշերտ երևույթների արտահայտություն է: Ըստ այդմ՝ գեղագիտական արժեքի հասկացումն ու գնահատումը ևս պահանջում են խորը վերլուծություն, հոգեկան կարողություններ ու ջանքեր: Ինչպես ցույց է տալիս Պերպերյանը, մարդկային ուժերից վեր թվացող այս երևույթներն իրականում խիստ մարդկային են, քանի որ տարբեր արժեքների գոյությունը և դրանց տեսակետից աշխարհի ըմբռնումը բնորոշ են մարդուն: Տիեզերքը, մարդկությունը ունեն արժեքային որակներ, և մարդը, մարդու էությունը նախապատրաստված են այդ որակների ընկալմանը: Դժվար է ասել՝ արդյո՞ք մարդու ներսում եղած այդ իմացումը որակների համար է, թե՞ որակներն են այդ իմացումի համար՝ «ա՛յքը լոյսին թե լոյսը աչքին»²⁰: Կարող ենք հաստատել միայն այն, որ մարդու իմացումի և տիեզերքի որակների միջև համապատասխանություն կա, և մեկն առանց մյուսի բացատրություն չունի:

ВАРДАН КАРАПЕТЯН – Понимание эстетической ценности в аксиологическом учении Шахана Перперяна. – Армянский философ прошлого века Шахан Перперян (1861–1956) был одним из западноармянских интеллектуалов первой половины XX века, который приложил огромные усилия и выполнил неопенимую работу в диаспоре и в армянских духовных центрах для сохранения армянской идентичности, армянской мысли, обеспечения и развития армяноязычного образования. Всю свою сознательную жизнь Перперян посвятил научно-педагогической деятельности, заняв особое место в армянской философской мысли, эстетике, музыковедении, хореографии и педагогике. В статье представлены и обобщены эстетические взгляды Шахана Перперяна в контексте его аксиологии (учения о ценностях). Разграничивая ремесло и искусство, обсуждаются вопросы, касающиеся творческой природы человека, самого искусства, трёх основных этапов, форм и побудительных мотивов художественной деятельности. Анализируются аксиологические и эстетические представления Перперяна, в которых делается попытка раскрыть взаимосвязь между человеком и ценностями, процесс оценки художественного произведения и критерии этой оценки. Рассматривается философия искусства Перперяна и виды искусства, которые он классифицирует, исходя из ёмкости эстетической ценности

¹⁹ Տե՛ս **Аристотель**, ПоэтикаՍ Сочинения: в 4-х т. Т. 4, М., Мысль, 1984, էջ 654:

²⁰ **Պերպերեան Շ.**, Արժեքաբանութիւն կամ արժեքներու իմաստասիրութիւն, էջ 12:

произведения. Он выделяет старшие (первостепенные) и младшие (второстепенные) искусства. К старшим искусствам он относит шесть: архитектура, скульптура, живопись, танец, фольклор, музыка. Все остальные искусства — такие как мебельное дело, ювелирное искусство, портняжное ремесло и другие — считаются младшими искусствами. Также представлены взгляды Шахана Перперяна на роды искусства, импульсы их возникновения и весь процесс художественно-эстетической деятельности.

Ключевые слова: *ценность, знание ценности, искусство, произведение искусства, художественный процесс*

VARDAN KARAPETYAN – The Views of Aesthetic Value in Shahan Perperyan’s Theory of Value. – The Armenian philosopher of the last century, Shahan Perperyan (1861–1956), was one of the Western Armenian intellectuals of the first half of the 20th century who made tremendous efforts and undeniable contributions in the Diaspora and in Armenian spiritual centers toward the preservation of Armenian identity, Armenian thought, and the promotion and development of Armenian education. Perperyan devoted his entire conscious life to scholarly and pedagogical activity, occupying a unique place in the fields of Armenian philosophical thought, aesthetics, musicology, dance studies, and pedagogy.

This article presents and summarizes Shahan Perperyan’s aesthetic views in the context of axiology (the theory of value). By distinguishing between works of craft and works of art, the article discusses issues related to human creative nature, art, the three main stages, forms, and motivations of artistic activity. It analyzes Perperyan’s axiological and aesthetic perceptions, in which an attempt is made to reveal the relationship between the human being and values, the process of evaluating a work of art, and the criteria for that evaluation. The article also addresses Perperyan’s philosophy of art and the different types of art. Based on the capacity of an artwork to carry aesthetic value, Perperyan distinguishes between primary or senior arts and secondary or junior arts, identifying six senior arts: Architecture, Sculpture, Painting, Dance, Folklore, Music. All other arts, such as carpentry, jewelry making, tailoring, and so on, are considered junior arts. Perperyan’s views on the genres of art, the stimuli behind the emergence of art, and the entire process of art criticism and artistic creation are also presented.

Key words: *value, knowledge of value, art, work of art, artistic process*

Օգտագործված գրականություն / References

- Կասսիրեր Է., Էսսե մարդու մասին, Երևան, Փրինթինֆո, 2008, 384 էջ [Kassirer E., *Esse mardu masin*, Erevan, Printinfo, 2008, 384 էջ]:
- Պերպերեան Շ., Արժեքաբանություն կամ արժեքներու իմաստասիրություն, Անթիլիաս, 1976, 166 էջ [Pērpērean Š., *Aržeqabanut’yun kam aržeqneru imastasirut’yun*, Ant’ ilias, 1976, 166 էջ]:
- Պերպերեան Շ., Գեղագիտություն եւ գեղարուեստ, Պէրուք, 1975, 414 էջ [Pērpērean Š., *Gelagitut’yun ev gelarvest*, Beirut, 1975, 414 էջ]:
- Պլատոն, Իոն, Երկեր չորս հատորով, հատոր III, Երևան, Փրինթինֆո, 2011, 262 էջ [Platon, *Ion*, Erker č’ors hatorov, hator III, Erevan, Printinfo, 2011, 262 էջ]:
- Քոլլինգվուդ Ռ. Ջ., Արվեստի հիմունքները, Երևան, Փրինթինֆո, 2007, 423 էջ [K’ollingvud R. J., *Arvesti himunqneru*, Erevan, Printinfo, 2007, 423 էջ]:
- Аристотель, Поэтика, Сочинения: в 4-х т. Т. 4, М., Мысль, 1984, 830 с. [Aristotel’, *Poetika*, Sochineniya: v 4-kh t. T. 4, M., Mysl’, 1984, 830 s].
- Hume D., *A Treatise of Human Nature*, Clarendon Press, Oxford, 1965.

**ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՉԸ ԱՌԱՇՆԵՐՈՒՄ ՈՒ
ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐՈՒՄ. ԼԵԶՎԻ ԲՆՈՐՈՇՄԱՆ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ-
ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ**

ՆԱՐԵ ՇԱԼՈՒՆՑ 

Երևանի պետական համալսարան

Մույն հոդվածի առանցքը առաձային խոսույթում լեզվի հասկացությանացման միջոցով մարդկային հատկանիշի որոշարկման ու բնութագրման լեզվաճանաչողական ու փիլիսոփայական վերլուծությունն է: Համեմատական մեթոդի օգնությամբ մարդակենտրոն հայեցակերպի շրջանակում քննության են առնվում ֆրանսերեն և հայերեն առաձներ ու ասացվածքներ, որոնք շեշտադրում են խոսքի՝ իբրև լեզվի կիրառման դերը մարդկային բնութագրի վերհանման գործում: Մասնավորապես լեզվի փիլիսոփայության ու իրականության փոխառնչության տիրույթում իրականության կառուցարկման ու խոսքի իմաստաստեղծ գործառույթի դիրքերից բնորոշվում են ճշտախոսությունն ու ստախոսությունը, իսկ խոսքի ազդեցության ու ներուժի կարևորումը ճանաչողական-գործաբանական հարթությունում ուղղորդում է զգուշության տիրույթ: Առաձներում իրականության գոյաբանական, իմացաբանական ու բարոյագիտական արտապատկերման ճանապարհը ճանաչողությունն է, որը թույլ է տալիս մարդկային էությունը որոշարկել լեզվական միավորի ու հասկացույթի հարաբերակցության համատեքստում, իսկ խոսքը մետալեզվական մակարդակում չեզոք հասկացույթի միջոցով սահմանում է մարդկային էությունը: Լեզվաճանաչողական մեկնությունը առաձային խոսույթի փիլիսոփայության իմաստային շրջանակի որոշարկման միջոց է, իսկ հասկացության դաշտում փոխաբերությունների միջոցով առաձներն ու ասացվածքները ներամփոփում են լեզվի ու վերջինիս կիրառման խոսքի միջոցով մարդկային հատկանիշների բնորոշման ուղիներ: Այսպիսով, առաձային խոսույթի լեզվաճանաչողությունը լեզվափիլիսոփայության մեկնման ճանապարհ է, իսկ միջմշակության հայեցակերպի լույսի ներքո՝ փոխաբերական պատկերումները ցուցանում են նշյալ ուղիների զուգահեռման ու հատման տիրույթները:

Բանալի բառեր – *լեզվափիլիսոփայություն, ճանաչողություն, հասկացության փոխաբերություն, առաձային խոսույթ, մարդկային հատկանիշ, ճշտախոսություն, ստախոսություն, զգուշություն*

Նարե Շալունց – ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ

Наре Шалунц – аспирант кафедры французской филологии ЕГУ

Nare Shalunts – PhD Student at the Chair of French Philology, YSU

Էլ. փոստ՝ nare.shalunts@ysu.am ORCID ID: <https://orcid.org/0000-0003-3606-261X>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 21.01.2026

Գրախոսվել է՝ 16.02.2026

Հաստատվել է՝ 02.04.2026

© The Author(s) 2026

Լեզվաբանության հարացույցում ճանաչողական ու փիլիսոփայական հայեցակերպերի գուգահեռումը արդի լեզվաբանության առանցքային հիմնահարցերից է, որի շրջանակում կարևորվում է իմաստի կառուցարկման հասկացության ուղղվածությունը: Ճանաչողական դիտանկյունն ակնհայտորեն ապահովում է լեզվական արտահայտության և մտածողության կապը: Լեզվափիլիսոփայական կարգերի տարրորոշման համատեքստում Ջ. Լակոֆը և Մ. Ջոնսոնը կարևորում են մարդկային լեզվամտածողության ճանաչողական կադապարումը, մասնավորապես՝ ճանաչողության զգայական ու հոգեզգայական շեշտադրումը¹: Առաձի իմաստային շրջանակի հիմքում փոխաբերական պատկերն է, մասնավորից ընդհանուր անցման բնույթը, և այս համատեքստում ընդգծվում է փոխաբերության և փոխանունության դերը: Լեզվաբանական մտքի զարգացման տարբեր շրջափուլերում առաձների ճանաչողական հայեցակերպը նախ դիտարկվել է փոխաբերության², այնուհետև՝ փոխանունության³ դիտանկյունից: Համակողմանի քննության արդյունքում կարելի է պնդել, որ առաձները համադրային միավորներ են՝ հաշվի առնելով վերջիններիս փոխներթափանցման, ինչպես նաև սահմանների որոշարկման գործոնը:

Փոխաբերության հասկացության բնույթը ենթադրում է աղբյուր և թիրախ տիրույթների միջև տեղաշարժ: Փոխաբերության ուսումնասիրման ճանաչողական հայեցակերպն ընդգծում է հասկացության մակարդակը, և այս համատեքստում հասկացությունները մարդկային ճանաչողության կարևորագույն տարրեր են, իմաստակիր միավորներ⁴:

Լեզվաճանաչողական և լեզվափիլիսոփայական հետազոտությունների տիրույթում հարկ է ընդգծել լեզվի առանցքային դերը ինչպես լայն իմաստով իրականության կառուցման ու մեկնաբանման, այնպես էլ մարդկային բնութագրի կերտման հարցում: Իբրև իրականության ու մտածողության համադրման միջոց՝ լեզուն բացորոշում է նշյալ առանցքների փոխառնչությունն ու հատման կետը: Մարդակենտրոն հայեցակերպի դիրքերից լեզուն կառուցում է մարդկային էությունն ու բնութագրերը: Նկատի առնելով վերոնշյալը՝ հետազոտության շրջանակում դիտարկել ենք լեզվի միջոցով մարդկային հատկանիշների դրսևորումները, քանի որ մարդու էությունը որոշարկելու լավագույն միջոցը լեզուն է: Հիրավի, առաձներն ու ասացվածքները ճանաչողության տի-

¹ St' u **Lakoff G., Johnson M.** *Philosophy in the Flesh: The Embodied Mind and Its Challenge to Western Thought*. New York, Basic Books, 1999:

² St' u **Lakoff G., Turner M.** *More than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor*. Chicago, The University of Chicago Press, 1989:

³ St' u **Günter R., Kövecses Z.** *Towards a Theory of Metonymy* // Klaus-Uwe Panther and Günter Radden (eds.), *Metonymy in Language and Thought*, Amsterdam, Philadelphia: Benjamins, 1999, էջ 17-59:

⁴ St' u **Lakoff G., Turner M.** *More than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor*. Chicago, The University of Chicago Press, 1989, էջ 111:

րույթում լայն իմաստով ուրվագծում են մարդկային հատկանիշների բազմերանգ գունապնակ, համակցում կոնկրետ և վերացական տիրույթներ: Այստեղ հարց է ծագում՝ ո՞րն է այն կամուրջը, որ ճանապարհ է բացում նշյալ տիրույթների միջև, այլ կերպ ասած՝ ինչպե՞ս կարող է լեզվական հանրույթի կոլեկտիվ փորձը իբրև տեքստ, առած՝ հյուսված բառերից⁵, լեզվական խնայողության միջոցով արտահայտել հարաժամանակային ճշմարտություն, մասնավորից ընդհանուր անցման պրիզմայով որոշակի առարկաների միջոցով փոխաբերաբար մատնանշել վերացական երևույթներ ու հատկանիշներ: Հենց սա էլ առածաբանության առանցքային հիմնահարցն է լեզվի փիլիսոփայության ճանաչողական–գործաբանական հարթությունում:

Վերլուծական փիլիսոփայության ու ճանաչողական գիտության շրջանակում լեզվի ու փոխաբերության հարաբերակցությունը դիտարկվում է տեսողական ընկալման միջոցով. փոխաբերության մեկնակետը զգայական է: Հիմք ընդունելով Լ. Վիտգենշտեյնի «բաղ-ճագարի» պատկերի մեկնաբանման երկակի տեսանկյունը՝ փոխաբերությունը դիտարկվում է իբրև «այլ հայացք» փաստացի իրականությանը: Իրականության փաստացի ընկալումը՝ *տեսնել այն, ինչ որ է*, տարբերվում է սուբյեկտիվ դիտանկյունից՝ *տեսնել իբրև*: Ուստի «տեսողական դիտանկյունը» շեշտադրում է *ԸՆԿԱԼԵԼԸ ՏԵՄԵԼ Է* հասկացության փոխաբերությունը, և տվյալ պարագայում *ՓՈՒՄԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԱԼԵԼԸ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ Է՞*:

Մ. Ջոնսոնն իր հերթին ընդգծում է, որ լայն իմաստով փիլիսոփայական կարգերը փոխաբերական են՝ հաշվի առնելով վերացարկման գործոնը, և կառուցում լեզվի ու մտածողության փիլիսոփայության փոխաբերական հայեցակերպը, համաձայն որի՝ *ՄՏՄԾԵԼԸ ԽՈՍԵԼ Է՞*:

Լեզվի ու իրականության փոխառնչության տիրույթում ճանաչողական դիտանկյունից տեղեկույթի փոխանցման ու իրականության մեկնաբանման կադապարման մեկնակետը իրականության ընկալումն է, ինչի լեզվական առկայացումը կարող է ընթանալ երկու ուղղությամբ: Մի դեպքում խոսքային դրսևորումը կարող է համընկնել իրականությանը, մյուսում՝ գիտակցված կերպով խեղաթյուրել այն, ուստի խոսքային վարքագծի միջոցով մարդու բնորոշումը տվյալ դեպքում աղերսվում է հակադիր հատկանիշների՝ ճշտախոսության ու ստախոսության լեզվաճանաչողական կադապարների քննությանը: Դիտարկենք հետևյալ առաձները.

⁵ «Տեքստ» եզրույթն առաջացել է լատիներեն *textus* (հյուսվածք) բառից:

⁶ Տե՛ս **Mácha J.**, *Metaphor in Analytic Philosophy and Cognitive Science* // *Revista Portuguesa de Filosofia*, T. 75, Fasc. 4, *Modelos e Metáforas: Arte e Ciência / Models and Metaphors: Art and Science*, 2019, էջ 2282:

⁷ Տե՛ս **Johnson M.**, *Philosophy's Debt to Metaphor* // *The Cambridge Handbook of Metaphor and Thought*, edited by Raymond W. Jibbs, 2008, էջ 49:

Il n'y a que la vérité qui blesse // Ճշմարտությունն այք է ծակում:

Քննության առարկա առածները նախ շեշտում են ճշմարտության, ճշտախոսության հասկացությանցումը մարմնի ու ցավի ճանաչողության միջոցով. ֆիզիկական ցավը հիմնավորում է ճշմարտության իմացաբանական փորձառության արդյունքում հոգեզգայական ցավը, ուստի աղբյուր տիրույթը ֆիզիկական վնասվածքն է, վերքը, իսկ թիրախը՝ ճշմարտությանն առերեսվելիս հոգեզգայական «վերքը»: *ՃՇՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳ Է, ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՆՔ Է, ԻՍԿ ՃԻՇՏ ԽՈՍԵԼԸ ՎԻՐԱՎՈՐԵԼ Է* հասկացության փոխաբերությունների հիմքերի որոնման ճանապարհին առաջ է գալիս հետևյալ հարցադրումը. ինչու է ճշմարիտ խոսքը վիրավորում: Ճանաչողության միջոցով պատասխանի փնտրտուքն ուղեկցում է իրականության ու սպասելիքի փոխառնչության տիրույթ: Երբ իրականությունը չի համընկնում սպասելիքին, և դրանց միջև առկա է խզում, ճշմարտությունը ցավ է պատճառում: Առածների գուգադրական քննությունը ցույց է տալիս, որ ֆրանսերենում ցավի ճանաչողությունն առկայանում է *blessé* բայի միջոցով, որի իմաստային շրջանակը վիրավորել, խոցել, ցավեցնելն է, իսկ հայերենում՝ հանկարծակի, սուր ցավի հետ մտազուգորդվող *ծակել* բայի օգնությամբ: Հայերեն տարբերակում ճշմարտությունը վնասում՝ *ծակում է այքը*, իսկ վերջինս տեսողական ընկալման, իմացության միջոցի դրսևորումն է, և տվյալ դեպքում ճշմարտության թիրախը հենց ընկալումն է իմացաբանական դիտանկյունից, կամ՝ *ԻՄԱՆԱԼԸ ՏԵՄԵԼ Է:*

Toute vérité n'est pas bonne à dire // Ամեն բան դրուստ չի ասվի // Դուր (ճիշտ) խոսողի գլուխը ծակ է:

Վերոնշյալ ասացվածքներն ու առածը վերհանում են ճշտախոսության հնարավոր հետևանքները՝ նկատի առնելով այն, որ ճշմարտության լեզվական առկայացումն աղերսվում է մարդկային հատկանիշների, ինչպիսիք են իմաստությունը, զգուշությունն ու չափավորությունը, ինչը ենթադրում է խոսքի ու լռության, ասելիքի ու գաղտնիքի համակշռում: Այս համատեքստում ճշմարտությունը հզոր ուժ է, հնարավոր վտանգ, իսկ խոսքն այդ ուժը փոխադրում է հասարակական տիրույթ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առածների ու ասացվածքների լեզվաճանաչողական մեկնությունը *ՃՇՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳ Է* հասկացության փոխաբերության դաշտում է: Ֆրանսերեն ասացվածքը *bon* ածականի միջոցով գնահատողական բնույթ է հաղորդում ճշտախոսությանը: Հարկ է ընդգծել, որ ճշմարտությունն օբյեկտիվ իրականությունն է, որը փաստականի տիրույթում է, իսկ ասացվածքը գնահատական է փոխանցում փաստի լեզվական առկայացմանը՝ դիտարկելով ճշմարտության ու խոսքային ակտի փոխառնչությունը: Տվյալ դեպքում ածականը կարծես գտում է խոսքը բարոյական դիտանկյունից: Ժխտման լեզվաճանաչողական հայեցա-

կերպն ասացվածքներում առաջ է բերում ընդհանուրի տիրույթում բացառությունն դիտվող դիպվածների ամբողջությունը: Այսպես, *dire* և *ասվել* բայերի շրջանակում նախ առանձնացվում է ենթատիրույթ՝ ասել ճշմարտությունը, ընդ որում՝ *toute* և *ամեն* բնորոշիչների միջոցով ընդհանրացվում է *ճշմարտության* շրջանակը՝ ներառելով բոլոր դեպքերը, մինչդեռ ժխտումը (*n'est pas bonne à dire, չի ասվի*) ընդհանրականը փոխակերպում է մասնակիի՝ որոշ ճշմարտությունների, և ճանաչողական դաշտում վերահսկում է ճշմարտության լեզվական դրսևորումը: Հայերեն երկրորդ առաձև ուղղակիորեն ցուցանում է մարդուն և շեշտադրում վերջինիս հատկանիշի՝ ճշտախոսության հնարավոր վտանգի լեզվական դրսևորումը (*զուլիք ծակ*): Ուստի, ճշտախոսությունն ու ազնվությունը չեն երաշխավորում անվտանգություն, ավելին՝ հասարակական տիրույթը նույնիսկ կարող է պատժել ազնվությունը, քանի որ վերջինս ի գործ է մատնանշելու հասարակական իրականության բացասական կողմերը և խարխուլելու համակարգի թվացյալ ներդաշնակությունը: Բարոյական ու հասարակական դիտանկյունից գալիս առանցքը ոչ թե ճշմարտությունն է, այլ հատկանիշը՝ ճշտախոսությունը:

La vérité est cachée au fond du puits // La vérité comme l'huile vient au-dessus (բառացի թաքցվածությունը՝ ճշմարտությունը թաքնված է ջրհորի խորքում // ճշմարտությունը յուղի նման վերև է բարձրանում):

Վերոնշյալ առաձևերում ճշմարտությունը հանդես է գալիս իբրև ենթակա սուբյեկտայնացման դիրքերից և ունի տեղակայում տարածության մեջ: Տարածական ուղղահայաց սխեմայի շրջանակում մի դեպքում այն տեղորոշվում է ներքևում՝ խորքում՝ ցուցանելով գաղտնի ու անհասանելի բնույթը, մյուսում՝ վերևում՝ մակերեսին, և առաջ բերում ի հայտ գալու անխուսափելիության փաստը: Ճշմարտության շարժման տեսողական ընկալումը իմացական տիրույթում վերջինիս ճանաչողական ընկալման արտահայտությունն է: Հասկացության փոխաբերության վերլուծությունն առաձևերում ցույց է տալիս, որ *ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՔՆՎԱԾ ԱՌԱՐԿՄԱՆ* է, ընդ որում՝ *ԻՄԱՆԱԼԸ ՏԵՄՆԵԼ Է*: Լեզվական մակարդակում *cachée au fond du puits (ջրհորի խորքում թաքնված)* կառույցում *ջրհոր* հասկացությունը՝ իբրև աղբյուր տիրույթ, մտազուգորդվում է խավարի, անտեսանելիության հետ, այլ կերպ ասած՝ ջրհորի խորքը իրականության անհասանելի տիրույթն է, իսկ թիրախ տիրույթը գաղտնի, անիմանալի ու թաքնված ճշմարտությունն է: Ներակայման համատեքստում խավարին հակադրվում է լույսը՝ իմացությունը, ճշմարտության բացահայտումը, իսկ խորքում եղածը բացահայտելը ճանաչողական ու մտավոր ջանքի արտահայտությունն է, իմացաբանական դիտանկյունից անհասանելիության կերպափոխումը: Մարդկային հատկանիշի որոշարկման ու խոսքային հարողակցման համատեքստում առաձևերում խոսքի պրիզմայով ճշմարտության լեզվաճանաչողության ու լեզվափիլիսոփայության քննությունը ցույց է

տալիս, որ քննության առարկա առաջին առածում *ԽՈՍՔԸ ՋՐՀՈՐ Է*, իսկ ճշմարտությունը թաքնված է խոսքի խորքում, խոսքը կարող է քողարկել ճշմարիտը, այլ կերպ ասած՝ խոսակիցը պետք է կռահի ճշմարիտը, ջրհորի խորքից դուրս բերի այն, մինչդեռ երկրորդ առածում *ԽՈՍՔԸ ՀԵՂՈՒԿ Է*, և ճշմարտությունը յուրի պես բարձրանում է մակերես, ի հայտ է գալիս, ինքնին արտացոլվում՝ չնայած քողարկմանը: Հատկանշական է, որ *ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՂԻ ԵՎ ԿՐԻՍՏՈՒՄԸ* հասկացության վիճակներությունն առկայանում է համեմատության ոճական հնարի միջոցով՝ *la vérité comme l'huile*: Յուրի հատկանիշները վերագրվում են ճշմարտությանը. այն ջրի երես է բարձրանում՝ բացահայտվում, ուստի մակերեսը տեսանելի շերտն է: Ֆիզիկական տիրույթում յուրի ու ջրի հակադրությունը իմացաբանության շրջանակում ճշմարտության ու կեղծիքի, գաղտնիի ու տեսանելիի հարաբերակցության առնչությունն է: Այսպիսով՝ առածները վերհանում են ճշմարտության հակադիր պատկերներ՝ *cachée au fond du puits*, որը քողարկման արտահայտություն է, և *vient au-dessus*, որը շարժման միջոցով ներկայացնում է ճշմարիտի երևան գալը, և մտավոր կադապարման փոխաբերական պատկերումն առկայանում է շարժման միջոցով:

Ստախոսության՝ իբրև մարդկային հատկանիշի բացասական հարանշանակային իմաստային դաշտի քննությունն իրականացրել ենք ֆրանսերեն ասացվածքի ու հայերեն առածի օրինակով.

Le menteur n'est jamais cru, même quand il dit la vérité // Սուս ստողի սուներ կրակ ընկավ, չհավատացին:

Նախ, ստախոսությունը դիտարկվում է իբրև մարդկային բացասական հատկանիշ, որը հասարակական ճանաչողության հասկացության տիրույթում կայուն ու դժվար փոփոխելի պիտակ է: Տվյալ դեպքում ստելը հանգեցնում է գրեթե անուղղելի հատկանիշի ձևավորման, և այս համատեքստում ասացվածքն ու առածը շեշտադրում են բարոյական ինքնության, վարքագծի ու հասարակական ընկալման, վստահության ուղղակի կապը: Հատկանշական է նաև, որ ճշմարտության ընկալումն իբրև ճշմարտություն տարորոշվում է ոչ թե ասույթային մակարդակում, այլ արտալեզվական գործոնների համալիր ամբողջության շրջանակում՝ նկատի առնելով «ճշտախոսի» վարքագծի կադապարի անցյալի հետագիծը, ինչն էլ բնորոշում է վերջինիս ինքնությունը: Մասնավորապես, եթե ստախոսությունը իբրև մարդկային հատկանիշ դառնում է կայուն կարգ անձի բնորոշման առումով, ապա փաստացի ճշմարտությունն արտաբերելն անգամ ճանաչողական տիրույթում չի կարող փոխակերպել կարգը, քանի որ անցյալում ասված ստերը խոսակցի ընկալումներում ադերսվում են նաև ներկա ասույթներին՝ նույնիսկ ճշմարիտ իրականությունն արտացոլող: Ճշտախոսության դիպվածը դիտարկվում է ստախոսության հաս-

կացութային մակարդակում, ուստի նոր ճշմարիտ ասույթը ոչ թե փոխակերպում է շղթան, այլ ինքն է ընկալման մակարդակում փոխակերպվում ստի, ինչն էլ հանգեցնում է պարադոքսի՝ *ՍՈՒՏԸ ՃԻՇՏ Է*, իսկ *ՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՃՇՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Է*: Հղում է կատարվում ոչ թե ճշմարտության հաղորդակցման տվյալ դիպվածին, այլ ինքնության հաստատված բնութագրիչին:

Ասացվածքում ու առածում պատճառահետևանքային կապի վերլուծությունը ցույց է տալիս, որ լեզվամշակութային կաղապարների զուգահեռման արդյունքում առկա են որոշ տարբերություններ: Մասնավորապես՝ ֆրանսերենում ասացվածքն ուղիղ դատողության արտահայտություն է, ոչ պատկերավոր լեզվական ասույթ, որի հիմքում ճշմարտության լեզվական դրսևորմանը չհավատալն է, մինչդեռ հայերեն առածը մի քանի բառում ամփոփում է մի ամբողջ պատկերավոր պատում՝ կառուցված իրադարձություն-արձագանք հաջորդական շղթայի հիման վրա: *Տունը կրակ ընկնել* բառակապակցությունը կոնկրետ դիպվածի արտահայտությունն է, իսկ առածում դրսևորվում է իբրև հաղորդակցական ակտ, քանի որ ենթադրում է վտանգի մասին ահազանգում, ուստի *ԽՈՍՔԸ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ Է*: Առածում ֆիզիկական աղետը դիտարկվում է ստի պրիզմայով, և ճանաչողության հասկացութային մակարդակում արդեն ձևավորված բնորոշիչը՝ ստախոս, գերիշխում է իրադարձության ընկալման վրա: Ներակայման համատեքստում մարդկային հատկանիշը՝ ստախոսությունը, լայն իմաստով աղերսվում է վստահության բացակայությանը, և տվյալ պարագայում հասկացութային փոխաբերությունը հետևյալն է. *ՎՍՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՍՈՒՐՍ Է*: Իրականության դաշտում տունն այրվում է, իսկ զուգահեռ ճանաչողական իրականությունում ստախոսի հասարակական վստահելի ինքնության կառույցն արդեն «այրվել է», նա վստահություն չունի, և «այրման» երկմակարդակ հարացույցի շրջանակում՝ հասարակականից դեպի ֆիզիկական տիրույթ, վստահության՝ սպառված ու «այրված» ռեսուրսի կորուստը հանգեցնում է ճանաչողական ընկալման տիրույթում ճշտախոսության փոխակերպման: Լեզվական մակարդակում ֆրանսերենում խոսքային ակտ-արձագանք, իսկ հայերենում իրադարձություն-արձագանք շղթաների հարաբերակցությունը խաչաձև է. ֆրանսերենում առաջին պլանում արձագանքն է (*le menteur n'est jamais cru*), իսկ հայերենում՝ իրադարձությունը (*տունը ասողի տունը կրակ ընկավ*): Ճշմարիտ իրականությունը ներկայացվում է փոխաբերական պատկերի միջոցով (*տունը կրակ ընկնել*), սակայն շոշափելի աղետի ահազանգին արձագանքը *չհավատալն* է, քանի որ *տուն ասողի* վարքագծի կաղապարը խոսակցի ճանաչողական ընկալման տիրույթում անփոփոխ է:

On attrape plus vite un menteur qu'un voleur // Մուտը ճամփա չունի: // Մտի ոտները կարճ են:

Վերոնշյալ առածները լայն իմաստով աղերսվում են ստի գոյաբանությանը՝ ստի «կյանքը» ներկայացնելով իբրև ճամփորդություն: Տարածության մեջ շարժումը ձախողվում է, քանի որ հակասում է բարոյական ու իմացաբանական

տիրությունը իրականության գոյաբանական հայեցակերպին: Ընդ որում՝ եթե ֆրանսերեն առածում ստախոս մարդու ճամփորդության ձախողման պատճառը արտաքին ազդեցությունն է, ապա հայերեն առածներում սուտը չի դիմակայում ներքին էության պատճառով: Ֆրանսերեն առածը շեշտում է՝ ավելի արագ գողին կբռնես, քան ստախոսին: Տվյալ դեպքում ստախոսը ճշմարտությունը շղարշում է ստով, ուստի գողոնը համեմատվում է ստի հետ, գողության հետքերը՝ խոսքում տրամաբանական անհամապատասխանությունների հետ, և մարդկային ճանաչողությունն ունակ է խոսքային վարքագծում հեշտորեն բացահայտել անճշտությունները: Առածում հանցանքի բացահայտման դյուրինության աստիճանակարգումն առկայանում է *plus vite que* լեզվական կառուցով, որում արագությունը հեշտության արտահայտությունն է:

Հայերեն առածներում սուտը մարդկային կերպարանք է ստանում՝ *ՍՈՒՏԸ ՍՈՒՐ Է*: Տարածության մեջ շարժումը ենթադրում է տարածում, հաղորդակցում, և սուտը՝ իբրև գործող անձ, ցանկանում է իմացաբանական դաշտում փոփոխել ընկալումները: Տվյալ դեպքում տարածությունը մտքի տիրույթն է, հաղորդակցական շղթան ու իմաստի հոսքի կառուցարկման ճանապարհը, որով փորձում է շարժվել սուտը, սակայն ձախողում է իրականությանն ու ճանաչողությանը հակասելու պատճառով: Հայերեն առածին առածը հիմնված է *ՍՈՒՏԸ ՃԱՍՓՈՐԴ Է* հասկացության փոխաբերության վրա, սակայն իմացաբանական ճանապարհին առաջխաղացման հնարավորություն չկա, քանի որ սուտը համահունչ չէ իրականության օբյեկտիվ կառույցին. այդ իսկ պատճառով ճանաչողական ճամփորդությունը տրամաբանական դիտանկյունից ուղղություն չունի: Երկրորդ առածը շեշտում է ստի՝ իբրև մարդկային կերպարի ֆիզիկական տկարությունը, ինչը թիրախ տիրություն ճանաչողական հիմնավորվածության բացակայության արտահայտությունն է: *Կարճ ոտները* ենթադրում են շարժման սահմանափակություն՝ նկատի առնելով տարածության ու ժամանակի փոխառնչության դիտանկյունը, քանի որ *ճամփան* և *կարճ ոտները* տարածական ուղղվածությանը զուգահեռ առաջ են բերում ժամանակային սահմանափակում: Սուտը երկար ժամանակ չի կարող գոյատևել, և հայերեն առածներում *ԺԱՄԱՆԱԿԸ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ Է*:

Il faut qu'un menteur ait bonne mémoire // Սուտ խոսողի լեզուն կարճ կլինի:

Վերոնշյալ ասացվածքն ու առածը ստախոսի (*menteur, un ut jounny*) բնութագրական դրսևորումներ են, որոնց քննությունը ցույց է տալիս, որ ֆրանսերենում ստախոսի հաջողության բանալին լավ հիշողությունն (*bonne mémoire*) է, իսկ հայերենում՝ *կարճ լեզուն*: Մի դեպքում ստախոսության՝ իբրև մարդկային հատկանիշի որոշարկումն առկայանում է մտավոր տիրություն՝ հիմք ընդունելով հիշողությունը իբրև ճանաչողական գործընթաց, մյուս պարագայում լեզվի միջոցով շեշտադրվում է խոսքային հաղորդակցման դաշտը: Բարոյական դիտանկյունից ստախոսության դատապարտումն իրականանում է ստի

ճանաչողական գործառնության սահմանափակման ընդգծմամբ: Մասնավորապես՝ մարդկային հիշողությունն անսահման ու անխափան պահոց չէ այն առումով, որ երբեմն կարող է «սայթաքել», իսկ խոսքում զսպվածությունը՝ չենթարկվել «սանձահարման», ուստի սուտը հակասում է մարդկային ճանաչողական ու հաղորդակցական կադապարին և դիտարկվում կարողությունների սահմանից դուրս. ճանաչողական-գործաբանական ներուժի կարևորման տեսանկյունից առկա է բարոյական տիրույթում զգուշության ուղերձ:

Ֆրանսերեն ասացվածքում *ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՍՈՒՐՍ Է* հասկացության փոխաբերության վերլուծությունը ցույց է տալիս, որ *bon* ածականը ոչ թե դիտարկվում է իբրև բարոյագիտական կարգ, այլ ցույց է տալիս ճանաչողական ռեսուրսի՝ հիշողության բավարար քանակը: Մտելը ճանաչողական գործընթաց է, քանի որ աղերսվում է հիշողությանը: Հաշվի առնելով այն, որ ճշմարտության պարագայում մտապահումը հեշտ է, քանի որ այն համընկնում է օբյեկտիվ իրականությանը, իսկ սուտը իրականության սուբյեկտիվ մեկնաբանություն է, հիշողությունը՝ որպես ստերի պահոց, փոքր ծավալի պարագայում կհանգեցնի սահմանափակման, իսկ իբրև ռեսուրս ոչ բավարար քանակը՝ ստերի շղթայից անհամապատասխան ընտրության և ի վերջո ստի վերհանման: Հայերեն առածում *ԽՈՍՔԸ ԼԵՉՈՒ Է* հասկացության փոխաբերության մեկնակետը մարմնի ճանաչողության աղբյուր տիրույթն է: Լեզվի կարճությունը խոսքում զսպվածության արտահայտությունն է, քանի որ շատախոսությունը կարող է առաջ բերել ստի բացահայտում: Այս առումով հայերենում առկա է *լեզուն կարճ դարձվածքը՝ ոչ շատախոս, պահվածքով համեստ, նկուն* իմաստով⁸: Ենթադրական ապառնի ժամանակաձևն ընդգրկում է ժամանակային լայն տարածություն՝ հատելով ժամանակի չափման միակողմանի ուղին:

A beau mentir qui vient de loin // Իրենց գեղից մարդ չկա, փչում է:

Քննության առարկա առածներում ֆիզիկական հեռավորությունը ենթադրում է իմացության դաշտում հեռավորություն ճշմարտությունից, ուստի առածները հիմնված են *ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ Է* և *ԻՄԱՆԱԼԸ ՏԵՄՆԵԼ Է* հասկացության փոխաբերությունների վրա: Աշխարհագրական հեռավորությունը պատճառն է, որն առաջ է բերում ստախոս վարքագծի դրսևորում: Ընդ որում՝ ֆրանսերեն առածի առաջին պլանում հետևանքն է (*a beau mentir*), իսկ հայերենում՝ պատճառը (*իրենց գեղից մարդ չկա*): Հարկ է նշել, որ առածներում տարածությունը ներքին տիրույթում ենթադրում է իմացություն, իսկ արտաքին դաշտում՝ անորոշություն: Մասնավորապես՝ ֆրանսերեն առածում *ՍՏԱԽՈՍԸ ՃԱՄՓՈՐԴ Է*, որ եկել է հեռվից և կարողա-

⁸ Տե՛ս **Բեդիրյան Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 541:

նում է հեշտորեն ստել, քանի որ չկա խոսքի հավաստիության ստուգման հնարավորություն, խոսակիցը ծանոթ չէ *հեռվում* առկա ճշմարտությանը: Ավելին, *beau* ածականի կիրառությունն ապահովում է գեղագիտական մակարդակից անցումը դեպի արդյունավետություն՝ ստելու հմտություն և դյուրինություն: Ինչ վերաբերում է հայերեն առածին, *գեղը* դիտարկվում է որպես իմացության տիրույթ, որի սահմաններից ներս կամ դուրս լինելը որոշարկում է ճշմարտության իմացությունը: Տվյալ դեպքում *գեղից մարդը* ճշմարտությունն իմացողն է, որի բացակայությունը հասարակական համատեքստում ենթադրում է ստելն արգելող հարկադրանքի բացակայություն: Հատկանշական է առածում *փչել* բայի գործածությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն փոխաբերական իմաստով նշանակում է *ստել, սուտ ստել*⁹, ուստի *ՄՈՒՏԸՕԴ* է հասկացության փոխաբերության լեզվաճանաչողությունը ցույց է տալիս, որ փչելը դիտարկվում է իբրև ստի տարածում հասարակական միջավայրում: Տվյալ պարագայում կարևոր է նաև անտեսանելիությունը, քանի որ խոսքային հաղորդակցման ժամանակ ստի բնութագրիչը հենց անտեսանելի կողմն է, չընկալվելը իբրև սուտ: Ճանաչողական-գործաբանական դաշտում առածներն արտահայտում են զգուշացում ստախոսից:

Այժմ անդրադառնանք առածներում *լեզու* հասկացության միջոցով զգուշության՝ իբրև մարդկային խոհեմության արտահայտության դրսևորմանը:

Les paroles s'envolent, les écrits restent // Parole jetée prend sa volée

Ինչ որ գրեցիր գրչով, չես կարող քանդել բրչով: // Խոսքը քանի բերանդ է, քոն է, բերանիցդ ելավ, քոնը չէ:

Հարկ է փաստել, որ վերոնշյալ առածներում դիտարկվում է խոսքի ու գրի հակադիր պատկերը, ընդ որում՝ բանավոր խոսքի անցողիկ, իսկ գրավորի՝ մնայուն բնույթը, ինչը լայն իմաստով աղերսվում է նաև ժամանակային հարացույցի շեշտադրմանը: Ֆրանսիական առածային լեզվամշակույթում խոսքը հասկացության մակարդակում դիտարկվում է *թռիչք* հասկացության միջոցով, *s'envoler, volée* լեզվական միավորների դրսևորմամբ: Ֆրանսերեն առածին առածում *ԽՈՍԵԸ ԹՌՉՈՒՆ* է հասկացության փոխաբերության մտազուգորդային կապի տիրույթում թռչնի թռիչքը տեսադաշտից հեռանալու պատկերի նմանությամբ արտապատկերվում է ասված խոսքի՝ լսողության դաշտից անհետանալու, մոռացության մատնվելու իրողության վրա (*les paroles s'envolent*), ինչին հակադրվում է գրի մնայուն բնույթը (*les écrits restent*): Շարահյուսական գուգահեռության գործածումն ընդգծում է հակադիր էությունների առկայությունը: Ի տարբերություն առածին առածի, որում *թռիչք* հասկացության անմիջականորեն ցուցանում է խոսքի անցողիկությունը, քննության առարկա երկրորդ

⁹ Տե՛ս Ադայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան հրատ., 1976, էջ 1539:

առածում թռչելը մտազուգորդվում է խոսքի տարածման հետ, խոսք, որն արդեն դուրս է խոսողի վերահսկողությունից: Գրի մնայունությունը, հարատևությունն ու անխախտելիությունը բնորոշող ֆրանսերեն առաջին առածին զուգահեռ հարկ է դիտարկել հայերեն առաջին առածը, որի լեզվաճանաչողության հիմքում *ԽՈՍՔԸ ԿԱՌՈՒՅՑ Է, ԳԸԵԼԸ ԿԱՌՈՒՅՑԵԼ Է* փոխաբերություններն են. գրիչը ստեղծում է կառույց, որը բրիչը չի կարող քանդել: *Կառուցում* և *քանդում* հասկացությունների հակադրությունն առածում դիտարկվում է *գրիչ* և *բրիչ* լեզվական միավորների կիրառությամբ, ընդ որում՝ վերջիններիս նմանահնչությամբ: Ինչ վերաբերում է հայերեն երկրորդ առածին, այն կարելի է դիտարկել ֆրանսերեն երկրորդ առածի հետ զուգահեռով, քանի որ երկու առածներն էլ ընդգծում են խոսքի տարածումը և արտահայտում զգուշություն: Հայերեն առածում *ԽՈՍՔԸ ՈՒՆԵՑՎԱԾՔ Է*, ինչը կարելի է քննել տարածաժամանակային հայեցակերպի հաշվառման տիրույթում: Մասնավորապես՝ առածի բաղադրիչ առաջին ասույթը (*խոսքը քանի բերանդ է, քոնն է*) ներառում է դեռ չարտաբերված խոսքը, որը տարածության դիտանկյունից մտազուգորդվում է *ներսի*, իսկ ժամանակային կտրվածքով՝ *առաջի* հետ, մինչդեռ երկրորդ ասույթը (*բերանիցդ ելավ, քոնը չէ*) առաջ է բերում հակադիր պատկերը՝ ընդգծելով *դուրսը* և *հետոն*, ինչն էլ հանգեցնում է «ունեցվածքի կորստի»:

Առածային խոսույթում զգուշության մեկնությունը լեզվի ճանաչողության միջոցով արտապատկերում է իրականության կառուցման, փոփոխման տիրույթում խոսքի ուժի հայեցակերպը:

Quand on parle du loup, on en voit la queue // Quand on parle du soleil, on en voit les rayons // En parlant du soleil on voit ses rayons

Շան անունը տուր, փայտը վերցրու: // Անունը տուր, խալիչեն փռիր // Անունը տուր, սուփրեն գցիր:

Նշյալ առածների քննությունը պատճառ-հետևանք սխեմայի շրջանակում խոսքից իրականություն վերափոխման արտահայտությունն է: Բառացի ընթերցմամբ առածներում նշվում է՝ հաղորդակցման ժամանակ որևէ մեկի անունը հիշատակելու արդյունքում վերջինս հայտնվում է: Լայն իմաստով առածների իմաստաճանաչողական կադապարն աղերսվում է *տաքու* լեզվական իրողությանը, համաձայն որի՝ մարդիկ խուսափում են որոշ երևույթների լեզվական առկայացումից՝ դրանք իրականություն չդարձնելու սնահավատության հանգամանքով պայմանավորված: Միջմշակութային համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ֆրանսերեն առածներում խոսքին (*parler*) հաջորդում է խոսելու օբյեկտի՝ խոսողի տեսադաշտում հայտնվելը (*voir*), ընդ որում՝ տեսանելի է ոչ թե ամբողջը, այլ մասը: Հայերեն առածների պարագայում խոսքին (*անունը տալ*) հաջորդում է սուբյեկտի գործողությունը (*փայտը վերցնել, խալիչեն փռել, սուփրեն փռել*): Ֆրանսերեն առածների հիմքում *ԽՈՍԵԼԸ ՏԵՄՆԵԼ Է* հասկացության փոխաբերությունն է:

Նշյալ առածների լեզվաճանաչողության համատեքստում առանցքային նշանակություն ունի ամբողջ-մաս համըմբռնման տարրերի հարաբերակցությունը: Մասնավորապես՝ *loup, queue* (գայլ, պոչ) և *soleil, rayon* (արև, շող) հասկացությունների՝ իբրև ամբողջի և մասի դիտանկյունից առածներում պոչը դիտարկվում է գայլի, իսկ շողը՝ արևի ներկայության ցուցիչ, այլ կերպ ասած՝ մասը բավարար է ամբողջի ներկայությունը հաստատելու համար: Հարց է ծագում՝ ինչու է մասը տեսանելի, ոչ թե ամբողջը: Նվազագույն ճանաչողական կադապարի օգնությամբ առածներն ընդգծում են խոսքի ոչ թե ուղիղ, այլ անուղղակի ազդեցությունը հետքի, նշանի պատկերման միջոցով: Հայերենում խոսքին հաջորդում է յուրօրինակ սոցիալական ծիսակարգ. *ՊԱՇՏՊԱՆՎԵԼԸ ՓԱՅՏԸ ՁԵՌՔԸ ՎԵՐՅԼԵԼ Է, ՂԻՄՍՎՈՐԵԼԸ ԽԱԼԻՉԵՆ ՓՌԵԼ Է, ՀՅՈՒՐԱՍԻՐԵԼԸ ՍՈՒՓՐԵՆ ՓՌԵԼ Է* հասկացության փոխաբերությունների համատեքստում զգուշությունը մի դեպքում զգոնության, մյուսում պատրաստականության հորդոր է:

Եթե վերոնշյալ առածները պատճառ-հետևանք սխեմայի դիտանկյունից շեշտադրում են խոսքն իբրև պատճառ, որին հաջորդում է հետևանքը, ապա առածային խոսույթում դիտարկվում է նաև հակառակ պատկերը, երբ խոսքը հետևանքի լեզվական առկայացումն է, որին նախորդում է պատճառը: Առածային խոսույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշյալ սխեմայի պարագայում խոսելուն նախորդում է մտածելը մտածողության ու խոսքի հարաբերակցության դաշտում:

Il faut tourner sept fois la langue dans la bouche avant de parler // Առաջ միտք արա, հետո խոսք ասա:

Ֆրանսերեն առածում խոսելուց առաջ լեզուն բերանում պտտելը (*tourner la langue dans la bouche*), ընդ որում՝ յոթ անգամ (*sept fois*), զգուշավորության ու խոհեմության ցուցիչ է, ճանաչողական մակարդակում մարմնի միջոցով ինքնակարգավորման արտահայտություն: Հասկացության դաշտում այն ծանրութեթև անելու, մտածելու առկայացումն է, այլ կերպ ասած՝ *ՄԻՏՔԸ ԳՈՐԾ Է, մասնավորապես՝ ՄՏԱԾԵԼԸ ԼԵՁՈՒՆ ԲԵՐԱՆՈՒՄ ՊՏՏԵԼ Է*: Յոթ թվականի կիրառումը ցուցանում է խոսքի տիրություն սայթաքելուց՝ սխալվելուց խուսափելու համար անհրաժեշտ պտույտների թիվը: Քանակական ցուցիչը անատմիական տիրույթից դուրս մտածումի, զուսպ ու հավասարակշիռ մարդու խոսքի առկայացման նախապայմանն է: Հայերեն ասացվածքում մտածել-խոսել հաջորդական շղթայի արտակա դրսևորումը *միտք անել* և *խոսք ասել* հարադիր բայերի հրամայական եղանակի խոնարհումն է, և բայերը շաղկապվում են *առաջ* և *հետո* մակբայների օգնությամբ:

Ինչպես նշեցինք, վերոնշյալ առածն ու ասացվածքը խոսքի ու մտածողության հարաբերակցության տիրություն ցուցանում են խոսելուց առաջ մտածելու կարևորությունը: Իսկ ի՞նչ է լինում, երբ «մտածումը չի նախորդում խոսքին»:

Առաձային խոսույթը որոշարկում է նաև անզգույշ խոսքի բացասական հետևանքները:

Mieux vaut glisser du pied que de la langue // Ուտքով ընկնողը կելնե, լեզվով ընկնողը չելնե:

Երկու լեզվամշակույթներում անզգույշ խոսքը դիտարկվում է իբրև սայթաքում. առաձները հիմնված են միևնույն պատկերի և հասկացության փոխաբերության վրա՝ *ԱՆԶԳՈՒՅՇ ԽՈՍԵԼԸ ՍԱՅԹԱՔԵԼ Է:* Աղբյուր տիրույթը ֆիզիկականի սահմաններում շարժումն է, սայթաքումը, իսկ թիրախ տիրույթը՝ անզգույշ խոսքն ու վերջինիս հետևանքը: Առաձներում միջտիրույթային կապի ցուցիչ է *ուտք* և *լեզու* հասկացությունների կիրառումը, ընդ որում՝ մտազուգորդային կապի արդյունքում հասկացությունները լայն իմաստով աղերսվում են գործողությանը. առաջինը ենթադրում է շարժում ֆիզիկական աշխարհում, իսկ երկրորդը՝ խոսք հասարակական աշխարհում: Այս պարագայում հայերեն առաձը կարճես լրացնում է ֆրանսերենին և մեկնում համեմատության էությունը՝ ուտքով սայթաքելը նախընտրելի է լեզվով սայթաքելուց, *քանի որ* առաջինի դեպքում կարող ես բարձրանալ, իսկ երկրորդի պարագայում՝ ոչ: Այլ կերպ ասած՝ շարահյուսական զուգահեռությունը կառուցված է ընկնել-ելնել հակադրության հիման վրա, և ըստ այդմ՝ *ՄԽԱԼ ՎԵԼԸ ՍԱՅԹԱՔԵԼ Է, ՈՒՂՂՎԵԼԸ ՎԵՐ ԿԵՆԱԼ Է, ԴՐԱԿԱՆԸ ՎԵՐԷ Է, իսկ ԲԱՅԱՍԱԿԱՆԸ ՆԵՐՔԷ Է:*

Un coup de langue est pire qu'un coup de lance // Թրի վերքը կլավանա, լեզվինը չի լավանա:

Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա // Օձի կծածը կսաղանա, լեզվի կծածը չի սաղանա:

Վերոնշյալ առաձները ճանաչողական դիտանկյունից ֆիզիկական ցավը արտապատկերում են խոսքի պատճառած հոգեզգայական ցավի տիրույթ: Ֆրանսերեն և հայերեն առաջին առաձներում համապատասխանաբար *lance* (*նետ*) և *թուր* հասկացությունների կիրառման միջոցով խոսքային ակտը դիտարկվում է իբրև պայքար, հարձակում, բռնություն: Ուստի նշյալ առաձներում *ԽՈՍԵԼԸ ՀԱՐՉԱԿՎԵԼ Է*, իսկ *ԽՈՍՔԸ ԶԵՆՔ Է*, ինչը պատճառ-հետևանք սխեմայի շրջանակում ենթադրում է վիրավորում, վերքի առկայություն: Հասկացության փոխաբերության մասնավորեցման մակարդակում ֆրանսերենում *ԽՈՍԵԼԸ ՀԱՐՎԱԾԵԼ Է*, *ԽՈՍՔԸ ՆԵՏ Է*, հայերենում *ԽՈՍԵԼԸ ՎԻՐԱՎՈՐԵԼ Է*, *ԽՈՍԵԼԸ ԿՏՐԵԼ Է*, իսկ *ԽՈՍՔԸ ԹՈՒՐ Է*: Առաձը խաղարկում է *coup de langue* լեզվական միավորի ուղիղ և փոխաբերական իմաստները՝ նկատի առնելով նախ պատկերավորության շրջանակում *coup de lance* արտահայտության հետ համեմատական զուգահեռը (բառացի՝ լեզվի հարված և նիզակի հար-

ված), ինչպես և պատկերի հիման վրա և դրանից դուրս իմաստային նրբերանգր կծու, խայթող խոսք: Եթե նշյալ առածները խոսքը դիտարկում են պայքարի ու զենքի պրիզմայով, ապա հայերեն երրորդ առածում խոսքի պատճառած վնասն առկայանում է կենդանու՝ օձի կծածի հետ համեմատության միջոցով: *ԽՈՍԵԼԸ ԿՕԵԼ Է, ԽՈՍՔԸ ՕՁ Է* հասկացության փոխաբերությունների միջոցով տարրորոշվում են միջտիրության առնչությունները: Հարկ է նշել, որ *օձ* հասկացությամբ մտազուգորդվում է վտանգի հետ, և այս համատեքստում առածը չափազանցության օգնությամբ լեզվի վնասը տեղորոշում է առավել վտանգավոր տարածքում: Ֆրանսերեն առածը արտակա համեմատության օգնությամբ (*...est pire que... (...ավելի վատ, ավելի վնասակար է...)*) գնահատողական բնույթ է հաղորդում՝ բաղդատելով լեզվի և նիզակի հարվածները: Ինչ վերաբերում է հայերեն առածներին, ֆիզիկական ու լեզվական վնասը շեշտադրվում է շարահյուսական զուգահեռության ու հակադրության միջոցով (*կլավանա-չի լավանա, կսաղանա-չի սաղանա*):

Այսպիսով՝ քննության առարկա առածներն ու ասացվածքները շեշտադրում են խոսքի իմացաբանական, բարոյական ու հասարակական դիտանկյունը: Ճշմարտությունը ներկայացվում է իբրև վտանգ, ընդ որում՝ ֆիզիկական ցավի ճանաչողության միջոցով: Ճշմարտության բացահայտումն առկայանում է *շարժում* հասկացությի միջոցով: Ինչ վերաբերում է ստախոսության բնորոշմանը, այն հայերեն առածային խոսույթում առավել պատկերավոր դրսևորում է ստանում պատումների միջոցով: Ավելին, հայերենում ստի բացահայտումն աղերսվում է ներքին կառույցի անկայունությանը, իսկ ֆրանսերենում՝ արտաքին ազդեցությանը: Հատկանշական է տարածական ու ժամանակային գործոնների փոխառնչությունը, որի շրջանակում ֆիզիկական տարածությունը ճշմարտությունից ու իմացությունից «հեռավորությունն» է, իսկ ժամանակի հաշվառման դիտանկյունից՝ տարածության մեջ շարժման սահմանափակումը, ստի գոյության ժամանակային կրճատումը: Առածներում ու ասացվածքներում զգուշության՝ իբրև մարդկային հատկանիշի որոշարկումը խոսքի ներուժի դիտանկյունից առկայանում է լեզվի ճանաչողության ու փիլիսոփայության միջոցով: Մասնավորապես՝ ֆրանսերեն առածներում շեշտադրվում է խոսքի «թռիչքի» հայեցակերպը՝ տարածման նկատառումով, իսկ հայերեն առածներում խոսքը դիտարկվում է իբրև կառույց և ունեցվածք: Խոսքն առածներում ու ասացվածքներում ոչ միայն իրականության արտացոլման, այլև ստեղծման միջոց է: Մտածողություն-խոսք շղթայի պահպանումը հասկացության դաշտում խոհեմության ցուցիչ է, ինչի անտեսումը կարող է հանգեցնել անզգույշ «սայթաքման»: Այսպիսով՝ առածային խոսույթի լեզվափիլիսոփայության ճանաչողական մեկնությունը հասկացության փոխաբերությունների միջոցով վերհանում է մարդկային հատկանիշներ, կառուցում լեզվի ու իրականության հակադրամիասնությունը:

НАРЕ ШАЛУНЦ – Человеческая характеристика в пословицах и поговорках: когнитивно-философский взгляд на определение языка. – Статья посвящена лингвокогнитивному и философскому анализу определения и характеристики человеческих качеств в пословицах и поговорках, осмысленных через концептуализацию языка. Используя сравнительный метод в рамках антропоцентрического подхода, исследование рассматривает французские и армянские пословицы и поговорки, и подчеркивает роль речи как практического проявления языка в раскрытии человеческих характеристик. В статье *честность* и *лживость* рассматриваются в контексте взаимодействия философии языка и реальности, с учётом конструирования реальности и смыслообразующей функции речи. Когнитивно-прагматический подход подчеркивает значимость потенциального влияния речи в контексте категории *осторожности*. Когниция выступает инструментом онтологической, эпистемологической и этической репрезентации реальности в пространстве паремий, детерминируя человеческую сущность в контексте взаимосвязи языковой единицы и концепта. На металингвистическом уровне речь структурирует человека через концепт языка. Лингвокогнитивное изучение позволяет эксплицировать семантику философии пословичного дискурса. В концептуальной сфере пословицы и поговорки используют метафорические структуры для выявления человеческой характеристики посредством языка и его актуализации в речи. Лингвокогнитивный анализ пословичного дискурса открывает путь к интерпретации философии языка, и метафорические репрезентации в межкультурном аспекте выявляют области параллелизма и пересечения данных путей.

Ключевые слова: философия языка, когниция, концептуальная метафора, пословичный дискурс, человеческая характеристика, честность, лживость, осторожность

NARE SHALUNTS – The Human Trait in Proverbs and Sayings: A Cognitive-Philosophical Insight into the Characterization of Language. – The article focuses on the linguocognitive and philosophical analysis of the definition and characterization of human traits in proverbs and sayings through the conceptualization of language. Using a comparative method within an anthropocentric framework, the study analyzes French and Armenian proverbs and sayings, emphasizing the role of speech as a practical manifestation of language in revealing human traits. It situates *truthfulness* and *deceitfulness* within the interplay between the philosophy of language and reality, considering the construction of reality and the generation of meaning as functions of speech. Furthermore, the cognitive-pragmatic dimension highlights the influential potential of speech in relation to *cautiousness*. Cognition serves as the vehicle for the ontological, epistemological and ethical mapping of reality within proverbs, defining human nature in the context of the relationship between linguistic unit and concept. Speech, at the metalinguistic level, structures human nature via the concept of language. Consequently, linguocognitive analysis provides a means of defining the semantic framework of the philosophy of proverbial discourse. Within the conceptual field, proverbs and sayings use metaphorical structures to compress ways of characterizing human traits by language and its application: speech. Linguocognitive study of proverbial discourse provides a path for interpreting the philosophy of language, and metaphorical representations, from an intercultural perspective, reveal the domains where these pathways parallel and intersect.

Key words: philosophy of language, cognition, conceptual metaphor, proverbial discourse, human trait, truthfulness, deceitfulness, cautiousness

Օգտագործված գրականություն / References

- Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, Հայաստան հրատարակչություն, 1976 [Ałayan Ė., Ardi hayereni bac' atrakan ba'aran, Erevan, Hayastan hratarakč' ut' yun, 1976]:
- Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011 [Bediryana P., Hayeren darcvac' k' neri ěndzarc' bac' atrakan ba'aran, Erevan, EPH hratarakč' ut' yun, 2011]:
- Նազարյան Ա., Ֆրանսիական առածներ և ասացվածքներ ռուսերեն և հայերեն թարգմանությամբ ու համարժեքներով, Եր., Հելիոս հրատարակչություն, 1994 [Nazaryan A., Fransiakan a'fac' ner ev asac' vac' k' ner ruseren ev hayeren t' argmanut' yamb u hamaržeqnerov, Er., Helios hratarakč' ut' yun, 1994]:
- Ղանալանյան Ա., Առածանի, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1960 [Łanalyan A., A'fac' ani, Er., Haykakan SSR GA hratarakč' ut' yun, 1960]:
- Günter R., Kövecses Z. Towards a Theory of Metonymy // Klaus-Uwe Panther and Günter Radden (eds.), *Metonymy in Language and Thought*, Amsterdam, Philadelphia: Benjamins, 1999, pp. 17-59.
- Johnson M., *Philosophy's Debt to Metaphor* // *The Cambridge Handbook of Metaphor and Thought*, edited by Raymond W. Jibbs, 2008.
- Lakoff G., Johnson M. *Philosophy in the Flesh: The Embodied Mind and Its Challenge to Western Thought*. New York, Basic Books, 1999.
- Lakoff G., Turner M. *More than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor*. Chicago, The University of Chicago Press, 1989.
- Mácha J., *Metaphor in Analytic Philosophy and Cognitive Science* // *Revista Portuguesa de Filosofia*, T. 75, Fasc. 4, Modelos e Metáforas: Arte e Ciência / Models and Metaphors: Art and Science, 2019, pp. 2247-2286.
- Dictionnaire de proverbes et dictons, choisis et présentés par Florence Montreynaud, Agnès Pierron et François Suzzoni, Les usuels du Robert*, 1984:
- Refranero multilingüe // <https://cvc.cervantes.es/lengua/refranero/>

**ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ԱԼԲԵՐՏ ԴԱԶԱՐՅԱՆ 

Հոդվածում գիտական տեսությունը դիտարկվում է որպես ճշմարիտ, հավաստի, համոզիչ, ընդունելի գիտելիքի ձև: Բացահայտելով գիտական տեսության հիմնավորման հիմքերը՝ առանձնացվում են գիտական գիտելիքի ճշմարտության արտակառուցվածքային հետևյալ գնահատման չափանիշները՝ վերիֆիկացում, ֆալսիֆիկացում, պատմական հիմնավորում, տվյալ բնագավառում և ժամանակաշրջանում գործառող տեսությունների համապատասխանում, տեսությունների համակարգի՝ այդ ժամանակաշրջանի հարացույցի, աշխարհի գիտական պատկերի, աշխարհայացքի, սոցիալ-մշակութային, պատմական համակարգերի կողմից կարգավորված, ներգծված լինելը և այլն:

Գիտական գիտելիքի ճշմարիտ գնահատման ներկառուցվածքային չափանիշներից նշվել են գիտական տեսության կառուցվածքի՝ վարկածների, աքսիոմների, հիմնական օրենքների, նախադրյալների անկախության, դրանցից դրույթների բխեցման հետևողականության, ավարտվածության, անհակասականության, լրիվության, պարզության պահանջները:

Այս համատեքստում ընդգծվում է, որ պատմական գիտելիքի ճշմարտության, հավաստիության, համոզականության արտակառուցվածքային և ներկառուցվածքային գնահատման չափանիշները միասնական են: Պատմական գիտելիքի արտակառուցվածքային ճշմարտության չափանիշներից թվելի են պատմական հիմնավորումը, տվյալ ժամանակաշրջանի գիտելիքների համապատասխանությունը, աշխարհի գիտական պատկերի ու աշխարհայացքի սոցիալ-մշակութային, պատմական համակարգի մեջ ներգծվածությունը: Ներկառուցվածքային գնահատման չափանիշներից են՝ պատմական գիտելիքի շարադրման ճշգրտությունը, անհակասականությունը, հետևողականությունը, ամբողջականությունը, լրիվությունը, ավարտունությունը, պարզությունը, պատկերավորությունը, գեղեցիկ ոճը:

Գիտական ճշմարտությունը սահմանվում է որպես գիտական գիտելիքի համապատասխանություն իրականությանը, այսինքն՝ գիտելիք է, որն ունի բավարար հիմքեր, հիմնավորվածություն, համոզականություն տվյալ սոցիալ-մշակութային, պատմական համատեքստում:

Սլբերտ Դազարյան – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Альберт Казарян – кандидат философских наук, доцент

Albert Ghazaryan – Candidate of Philosophical Sciences, Associate Professor

Էլ. փոստ՝ albert.ghazaryan@ysu.am ORCID ID:<https://orcid.org/0009-0006-3521-6735>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 14.01.2026

Գրախոսվել է՝ 29.01.2025

Հաստատվել է՝ 02.04.2026

© The Author(s) 2026

Բանալի բառեր – գիտական գիտելիքի ճշմարտություն, արտակառուցվածքային և ներկառուցվածքային չափանիշներ, գիտական տեսության կառուցվածք, աշխարհի գիտական պատկեր, պատմական գիտելիք, պատմական համատեքստ

Մեթոդաբանական գրականության մեջ կա տեսակետ, որ գիտական տեսությունը ճշմարիտ և հավաստի գիտելիք է: Մենք, պաշտպանելով այդ գաղափարը, կարծում ենք նաև, որ այն ամենահամոզիչ և ընդունելի գիտելիքի ձևն է¹: Դիտարկելով գիտական տեսության հիմնավորման հիմքերը՝ կարելի է բխեցնել համապատասխան գիտական ճշմարտության գնահատման չափանիշներ:

Գիտական տեսությունն ասելով մեթոդաբանական գրականության մեջ հիմնականում հասկացվում են բնագիտական տեսությունները, որոնց թվում է ֆիզիկայի՝ բնագիտության առաջատարի տեսությունը: «Տեսություն» տերմինը (հունարեն՝ թեորիա, նշանակում է՝ դիտարկում եմ, հետազոտում եմ) գրականության մեջ օգտագործվում է ամենատարբեր իմաստներով: Լայն իմաստով տեսությունն ասելով հասկանում են մտածողության ընդհանուր բնութագրությունը, որը, ի տարբերություն պրակտիկայի, հայացքների, գաղափարների համալիր է և նպատակաուղղված է տվյալ բնագավառի երևույթների մեկնաբանմանը, կանխատեսմանը: Ավելի նեղ, մասնավոր իմաստով այն գիտական գիտելիքի կազմակերպման, զարգացման բարձրագույն ձևն է, որն ամբողջական պատկերացում է տալիս իրականության որոշակի բնագավառի, տեսության օբյեկտների, էական կապերի, օրինաչափությունների մասին:

Տեսությունն իր կառուցվածքով ներկայանում է որպես ներքնապես տարաբաժանված, սակայն գիտելիքների ամբողջական համակարգ, որը բնութագրական է տեսության ելակետային բազիսին:

Ըստ Վ. Ս. Շվիրյովի՝ ժամանակակից գիտության փիլիսոփայության մեջ ընդունված է առանձնացնել տեսության հետևյալ հիմնական բաղադրամասերը.

- 1) ելակետային էմպիրիկ հիմքը, որն ընդգրկում է գիտության տվյալ բնագավառում ամրագրված բազմաթիվ փաստերը,
- 2) ելակետային տեսական հիմքը՝ բազմաթիվ ելակետային ենթադրությունները, աքսիոմները, վարկածները, օրենքները, իդեալական օբյեկտները,
- 3) տվյալ տեսության բխեցման և ապացուցման տրամաբանական կանոնները,
- 4) տեսության հիմնական մասը կազմող բխեցված պնդումները՝ իրենց ապացույցներով, որոնք նաև տեսական գիտելիքի հիմնական մասն են: Մեթոդաբանորեն տեսության ձևավորման համար կենտրոնական դեր է խաղում ի-

¹ Տե՛ս **Ղազարյան Ա. Ս.**, Գիտական հետազոտության մեթոդաբանական առանձնահատկությունները, Եր., 2015, էջ 55:

դեալականացված օբյեկտը՝ ռեալության էական կապերի տեսական մոդելը, որը ներկայացվում է որոշակի հիպոթետիկ ենթադրությունների և իդեալական օբյեկտների տեսքով²:

Տեսությունը կարելի է բնութագրել նաև որպես կոնցեպտուալ համակարգ, որի տարրերն են տարբեր տեսակի հասկացությունները, դատողությունները (ընդհանրացումները, վարկածները, օրենքներն ու սկզբունքները), որոնք միմյանց հետ կապված են երկու տեսակի տրամաբանական հարաբերություններով: Առաջինը տրամաբանական սահմանումն է, որի միջոցով ձգտում են տեսության բոլոր ածանցյալ հասկացությունները սահմանել ելակետային, անորոշ, հիմնական հասկացությունների օգնությամբ: Երկրորդը տրամաբանական դեդուկցիայի հարաբերությունն է, որի օգնությամբ ելակետայիններից բխեցվում են տեսության այլ պնդումները: Դրանք ներկայանում են՝ մաթեմատիկայում աքսիոմների և պոստուլատների և հիմնարար սկզբունքների տեսքով, իսկ էմպիրիկ գիտություններում՝ հիմնարար օրենքների: Դրանցից ստացված եզրակացությունները կոչվում են թեորեմներ և ածանցյալ օրենքներ: Այսպիսով, ըստ Գ. Ի. Ռուզավինի³, գիտական տեսության կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1) տեսության էմպիրիկ բազիսը պարունակում է հիմնական փաստերն ու տվյալները, ինչպես նաև դրանց տրամաբանական, մաթեմատիկական պարզագույն մշակումները,

2) ելակետային տեսական բազիսը ներառում է հիմնական ենթադրությունները, աքսիոմներն ու պոստուլատները, հիմնարար օրենքներն ու սկզբունքները,

3) տրամաբանական ապարատը պարունակում է ածանցյալ հասկացությունների սահմանման կանոններն ու աքսիոմներից թեորեմների, հետևությունների, ինչպես նաև հիմնարար օրենքներից ածանցյալ կամ ոչ հիմնարար օրենքների բխեցման տրամաբանական կանոնները, տեսության՝ պոստեցիալորեն թույլատրելի պնդումներն ու հետևությունները:

Զարգացման տարբեր աստիճաններում գտնվող տարատեսակ տեսություններում դրանց կառուցվածքային ոչ բոլոր տարրերն այդպիսի ակնհայտ տեսք ունեն: Բնագիտական և բովանդակային մաթեմատիկական տեսություններում դեդուկցիայի տրամաբանական կանոնները ենթադրվում են, իսկ նոր ձևավորվող էմպիրիկ տեսություններում հիմնական օրենքները սովորաբար չեն ձևակերպվում, ուստի մնում են անհայտ: Դրանց փոխարեն հանդես են գալիս բազմաթիվ միջանկյալ, փոքր ընդհանրության օրենքներ, ուստի տեսության ընդհանուր տրամաբանական կառուցվածքը միանշանակ մնում է անո-

² Տե՛ս Պշպրեզ **В. С.** Философский энциклопедический словарь, М., 1983, էջ 677:

³ Տե՛ս Րուզավին **Г. И.** Методология научного исследования, М., 1999, էջ 145-146:

րոշ: Ավելի շուտ այն հիշեցնում է առանձին ենթատեսությունների խճապատկեր, որոնց միջև տրամաբանական կապերը հաստատվում են հետագա ուսումնասիրությունների ընթացքում:

Ուշադրության է արժանի այն, որ տեսության ինֆորմատիվ բովանդակությունը փոփոխվում է նոր փաստեր և օրենքներ բացահայտելիս: Այդ ամենն էապես փոփոխում է տեսության էմպիրիկ բազիսը, իսկ գիտության մեջ հեղափոխական փոփոխությունների դեպքում՝ նաև տեսական բազիսը⁴:

Գիտության մեթոդաբանության մեջ այդպիսի մոդելն ընդունված է անվանել հիպոթետիկ դեդուկտիվ համակարգ, այսինքն՝ պատրաստի բնագիտական տեսության տրամաբանական կառուցվածքը վերլուծելու միջոց:

Տրամաբանական տեսանկյունից հիպոթետիկ դեդուկտիվ համակարգը վարկածների հիերարխիա է, որոնց վերացականության աստիճանը մեծանում է էմպիրիկ բազիսից վեր բարձրանալուն զուգընթաց: Ամենավերևում տեղավորված են ամենաընդհանրական վարկածները, որոնք ունեն տրամաբանական մեծ ուժ: Որքան ավելի մեծ է վարկածի տրամաբանական ուժը, այնքան ավելի շատ հետևանքներ կարելի է բխեցնել դրանից, և ավելի մեծ երևոյթների շրջանակ կարելի է բացատրել: Դրանցից, որպես նախադրյալ, բխեցվում են ավելի ցածրակարգ վարկածները, որոնք կարելի է համադրել էմպիրիկ իրականությանը: Հիպոթետիկ-դեդուկտիվ համակարգում վարկածների միջև առկա տրամաբանական կապի շնորհիվ դրանց որոշ մասի հաստատումը միջնորդավորված ձևով հանգեցնում է մյուսների հաստատմանը⁵: Նկատելի է, որ հիպոթետիկ-դեդուկտիվ կառուցվածքները գնահատվում են տարբեր դիտանկյուններից: Նախ՝ դրանք չպետք է հակասեն գոյություն ունեցող փորձնական տվյալներին, այսինքն՝ էմպիրիկ նյութին: Երկրորդ՝ հիպոթետիկ-դեդուկտիվ համակարգերի, գիտական տեսությունների ներքին կատարելիությանը՝ էյնշտեյնյան իմաստով⁶, այսինքն՝ գիտական տեսությունների, հիպոթետիկ-դեդուկտիվ կառուցվածքների՝ վարկածների, աքսիոմների, հիմնական օրենքների, նախադրյալների անկախության, անհակասության, բխեցման հետևողականության, ավարտվածության, ամբողջականության, լրիվության, պարզության պահանջներին, որոնք կարելի է գիտական գիտելիքի ճշմարտության, հավաստիության, համոզականության, ընդունելի լինելու ներկառուցվածքային գնահատման չափանիշներ համարել: Գիտական գիտելիքի պարզության տակ հասկացվում է գիտական տեսության կառուցվածքի, մաթեմատիկական կառույցների գեղեցկությունը, նրբագեղությունը, որոնք գիտնականները շատ բարձր են դասում: Այդպիսի կառույցների հետ հեշտ է աշխատել: Դրանք համապատասխանում են մեր գեղագիտական զգացողությանը:

⁴ Տե՛ս Բուզավին Գ. Ի. Методология научного исследования, էջ 145-146:

⁵ Տե՛ս Բուզավին Գ. Ի. Философский энциклопедический словарь, М., էջ 117:

⁶ Տե՛ս Էյնշտեյն Ա. Физика и реальность, М., 1965, էջ 139-140:

Մեր կարծիքով՝ գիտական ճշմարտության արտաքին չափանիշները կարելի է բացահայտել միջուկային հարաբերությունների դիտարկման միջոցով: Ռուսալեզու մեթոդաբանական գրականության մեջ այդ կառուցվածքներին անդրադարձել է Գ. Ի. Ռուզավինը, որն այդ հարաբերությունները դիտարկել է գծային կապի տեսքով՝ որպես տեսությունների ռեդուկցիայի հանգեցման ասիմտոտիկ հարաբերություն: Այսինքն, երբ ավելի փոքր ընդհանրություն ունեցող տեսության մաթեմատիկական ապարատը ավելի մեծ ընդհանրություն ունեցող տեսության սահմանային դեպք է⁷:

Մենք միջուկային հարաբերությունները դիտարկել ենք որպես համակարգ⁸: Այդ առումով տեսությունների միջև առանձնացնում ենք հետևյալ հարաբերությունները, հիմնավորման, գնահատման միջոցները՝ վերիֆիկացման, ֆալսիֆիկացման, պատմական հիմնավորման, տվյալ բնագավառի, ժամանակի տեսություններին համապատասխանելու (այս չափանիշն առկա է Ս. Բունզեի աշխատության մեջ⁹), տեսությունների՝ այդ ժամանակաշրջանի հարացույցի, աշխարհի պատկերի, աշխարհայացքի, սոցիալ-մշակութային, պատմական համակարգի կողմից կարգավորված, ներգծված լինելը: Բացի այդ, հիմնավորման էական ձև է պրագմատիստական, այսինքն՝ դիտարկվող երևույթների բացատրության, կանխատեսման, կիրառման տրամաբանական ուժը: Քանի որ մենք գիտական տեսությունը համարում ենք ճշմարիտ գիտելիք, ուստի վերը նշված հիմնավորման ձևերը դառնում են գիտական գիտելիքի ճշմարտության, հավաստիության, համոզականության, ընդունելի լինելու, գնահատման արտակառուցվածքային չափանիշներ:

Այսպիսով, գիտական ճշմարտությունը կարելի է սահմանել որպես գիտական գիտելիքի համապատասխանություն իրականությանը, այսինքն՝ գիտելիք, որն ունի բավարար հիմքեր, հիմնավորվածություն, համոզականություն տվյալ սոցիալ-մշակութային, պատմական համատեքստում:

Պատմական գիտելիքում ճշմարտության, հավաստիության, համոզականության, պատմական գիտելիքի ընդունման, գնահատման չափանիշները մի փոքր այլ են: Այդ մասին նշել ենք մեր աշխատություններից մեկում¹⁰: Ներկա հոդվածում որպես պատմական գիտելիքի հետազոտության միջոց վերցրել ենք «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (Երևան, 2000), «Дэвид Лэнг, Армяне» (Москва, 2005), «Рене Груссе, История древней Армении» (Москва, 2022) գրքերը: Վերոնշյալ աշխատությունների հետազոտությունները ցույց են տալիս, որ ընդունելի, համոզիչ, այսինքն՝ հա-

⁷ Տե՛ս **Рузавин Г. И.** Методология научного исследования, էջ 174-178:

⁸ Տե՛ս **Казарян А. С.** Междисциплинарные отношения и системность науки, ԵրԸ, 1978:

⁹ Տե՛ս **Бунге М.** Философия физики, М., 1973:

¹⁰ Տե՛ս **Ղազարյան Ա. Մ.**, Գիտական հետազոտության մեթոդաբանական առանձնահատկությունները, Եր. , 2015:

վաստի, ճշմարտանման են այն բաժինները, որոնք շարադրված են ոչ թե նախնական վարկածն ընդունելու և ապա էմպիրիկ նյութը՝ աղբյուրները, ներկայացնելու, այլ տեղի ու ժամանակի մեջ, պատմական աղբյուրների ճշգրիտ, ամբողջական, լրիվ, մանրակրկիտ, պատկերավոր ներկայացման, վերարտադրման միջոցով: Այդ տեսանկյունից հատկանշական է Դեյվիդ Լենգի գրքի «Ուրարտու՝ առաջին հայկական պետությունը»¹¹ բաժինը: Այնտեղ պատմական աղբյուրները շարադրված են ճշգրիտ, անհակասական, հետևողական, մանրամասն, լրիվ՝ ընդգրկելով իրեն հայտնի բոլոր պատմական աղբյուրները, բավականին գեղեցիկ ու պատկերավոր: Նման շարադրանքով աչքի է ընկնում նաև Ռենե Գրուսսեի գրքի «Հայաստանը հայերից առաջ» բաժինը, որը մի փոքր զիջում է պատմական աղբյուրների հետևողական, լրիվ շարադրանքով և պատկերավորությամբ¹²: Այդ առումով զգալիորեն զիջում է «Հայոց պատմություն» աշխատության համապատասխան բաժինը¹³, որտեղ պատմական աղբյուրները լրիվ, ամբողջական շարադրված չեն:

Այսպիսով, մեր կարծիքով, պատմական գիտելիքը շարադրելիս պատմական աղբյուրները պետք է ենթարկվեն նախնական արտաքին ու ներքին քննադատության, ապա վերաշարադրվեն, ներկայացվեն ճշգրիտ, մանրակրկիտ, անհակասական, հետևողական, լրիվ, ամբողջական, ավարտուն, հետևողական, պատկերավոր, գեղեցիկ: Շարադրվածը կհամարենք պատմական գիտելիքի ընդունման, համոզականության, գնահատման ներքին չափանիշներ:

Չպետք է մոռանալ նաև պատմական գիտելիքի արտաքին՝ պատմական հիմնավորման, տվյալ ժամանակաշրջանի գիտելիքների համապատասխանության, ժամանակի աշխարհի գիտական պատկերի ու աշխարհայացքի սոցիալ-մշակութային, պատմական համակարգի մեջ ներգծվածության մասին: Իհարկե, գիտական գիտելիքի ճշմարիտ գնահատման ներքին և արտաքին չափանիշների առանձնացումը հարաբերական է: Դրանք հանդես են գալիս միասնաբար:

Պատմական գիտելիքի հիմնական տարբերությունը բնական գիտելիքից այն է, որ պատմական աղբյուրների բովանդակության ճշգրիտ ներկայացումն էապես տարբերվում է բնական գիտելիքում ընդունված վերիֆիկացիայի և ֆալսիֆիկացիայի հիմնավորված չափանիշներից: Նկատելի է նաև, որ տարբերվում են դրանց ներկառուցված չափանիշները:

АЛЬБЕРТ КАЗАРЯН – *Внеструктурные и внутрисктурные критерии истинности научного знания.* – В статье научная теория рассматривается как истинная, достоверная, убедительная, приемлемая форма знания. Раскрывая основы обоснования

¹¹ Տե՛ս Դևիդ Լենգ, *Армяне: Урарту-первое армянское государство*, М., 2022, էջ 90-126:

¹² Տե՛ս Բене Գրուսսե, *История древней Армении*, М., 2021, էջ 40-67:

¹³ Տե՛ս Հայոց պատմություն, Եր. , 2000, էջ 7-24:

научной теории, выделяются следующие внеструктурные критерии истинности научного знания: верификация, фальсификация, историческое обоснование, соответствие с теориями, существующими в данной области, логическая сила объяснения, предвидения, использования, выстроенность и регулируемость парадигмы теорий данного периода, научной картины мира, мировоззрения со стороны социально-культурных и исторических систем и т.д.

К внутрискруктурным критериям истинности научного знания относятся требования к структуре научной теории: независимость гипотез, аксиом, основных законов, предпосылок, а также непротиворечивость, полнота, простота выводов из них положений. В этом контексте подчеркивается, что внеструктурные и внутрискруктурные критерии истинности, достоверности и убедительности исторического знания различаются. Критериями внеструктурной истинности исторического знания являются историческая обоснованность, соответствие знаниям данного периода, логическая сила объяснения, включенность научной картины мира, мировоззрения, в социокультуру, историческую систему. К числу внутрискруктурных критериев относятся точность, непротиворечивость, последовательность, полнота, обобщенность, образность, красивый стиль изложения исторических знаний.

Научная истина определяется как соответствие научного знания реальности, то есть это знание, имеющее достаточные основания, обоснованность и убедительность в данном социокультурном, историческом контексте.

Ключевые слова: *истинность научного знания, внеструктурные и внутрискруктурные критерии, структура научной теории, научная картина мира, историческое знание, исторический контекст*

ALBERT GHAZARYAN – *Extra-Structural and Intra-Structural Criteria for the Truth of Scientific Knowledge.* – Scientific theory has been considered a true, reliable, convincing, acceptable form of knowledge in this article. Having revealed the foundations of the substantiation of a scientific theory, the following non-structural criteria for the truth of scientific knowledge have been highlighted: verification, falsification, historical justification, compliance with the theories existing in a considered area and period, the alignment and adjustability of the paradigm of theories of a considered period, the scientific picture of the world, the worldview from the socio-cultural and historical systems, etc.

Intra-structural criteria for the truth of scientific knowledge include requirements for the structure of a scientific theory: independence of hypotheses, axioms, basic laws, premises, as well as consistency, completeness, together with simplicity of conclusions, coming from their provisions. In this context, it has been emphasized that extra-structural and intra-structural criteria for the truth, reliability and persuasiveness of historical knowledge differ. The criteria for the non-structural truth of historical knowledge are historical validity, compliance with the knowledge of a considered period, inclusion of the scientific picture of the world and worldview in the sociocultural, historical system. Intra-structural criteria include accuracy, consistency, completeness, generalization, imagery, and a beautiful style of presentation of historical knowledge.

Scientific truth has been defined as the correspondence of scientific knowledge to reality, that is, it is knowledge that has sufficient basis, validity and persuasiveness in a particular sociocultural, historical context.

Key words: *truth of scientific knowledge, extra-structural and intra-structural criteria, structure of scientific theory, scientific picture of the world, historical knowledge, historical context*

Օգտագործված գրականություն / References

- Ղազարյան Ա. Ս., Գիտական հետազոտության մեթոդաբանական առանձնահատկությունները, Երևան, 2015 [Lazaryan A. S., Gitakan hetazotut'yan metodabanakan arandznahatk'ut'yunnerə, Erevan, 2015]:
- Бунге М. Философия физики, М., 1973 [Bunge M. Filosofiya fiziki, M., 1973].
- Груссе Рене История древней Армении, М., 2021 [Grusse Rene Istoriya drevney Armenii, M., 2021].
- Казарян А. С. Межтеоретические отношения и системность науки, Ереван, 1978 [Kazaryan A. S. Mez'teoriticheskie otnosheniya i sistemnost' nauki, Erevan, 1978].
- Лэнг Дэвид, Армяне: Урарту — первое армянское государство, М., 2022, -350 с. [Leng Devid Armyane: Urartu—pervoe armyanskoe gosudarstvo, M., 2022, -350 s.].
- Рузавин Г. И. Методология научного исследования. М., 1999, с. 145-146 [Ruzavin G. I. Metodologiya nauchnogo issledovaniya. M., 1999, s. 145–146]
- Рузавин Г. И. Философский энциклопедический словарь. М., с. 117 [Ruzavin G. I. Filosofskiy enciklopedicheskiy slovar'. M., s. 117].
- Швырев В. С. Философский энциклопедический словарь, М., 1983, с. 677 [Shvyrev V. S. Filosofskiy enciklopedicheskiy slovar', M., 1983, s. 677].
- Эйнштейн А. Физика и реальность. М., 1965, с. 139-140 [Eynshteyn A. Fizika i real'nost'. M., 1965, s. 139–140].

**ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՅ ՄՈՏ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՍԹՐԵՄԻ
ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐ**

**ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ¹ ID, ԴԻԱՆԱ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆ² ID,
ԱՆԱՀԻՏ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ³ ID**
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածում վերլուծվում են բոնի տեղահանվածների շրջանում կուտակային սթրեսի առանձնահատկությունները և դրա չափման անհրաժեշտությունը՝ կենսահոգեւոցիալական մոտեցման շրջանակում: Կուտակային սթրեսը բազմակի, փոփոկապակցված և ժամանակի ընթացքում կուտակվող սթրեսորների համակցման արդյունք է: Այն միաժամանակ ներգործում է անհատի կենսաբանական, հոգեբանական և սոցիալական համակարգերի վրա: Ներկայումս տեղահանության խնդիրը ավելի արդիական է դառնում: Տեղահանությունը կուտակային սթրեսի առաջացմանը նպաստող կարևոր գործոն է: Բոնի տեղահանության պայմաններում սթրեսային փորձառությունները ոչ միայն բազմաշերտ են, այլև շարունակական. սթրեսածին գործոնները առկա են ինչպես տեղահանման ընթացքում, այնպես էլ դրանից առաջ և հետո, ինչի հետևանքով

Հետազոտությունն իրականացվել է «Գիտական արդյունավետության խթանման»
25RG-5A146 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

¹ **Հրանտ Ավանեսյան** – հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի ղեկավար

Грант Аванесян – доктор психологических наук, профессор, заведующий кафедрой общей психологии, руководитель научно-исследовательского центра психологии ЕГУ

Hrant Avanesyan – Professor, Dr. of Psychology, Head of the Chair of General Psychology, YSU
Էլ. փոստ՝ avanesyanh@ysu.am <https://orcid.org/0000-0002-5987-7830>

² **Դիանա Ավթանդիլյան** – ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի հետազոտող
Диана Автандилян – исследователь Научно-исследовательского центра психологии ЕГУ

Diana Avtandilyan – Researcher at YSU Psychology Research Center
Էլ. փոստ՝ diana.avtandilyan7@gmail.com <https://orcid.org/0009-0007-7201-526X>

³ **Անահիտ Ամիրջանյան** – ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի հետազոտող
Анаит Амирджанян – исследователь Научно-исследовательского центра психологии ЕГУ

Anahit Amirjanyan – Researcher at YSU Psychology Research Center
Էլ. փոստ՝ anahit.amirjanyan@ysu.am <https://orcid.org/0009-0000-2007-6932>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 16.03.2026
Գրախոսվել է՝ 18.03.2026
Հաստատվել է՝ 02.04.2026
© The Author(s) 2026

աստիճանաբար ձևավորվում են հարմարվողական ռեսուրսների սպառում, ֆունկցիոնալ փոփոխությունների առաջացման վտանգ:

Կուտակային սթրեսին բնորոշ են բազմալորտ ազդեցությունը, ժամանակային դինամիկան, արտաքին և ներքին գործոնների փոխազդեցությունը: Ուստի կուտակային սթրեսի գնահատումը, հատկապես բռնի տեղահանվածների դեպքում, չի կարող սահմանափակվել չափման մեկ գործիքով, հաշվի առնել անհատի կենսագործունեության միայն մեկ միջավայր, ունենալ լոկ իրադարձությունների գումարային բնույթ: Առաջարկվում է հատուկ, համակարգված և համակցված չափման մոտեցման անհրաժեշտություն, որը կներառի հոգեբանական, ֆիզիոլոգիական և սոցիալական գործոնների ինտեգրված գնահատում:

Բանալի բառեր – կուտակային սթրես, անձ, բռնի տեղահանված, գնահատում, հոմեոստազ, ալոստազ, ալոստատիկ բեռ

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող զինված հակամարտությունների, քաղաքական անկայունության և անվտանգության սպառնալիքների աճի պայմաններում սթրեսածին գործոնների ազդեցությունը զգալիորեն մեծացել է: Դա պայմանավորված է ոչ միայն բռնի տեղահանվածների սպառնացող անմիջական վտանգով, այլև տեղեկատվական միջավայրի ինտենսիվությամբ՝ լրատվամիջոցների և սոցիալական մեդիայի միջոցով տարածվող սթրեսածին տեղեկատվության շարունակական հոսքով:

Սթրեսը կարող է առաջանալ ինչպես իրական, այնպես էլ ապագա հնարավոր իրադարձություններից¹: Բնարկե, սթրեսը ընկալվում է բացասական իմաստով, բայց այն կարող է և՛ վնասել հոգեկան ու ֆիզիկական առողջությունը, և՛ դրդել ավելի արդյունավետ գործունեության, ակտիվացնել մարդուն: Իսկ թե ինչպիսին կլինի նրա ազդեցությունը, պայմանավորված է սթրեսի բնութագրիչներով, անհատական և սոցիալական տարբեր գործոններով²:

Սթրեսին արձագանքը տարաբնույթ հետազոտություններում դիտարկվում է որպես ադապտացիոն մեխանիզմ, որն ուղղված է այդ հավասարակշռության պահպանմանը՝ ի պատասխան որևէ մարտահրավերի: Սակայն սթրեսին ուղղված բոլոր արձագանքները չէ, որ հստակորեն ադապտացիոն են: Որոշ ֆիզիոլոգիական արձագանքներ, որոնք, թվում է, կարճաժամկետ պլանում օգուտներ են տալիս, կարող են հետագայում հանգեցնել երկարաժամկետ բացասական հետևանքների:

Մարդկանց վրա սթրեսի ազդեցության բնույթը կախված է բազմաթիվ գործոններից, որոնցից առանձնացնենք երեքը՝ սթրեսի ինտենսիվություն, սթրեսի տևողություն, անձի զգայունություն սթրեսորի նկատմամբ: Հետագո-

¹ Տե՛ս **Щербатых, Ю. В.** (2006). Психология стресса и методы коррекции. СПб.: Питер, էջ 24:

² Տե՛ս **Мельникова, М. Л.** (2018). Психология стресса: теория и практика: учебно-методическое пособие / Урал. гос. пед. ун-т; науч. ред. Л. А. Максимова. Екатеринбург, էջ 5:

տությունները հաստատել են, որ մարդու առողջության համար ավելի վտանգավոր են ոչ թե ուժեղ և կարճատև սթրեսները, այլ երկարատև, թեև ոչ այնքան ուժեղները: Հանգում ենք այն մտքին, որ սթրեսի տևողությունը ավելի էական է, քան ուժգնությունը: Որքան երկար է սթրեսածին գործոնն ազդում մարդու վրա, այնքան ուժեղ է սթրեսը: Կենսաբանորեն նույնպես մենք պատրաստ ենք կարճատև ու ինտենսիվ պայքարի, մինչդեռ երկարատև դիմադրությունը սպառում է օրգանիզմի ռեսուրսները, դարձնում խոցելի, հատկապես երբ սթրեսն անկանխատեսելի է³:

Մարդու կյանքում սթրեսային բոլոր իրավիճակների ընդհանուր քանակը որոշում է սթրեսի ընդհանուր քանակը, որին նա ենթարկվում է որոշակի ժամանակահատվածում⁴: Այսինքն՝ սթրեսն ունի կուտակային (կումուլյատիվ) էֆեկտ: Կուտակային սթրեսը անհատի կողմից ապրվող հաճախակի, երկարատև և ինտենսիվ սթրեսի հետևանք է: Կուտակային սթրեսը համալիր հասկացություն է, որը արտացոլում է կյանքի տարբեր ոլորտներում սթրեսորների ազդեցության քրոնիկ (առնվազն 6 ամիս տևողությամբ) բնույթը, ինչպես նաև անհատի սուբյեկտիվ գնահատականը այդ սթրեսորներին: Այն դեպքում, երբ քրոնիկ սթրեսը բնութագրում է անձի կյանքի մեկ ոլորտ, կուտակային սթրեսը ավելի արժեքավոր է, քանի որ թույլ է տալիս գնահատել սթրեսորների ազդեցության հավաքական բնույթը (կյանքի տարբեր ոլորտների գնահատումը)⁵:

Նման իրավիճակներում մարդը հյուծվում է և այլևս չի կարողանում դիմակայել սթրեսին: Կուտակային սթրեսը հակված է կուտակվելու գրեթե ամեն օր, և որոշակի փուլում դժվար է տարբերակել դրա առանձնահատկությունները: Այն կարող է դառնալ կյանքի այնպիսի անբաժանելի մաս, որ դրան արձագանքելը կթվա նորմալ, և մարդն այլևս ուշադրություն չի դարձնի դրանց⁶:

Առօրյա կյանքում անհատները ենթարկվում են սթրեսածին հոգեցնցիալական բազմաթիվ գործոնների: Ըստ Ռադլերի և նրա գործընկերների՝ կուտակային սթրեսը կարելի է հասկանալ որպես ճնշման կուտակում հինգ ոլորտներում՝ ֆինանսներ, հարաբերություններ, ընկալվող անհավասարություն, աշխատանքային/ընտանեկան կյանք և խտրականություն: Այս գործոնների փոխհարաբերության ուսումնասիրության ընթացքում էլ առանձնացվել է ընդհանուր «s-գործակիցը»: Այսինքն՝ կա մեկ ընդհանուր գործակից, որի մակարդակը կապի մեջ է վերոնշյալ ոլորտներում առկա սթրեսի մակարդակի հետ:

³ Sté u **Щербатых, Ю. В.** (2006), էջ 74-75. **Anisman, H. & Merali, Z.** (1999). Understanding Stress: Characteristics and Caveats. *Alcohol Research & Health: The Journal of the National Institute on Alcohol Abuse and Alcoholism*, 23, էջ 241–249:

⁴ Sté u **Гридчин, А. А.** (2020). Кумулятивный стресс как источник возникновения утомленности или усталости. *Общество: социология, психология, педагогика*, (6), сс. 87–92.

⁵ Sté u **Haight, B. L., etc.** (2023). Combined effects of cumulative stress and daily stressors on daily health. *Health Psychology*, 42(5), էջ 325–334:

⁶ Sté u **Гридчин, А. А.** (2020), էջ 87–92:

Սա ցույց է տալիս, թե ինչպես է սթրեսը հակված բազմաթիվ ոլորտներում համատեղ առաջանալու և սթրեսի ընդհանուր մակարդակը բարձրացնելու⁷:

Կուտակային սթրեսի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների վերլուծություն

Կուտակային սթրեսի դրսևորման օրինաչափությունները հասկանալու համար անդրադառնանք դրա հոգեֆիզիոլոգիական մեխանիզմներին: Օրգանիզմում կան փոփոխականներ, ցուցանիշներ, որոնք սովորական պայմաններում հավասարակշռության վիճակում են: Դրանցից են մարմնի ջերմաստիճանը, թթվածնի հագեցվածության մակարդակը և այլն: Յուրաքանչյուրն ունի այդ ցուցանիշների՝ իր համար օպտիմալ մակարդակը, որն առկա է հավասարակշռության վիճակում⁸: Օրգանիզմի ներքին միջավայրի հարաբերական կայունությունը, հավասարակշռությունը պահպանվում են հոմեոստազի միջոցով: Երբ սթրեսորները տեղաշարժում են օրգանիզմը հոմեոստատիկ կետերից, ինքնակարգավորվող ֆիզիոլոգիական մեխանիզմները գործում են կորցրած հավասարակշռությունը վերականգնելու համար⁹: Ընդհանուր կայունությունը պահպանելու համար փոփոխվելու, կենսական ցուցանիշները բարձրացնելու կամ նվազեցնելու ճանապարհով նոր կայուն վիճակի բերելու ունակությունը կոչվում է ալոստազ: Այսինքն՝ ալոստազի միջոցով փոփոխվում են օրգանիզմի ցուցանիշները՝ փոփոխվող միջավայրին հարմարվելու համար: Ալոստազի ժամանակ փոփոխվելու ունակ միջակայքից այն կողմ անցնելը կարող է հանգեցնել ալոստատիկ ծանրաբեռնվածության: Վերջինս սթրեսորներին արձագանքելու գործընթացի կուտակային ցուցանիշ է, որն առաջանում է շրջակա միջավայրի կրկնվող կամ շարունակական մարտահրավերից, որին անհատը արձագանքում է որպես սթրեսային ազդակ¹⁰: Երբ սթրեսորները նմանատիպ են, դրանց կրկնվելուն զուգընթաց՝ օրգանիզմի արձագանքի արդյունավետությունը կարող է նվազել, որի հետևանքով սթրեսորի հասցրած վնասը գնալով մեծանում է և կուտակվում¹¹:

Անդրադառնանք HPA առանցքին (հիպոթալամուս-հիպոֆիզ-մակերիկամային առանցք): Այս առանցքի դիստեգուլյացիան նույնպես կապված է կու-

⁷ Տե՛ս **Финогенова, Т. А., и др.** (2023). Влияние разных видов стресса на биопсихологический возраст. Современная зарубежная психология, 12(3), էջ 41–51:

⁸ Տե՛ս **Абитов И.Р., Акбиров Р.Р.** (2022). Психология стресса: учебно-методическое пособие. Казань: НОУ ДПО «Центр социально-гуманитарного образования», էջ 9:

⁹ Տե՛ս **Stewart, J. A.** (2006). The detrimental effects of allostasis: allostatic load as a measure of cumulative stress. Journal of Physiological Anthropology, 25(1), էջ 133–145:

¹⁰ Տե՛ս **Hazer, L., & Gredebck, G.** (2023). The effects of war, displacement, and trauma on child development. Humanities and Social Sciences Communications, 10(1), էջ 1–19. **McEwen, B. S., & Stellar, E.** (1993). Stress and the individual: Mechanisms leading to disease. Archives of Internal Medicine, 153(18), էջ 2093–2101:

¹¹ Տե՛ս **McEwen, B. S.** (1998). Protective and damaging effects of stress mediators. New England Journal of Medicine, 338(3), էջ 171–179. **Stewart, J. A.** (2006), էջ 133–145:

տակային սթրեսի հետ: HPA առանցքը կարգավորում է նյարդաէնդոկրին արձագանքը սպառնալիքներին կամ մարտահրավերներին՝ ամբողջ մարմնում մոբիլիզացնելով էներգետիկ ռեսուրսները: Կորտիզոլը այդ առանցքի հիմնական վերջնանյութն է. սթրեսի պայմաններում առողջ անհատները ունենում են կորտիզոլի կտրուկ աճ: HPA առանցքի կրկնվող կամ երկարաժամկետ ակտիվացումը դիսռեգուլյացիա է առաջացնում կորտիզոլի ռեակտիվության մեջ¹²: Հետազոտություններից մեկի համաձայն՝ այն մասնակիցները, որոնք կյանքի ընթացքում ենթարկվել էին ավելի բարձր կուտակային սթրեսի, ցույց էին տվել կորտիզոլի հիպոռեակտիվություն սթրեսային պայմաններում, մինչդեռ ավելի ցածր կուտակային սթրեսի պարագայում դիտվում է կորտիզոլի կորագիծ աճ և հետագա վերականգնում¹³:

Կուտակային սթրեսի հետևանքները

Կուտակային սթրեսի ազդեցության ամբողջական պատկերը ներկայացնելու համար անդրադառնանք դրա հետևանքներին: Եթե սթրեսին անմիջապես հաջորդում է դրան տրվող ֆիզիկական արձագանք, սթրեսը մեծ վնաս չի պատճառում: Բայց երբ սթրեսային արձագանքը չի լիցքաթափվում, սթրեսի բացասական հետևանքները սկսում են կուտակվել մարմնում¹⁴: Եթե կուտակային սթրեսը ժամանակին չի հաղթահարվում, այն կարող է հանգեցնել հոգնածության կամ հյուծվածության, որն էլ իր հերթին կարող է վերածվել սթրեսային խանգարումների ավելի բարդ ձևերի: Կուտակային սթրեսը սրտանոթային տարբեր հիվանդությունների զարգացման գործոն է: Այն կապված է նաև քնի խնդիրների և քրոնիկ առողջական խնդիրների հետ: Սթրեսի ազդեցությամբ հուզական ֆոնը դառնում է ավելի բացասական, վատատեսական, մարդը դառնում է ավելի անհանգիստ, կորցնում է հավատը հաջողության և դրական փոփոխությունների նկատմամբ: Ավելի երկարելու դեպքում սթրեսը կարող է տրամադրության խանգարումների և ընդհուպ դեպրեսիայի հանգեցնել¹⁵: Սթրեսի առկայության պայմաններում տուժում են ուշադրությունը, կենտրոնացումը, աշխատանքային հիշողությունը¹⁶: Վաղ կյանքի սթրեսը կարող է փոփոխել ուղեղի զարգացման հետագիծը: Այն կարող է դանդաղեցնել

¹² Տե՛ս **Mann, F. D., et al.** (2021). Cumulative stress: A general “s” factor in the structure of stress. *Social Science & Medicine*, էջ 289, 114405. **Young, E. S., et al.** (2021). Life stress and cortisol reactivity: An exploratory analysis of the effects of stress exposure across life on HPA-axis functioning. *Development and Psychopathology*, 33(1), էջ 301–312:

¹³ Տե՛ս **Lupien, S. J., et al.** (2009). Effects of stress throughout the lifespan on the brain, behaviour and cognition. *Nature Reviews Neuroscience*, 10(6), էջ 434–445:

¹⁴ Տե՛ս **Гриджин, А. А.** (2020), էջ 87–92:

¹⁵ Տե՛ս **Финогенова, Т. А., и др.** (2023), էջ 41–51. **Щербатых, Ю. В.** (2006), էջ 43. **Mann, F. D., et al.** (2021), էջ 289, 114405:

¹⁶ Տե՛ս **Щербатых, Ю. В.** (2006), էջ 39. **Haight, B. L., et al.** (2023). Combined effects of cumulative stress and daily stressors on daily health. *Health Psychology*, 42(5), էջ 325–334:

ուղեղի զարգացումը¹⁷: Կուտակային սթրեսը արագացնում է կենսաբանական ծերացումը, մեծացնում կենսաբանական տարիքը և մահացությունը¹⁸:

Հայթի և այլոց կատարած հետազոտության շրջանակներում դիտարկվել է, թե արդյոք բարձր կումուլյատիվ սթրեսը ուժեղացնում է առօրյա սթրեսորների բացասական ազդեցությունը առողջության վրա: 2022 չափահաս մասնակիցների հետ իրականացված հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ և՛ բարձր կումուլյատիվ սթրեսը, և՛ առօրյա սթրեսորների առկայությունը մեծացնում էին ֆիզիկական ախտանշանների առաջացման հավանականությունը, դրանց քանակը և արտահայտվածության աստիճանը: Արդյունքում նաև պարզ դարձավ, որ երբ կումուլյատիվ սթրեսի մակարդակը բարձր էր, առօրյա սթրեսորների վնասակար ազդեցությունը առողջության վրա զգալիորեն ուժեղանում էր: Սա նշանակում է, որ երկարաժամկետ սթրեսի բարձր ֆոն ունեցող անձինք զգալիորեն ավելի խոցելի են դառնում առօրյա սթրեսի ազդեցության նկատմամբ¹⁹:

Կուտակային սթրեսը տեղահանվածների շրջանում

Կուտակային սթրեսին նպաստող իրավիճակներից են պատերազմական իրավիճակները: Կյանքին սպառնացող վտանգի երկարատև զգացումը առաջացնում է վախ, սարսափ և անհուսություն: Քաղաքացիական բնակչության շրջանում պատերազմական պայմաններում աստիճանաբար աճում են պասիվությունը, հիասթափությունը և դժգոհությունը, նվազում է նրանց աշխատունակությունը, առաջանում է ֆիզիկական ու մտավոր հյուծվածություն, և նվազում է օրգանիզմի պաշտպանողականությունը: Մշտական լարվածությունը և սպառնալիքի սպասումը թույլ չեն տալիս մարդկանց հանգստանալ: Այդ շարունակական սթրեսածին պայմանները գնալով վատթարացնում են օրգանիզմի դիմակայելու ունակությունը, հանգեցնում սթրեսի կուտակման²⁰:

Ըստ առողջապահության համաշխարհային կազմակերպության 2024 թ. տվյալների՝ 123,2 մլն բռնի տեղահանված անձ է հաշվառվել: Նրանց 71%-ը արտագաղթել է երկրներ, որտեղ մարդիկ ունեն եկամտի միջին կամ ցածր մակարդակ: Լինելով առավել խոցելի խմբում՝ փախստականների և արտագաղթածների շրջանում շատ են հոգեկան խանգարումների դրսևորումները՝ դեպրե-

¹⁷ Sté u **Lupien, S. J., etc.** (2009). Effects of stress throughout the lifespan on the brain, behaviour and cognition. *Nature Reviews Neuroscience*, 10(6), էջ 434–445:

¹⁸ Sté u **Финогенова, Т. А., и др.** (2023). Влияние разных видов стресса на биопсихологический возраст. *Современная зарубежная психология*, 12(3), էջ 41–51. **Mann, F. D., etc.** (2021), էջ 289, 114405:

¹⁹ Sté u **Haight, B. L., etc.** (2023). Combined effects of cumulative stress and daily stressors on daily health. *Health Psychology*, 42(5), էջ 325–334:

²⁰ Sté u **Финогенова, Т. А., и др.** (2023), էջ 41–51:

սիա, տազնապայնություն, հետտրավմատիկ սթրեսային խանգարում, ինքնասպանության միտումներ և պսիխոզներ²¹: Նրանք ենթարկվում են սթրեսորների ինչպես նախամիգրացիոն, այնպես էլ հետմիգրացիոն շրջանում:

Նախամիգրացիոն շրջանում սթրեսորներ են պատերազմի փորձառությունը (պատերազմից տուժած տարածաշրջանում լինելը, մարտական գործողություններին ակնատես լինելը, հրետակոծությունը կամ ռաբակոծությունը, կյանքի սպառնալիքի առկայությունը, բռնի տեղահանումը, ընտանիքի անդամի կամ մտերիմի մահը, դիակներ տեսնելը, գերեվարության ակնատես կամ զոհ դառնալը, բռնության ակնատես կամ զոհ դառնալը), բազային պահանջումները (ուտելիքի և ջրի սակավությունը կամ բացակայությունը, տանիքի բացակայությունը, նյութական այլ կորուստներ) և ընտանեկան հարաբերությունները (ընտանիքից հարկադրված բաժանում)²²:

Հետմիգրացիոն շրջանին են դասվում լեզվի հետ կապված դժվարությունները, սոցիալական անբավարար աջակցությունը, հեռու գտնվող մտերիմների համար անհանգստությունները: Դժվարություններից են նաև աշխատանք, կացարան չունենալը, խտրականությունը, մշակութային, ընտանեկան դժվարությունները, ֆինանսական օգնության սահմանափակ լինելը: Հետարտագաղթյալ դժվարությունները կարող են սրել առաջնային տրավմատիկ իրողությունների ազդեցությունը: Այդ ամենը հանգեցնում է սթրեսի կուտակման:

Սթրեսի ազդեցության ծավալը կարող է պայմանավորված լինել ինչպես անհատի բնութագրերով (գենետիկ նախատրամադրվածություն, հաղթահարման ռազմավարությունների ձև, հուզական կարգավորման հմտություններ, վաղ մանկության փորձ), այնպես էլ սթրեսորի բնույթով: Իրենց ազդեցությունն ունեն ընտանեկան, սոցիալական, մշակութային գործոնները:

Ընտանիքի անդամները կարող են տարբեր կերպ արձագանքել պատերազմի և արտագաղթի իրողություններին՝ կախված նրանց տարիքից, սեռից, ընտանիքի կառուցվածքում նրանց դերից և այլն: Պատերազմի, տեղահանության և վերաբնակեցման հետևանքները ընտանիքում կարող են հանգեցնել երիտասարդների դերի և պատասխանատվությունների փոփոխության: Վերաբնակեցման ընթացքում երեխաները որպես կանոն ավելի արագ են սովորում ընդունող երկրի լեզուն, քան նրանց ծնողները: Արդյունքում կարող է առաջանալ «դերի շրջվածություն», որի դեպքում ընտանիքի անունից պետական կառույցների հետ բանակցողը լինում են ոչ թե ծնողները, այլ երեխաները, և նրանք ստանձնում են այնպիսի առաջնորդական դերեր, որոնք սովորաբար կատարում են ծնողները:

Սոցիալական գործոնների թվին են դասվում համայնքային ռեսուրսները և համայնքի աջակցությունը: Սոցիալական ու աշխատանքային պայմանները և

²¹ Տե՛ս <https://www.who.int/ru/news-room/fact-sheets/detail/refugee-and-migrant-mental-health>

²² Տե՛ս **Hazer, L., & Gredebek, G.** (2023). The effects of war, displacement, and trauma on child development. *Humanities and Social Sciences Communications*, 10(1), էջ 1–19:

սոցիալական նեղ շրջանը կարող են ազդել սթրեսային արձագանքի ձևավորման վրա:

Մշակութային մակարդակի գործոններ են հոգևորությունը, մշակութային ինքնությունը և մշակութային ավանդույթները²³:

Կուտակային սթրեսի չափման առանձնահատկությունները

Կուտակային սթրեսի տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն բազմաբաղադրիչ և ժամանակի ընթացքում կուտակվող երևույթ է և չի սահմանափակվում միայն կյանքի առանձին իրադարձությունների ազդեցությամբ: Այն ձևավորվում է տարբեր ոլորտներում սթրեսորների համատեղ ազդեցության, կրկնվող սթրեսորների կուտակման, հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների արդյունքում և արտահայտվում է ինչպես արտաքին միջավայրի պայմանների, այնպես էլ ներքին կարգավորման համակարգերի մակարդակում:

Մի կողմից, կուտակային սթրեսը պայմանավորված է սոցիալական, ֆինանսական, աշխատանքային, հարաբերությունների և այլ ոլորտներում առկա սթրեսորների կուտակմամբ, մյուս կողմից՝ վարքային, ճանաչողական, հուզական, գենետիկական առանձնահատկություններով: Այսպիսով, կուտակային սթրեսն ունի երկկողմ կառուցվածք.

- Արտաքին ազդեցություններ՝ սոցիալական միջավայրի առանձնահատկություններ, աշխատանքային, ֆինանսական պայմաններ, ընտանեկան և միջանձնային հարաբերություններ:

- Ներքին արձագանքներ՝ կոգնիտիվ առանձնահատկություններ՝ ընկալում, գնահատում, մտածողություն, հուզական ինքնակարգավորում, ինքնագնահատական, ֆիզիկական առողջություն, հոգեֆիզիոլոգիական ցուցանիշներ:

Վերլուծված տեսական դրույթները օգնում են հանգելու մի շարք հետևությունների: Կուտակային սթրեսը բռնի տեղահանվածների շրջանում՝

1. չի սահմանափակվում կենսագործունեության մեկ ոլորտով, այլ բարդ և բազմամակարդակ բնույթ ունի,
2. կուտակվում և զարգանում է ժամանակի ընթացքում,
3. ազդեցություն ունի հոգեկան, ֆիզիկական և սոցիալական ֆունցիոնալության վրա. արտահայտվում է ինչպես արտաքին սթրեսորների մակարդակում, այնպես էլ հոգեբանական և ֆիզիոլոգիական ներքին արձագանքների մակարդակում,
4. պահանջում է ախտորոշիչ և վերականգնողական համալիր մոտեցում:

²³ Տե՛ս **Щербатов, Ю. В.** (2006), էջ 78-89. **Denov, M., etc.** (2019). Intergenerational resilience in families affected by war, displacement, and migration: “It runs in the family”. *Journal of Family Social Work*, 22(1), էջ 17-45. **Fondacaro K., Mazulla E.** (2018). The Chronic Traumatic Stress Framework: A conceptual model to guide empirical investigation and mental health treatment for refugees and survivors of torture. *Torture Journal*, 28(1):

Այն կառուցվածքային, ոլորտային և ժամանակային ինտեգրացիայի արդյունք է: Հետևաբար, դրա գնահատումը չի կարող սահմանափակվել միայն կյանքի իրադարձությունների մեխանիկական հաշվարկով: Անհրաժեշտ է չափման այնպիսի մոտեցում, որը կարտացոլի ինչպես արտաքին սթրեսորների բազմաոլորտային կուտակումը, այնպես էլ դրանց ներքին վերամշակման և ազդեցության մեխանիզմները:

Կուտակային սթրեսը սովորաբար գնահատվում է՝ համատեղելով քրոնիկ տարբեր սթրեսորների ազդեցության չափանիշներից ստացված ստանդարտացված արդյունքները և այդ ազդեցությունների ընկալումները՝ որպես դժվարություն, սպառնալիք կամ սթրես: Հարաբերությունները, ֆինանսական, աշխատանքային, ընտանեկան և այլ բացասական ազդեցությունները կազմում են այն ոլորտները, որոնցից մի քանիսում սթրեսային ազդեցությունը հանգեցնում է կուտակային սթրեսի հնարավոր առաջացման²⁴:

Սթրեսի չափման լայնորեն կիրառվող գործիքներից շատերը իրադարձակենտրոն են: Կյանքի իրադարձություններից կախված՝ սթրեսի մակարդակի չափման նպատակով կիրառվող հիմնական գործիք է Հոլմսի և Ռահեի մեթոդիկան: Այն հիմնված է քանակական հաշվարկի վրա և ենթադրում է, որ անհատի կյանքում տեղի ունեցող փոփոխությունների ընդհանուր միավորային գումարը արտացոլում է սթրեսային ծանրաբեռնվածությունը²⁵: Այս մեթոդիկան համապատասխանում է վերոնշյալ այն գաղափարին, որ մարդու կյանքում բոլոր սթրեսային իրավիճակների ընդհանուր քանակը որոշում է սթրեսի ընդհանուր քանակը: Սակայն կուտակային սթրեսի համատեքստում այս մոտեցումը մի շարք սահմանափակումներ ունի:

Մեթոդիկան ներառում է իրադարձություններ՝ կապված ընտանիքի, աշխատանքի, առողջության և այլ ոլորտների հետ, սակայն այն չափում է միայն արտաքին գործոնների ազդեցությունը՝ դուրս թողնելով անհատական առանձնահատկությունները, ընկալման տարբերությունները, ներքին վերամշակման առանձնահատկությունները: Այն նաև չի անդրադառնում սթրեսորի տևողության և կրկնելիության վրա, քանի որ հնարավոր է, որ իրադարձությունը ոչ մեկ անգամ է տեղի ունեցել: Չնայած որոշ սահմանափակումներին՝ այն ներառում է իրադարձությունների բազմաոլորտ ցանկ և մինչ օրս թարմացվում և կիրառվում է հետազոտություններում, քանի որ արտաքին գնահատման հուսալի գործիք է:

Մինևույն ժամանակ, կուտակային սթրեսի ամբողջական պատկերի ստացման համար անհրաժեշտ է կիրառել և անգամ ստեղծել մեթոդիկաներ, որոնք,

²⁴ Տե՛ս **Щербатов, Ю. В.** (2006), էջ 93:

²⁵ Տե՛ս **Ավանեսյան, Հ. և այլք** (2024): Հոգեբանական գնահատման գործիքակազմ: Ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 114-117 էջեր:

արտաքին ազդեցություններին զուգահեռ, ներառում են նաև ներքին առանձնահատկությունները, ավելի համակարգված և կառուցվածքավորված են: Չափման նոր մոտեցումը պիտի

- պահպանի կենսահոգեւոցիալական ամբողջականությունը (կենսահոգեւոցիալական մոդել)՝ ներառելով ինչպես նյարդաֆիզիոլոգիական փոփոխությունները, հետտրավմատիկ սթրեսային խանգարումը, դեպրեսիան, տագնապայնությունը, այնպես էլ սոցիալական գործոնները (կարգավիճակի կորուստ, մեկուսացում, իրավական անորոշություն)²⁶,

- հաշվի առնի սթրեսորների ազդեցության ժամանակագրական դինամիկան՝ ընդգրկելով նախամիզոստիկ, միզոստիկ և հետմիզոստիկ փուլերը,

- ունենա միջառարկայական բնույթ՝ ինտեգրելով հոգեբուժությունը, առողջապահությունը, նյարդաբանությունը, սոցիալական գործոնները,

- ցուցաբերի մշակութային և համատեքստային զգայունություն՝ հաշվի առնելով մշակութային նորմերը, կրոնական առանձնահատկությունները, սեռային դերերը, սոցիալական կարգավիճակը, ադապտացված լինի հետազոտվողների լեզվին և մշակույթին,

- հիմնվի միջազգային ստանդարտների և արդի գիտական ուսումնասիրությունների վրա:

Բռնի տեղահանված անձանց շրջանում կուտակային սթրեսի միջառարկայական գնահատումը անհրաժեշտություն է: Նրա տեսական հիմքը կենսահոգեւոցիալական հարացույցն է, իսկ գործնական իրականացումը՝ հոգեբանական, սոցիալական, բժշկական դիագնոստիկ մեթոդների ինտեգրացիան:

ГРАНТ АВАНЕСЯН, ДИАНА АВТАНДИЛЯН, АНАИТ АМИРДЖАНИЯН* – *Методологические принципы необходимости междисциплинарной оценки кумулятивного стресса у насильственно перемещенных лиц.* – Данная статья посвящена анализу характеристик кумулятивного стресса у насильственно перемещенных лиц и необходимости его измерения в рамках биопсихосоциального подхода. Кумулятивный стресс является результатом сочетания множественных, взаимосвязанных и накапливающихся во времени стрессоров. Он одновременно воздействует на биологическую, психологическую и социальную системы индивида. Проблема перемещения приобретает все большую актуальность в настоящее время. Перемещение, в силу своей специфики, является важным фактором, способствующим возникновению кумулятивного стресса. В условиях вынужденного перемещения стрессовые переживания не только многослойны, но и непрерывны, стрессогенные факторы присутствуют как во время перемещения, так и до и после него, в результате чего постепенно формируется истощение адаптивных ресурсов, возникает риск функциональных изменений. Кумулятивный стресс характеризуется многосекторальным воздействием, временной динамикой и взаимодействием внешних и внутренних факторов. Таким образом, оценка кумулятивного стресса, особенно в случае насильственно перемещенных лиц, не может ограничиваться одним инструментом измерения, учитывать

²⁶ Sliu Lugg, W. (2022). The biopsychosocial model—history, controversy and Engel. *Australasian Psychiatry*, 30(1), էջ 55-59:

* Исследование проведено в рамках грантовой программы «Стимулирование научной продуктивности» 25RG-5A146

только одну среду жизненной деятельности человека или носить исключительно кумулятивный характер. Предлагается специфический, систематический и комплексный подход к измерению, который будет включать в себя интегрированную оценку психологических, физиологических и социальных факторов.

Ключевые слова: кумулятивный стресс, личность, насильственно перемещённый, оценка, гомеостаз, аллостаз, аллостатическая нагрузка

HRANT AVANESYAN, DIANA AVTANDILYAN, ANAHIT AMIRJANYAN* – *Methodological Principles for the Need for an Interdisciplinary Assessment of Cumulative Stress in Forcibly Displaced Persons.* – This article is aimed at analyzing the characteristics of cumulative stress among forcibly displaced persons and the need to measure it within the framework of a biopsychosocial approach. Cumulative stress is the result of a combination of multiple, interconnected and time-accumulating stressors. It simultaneously affects the biological, psychological and social systems of an individual. The problem of displacement is becoming more relevant in the current period. Displacement, due to its specificities, is an important factor contributing to the emergence of cumulative stress. In conditions of forced displacement, stressful experiences are not only multi-layered, but also continuous, stress-causing factors are present both during displacement, before and after it, as a result of which the depletion of adaptive resources is gradually formed, the risk of functional changes occurs. Cumulative stress is characterized by multi-sectoral impact, temporal dynamics, and the interaction of external and internal factors. Therefore, the assessment of cumulative stress, especially in the case of forcibly displaced persons, cannot be limited to a single measurement tool, take into account only one environment of an individual's life activity, or have a purely cumulative nature. The need for a specific, systematic, and combined measurement approach is proposed, which will include an integrated assessment of psychological, physiological, and social factors.

Key words: cumulative stress, person, forcibly displaced, assessment, homeostasis, allostasis, allostatic load

Օգտագործված գրականություն // References

- Ավանեսյան, Հ., Գալստյան, Ա., Պապոյան, Վ., Սարգսյան, Դ., Հովհաննիսյան, Ս., Պապոյան, Ս. (2024). Հոգեբանական գնահատման գործիքակազմ: Ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 236 էջ: DOI:10.46991/YSUPH/9785808426955
- Абитов И.Р., Акбирова Р.Р. (2022). Психология стресса: учебно-методическое пособие. Казань: НОУ ДПО «Центр социально-гуманитарного образования», 126 с. | Abitov I.R., Akbirova R.R. (2022). Psikhologiya stressa: uchebno-metodicheskoye posobiye. Kazan': NOU DPO «Tsentr sotsial'no-gumanitarnogo obrazovaniya», 126 s.
- Гриджин, А. А. (2020). Кумулятивный стресс как источник возникновения утомленности или усталости. Общество: социология, психология, педагогика, (6), сс. 87–92. | Gridchin, A. A. (2020). Kumulyativnyy stress kak istochnik vozniknoveniya utomlennosti ili ustalosti. Obshchestvo: sotsiologiya, psikhologiya, pedagogika, (6), ss. 87–92.
- Мельникова, М. Л. (2018). Психология стресса: теория и практика: учебно-методическое пособие / Урал. гос. пед. ун-т; науч. ред. Л. А. Максимова. Екатеринбург, 112 с. | Mel'nikova, M. L. (2018). Psikhologiya stressa: teoriya i praktika: uchebno-metodicheskoye posobiye / Ural. gos. ped. un-t; nauch. red. L. A. Maksimova. Yekaterinburg, 112 s.
- Финогенова, Т. А., Березина, Т. Н., Литвинова, А. В., & Рыбцов, С. А. (2023). Влияние разных видов стресса на биопсихологический возраст. Современная зарубежная психология, 12(3), сс. 41–51. | Finogenova, T. A., Berezina, T. N., Litvinova, A. V., & Rybtsov, S. A. (2023).

* The research was conducted within the framework of the grant program “Promotion of Scientific Productivity” 25RG-5A146

- Vliyaniye raznykh vidov stressa na biopsikhologicheskiiy vozrast. *Sovremennaya zarubezhnaya psikhologiya*, 12(3), ss. 41–51. DOI: <https://doi.org/10.17759/jmfp.2023120304>
- Щербатых, Ю. В. (2006). Психология стресса и методы коррекции. СПб.: Питер, 256 с. | Shcherbatykh, YU. V. (2006). *Psikhologiya stressa i metody korrektsii*. SPb.: Piter, 256 s.
- Anisman, H. & Merali, Z. (1999). Understanding Stress: Characteristics and Caveats. *Alcohol Research & Health: The Journal of the National Institute on Alcohol Abuse and Alcoholism*, 23, pp. 241–249.
- Denov, M., Fennig, M., Rabiau, M. A., & Shevell, M. C. (2019). Intergenerational resilience in families affected by war, displacement, and migration: “It runs in the family”. *Journal of Family Social Work*, 22(1), pp. 17–45. DOI:10.1080/10522158.2019.1546810
- Fondacaro K., Mazulla E. (2018). The Chronic Traumatic Stress Framework: A conceptual model to guide empirical investigation and mental health treatment for refugees and survivors of torture. *Torture Journal*, 28(1). DOI: <https://doi.org/10.7146/torture.v28i1.105477>
- Haight, B. L., Peddie, L., Crosswell, A. D., Hives, B. A., Almeida, D. M., & Puterman, E. (2023). Combined effects of cumulative stress and daily stressors on daily health. *Health Psychology*, 42(5), pp. 325–334. DOI: <https://doi.org/10.1037/hea0001281>
- Hazer, L., & Gredebek, G. (2023). The effects of war, displacement, and trauma on child development. *Humanities and Social Sciences Communications*, 10(1), pp. 1–19. DOI: <https://doi.org/10.1057/s41599-023-02438-8>
- Lugg, W. (2022). The biopsychosocial model—history, controversy and Engel. *Australasian Psychiatry*, 30(1), pp. 55–59. DOI: <https://doi.org/10.1177/10398562211037333>
- Lupien, S. J., McEwen, B. S., Gunnar, M. R., & Heim, C. (2009). Effects of stress throughout the lifespan on the brain, behaviour and cognition. *Nature Reviews Neuroscience*, 10(6), pp. 434–445. DOI: <https://doi.org/10.1038/nrn2639>
- Mann, F. D., Cuevas, A. G., & Krueger, R. F. (2021). Cumulative stress: A general “s” factor in the structure of stress. *Social Science & Medicine*, p. 289, 114405. DOI: <https://doi.org/10.1016/j.socscimed.2021.114405>
- McEwen, B. S., & Stellar, E. (1993). Stress and the individual: Mechanisms leading to disease. *Archives of Internal Medicine*, 153(18), pp. 2093–2101. DOI: 10.1001/archinte.1993.00410180039004
- McEwen, B. S. (1998). Protective and damaging effects of stress mediators. *New England Journal of Medicine*, 338(3), pp. 171–179. DOI: 10.1056/NEJM199801153380307
- Stewart, J. A. (2006). The detrimental effects of allostasis: allostatic load as a measure of cumulative stress. *Journal of Physiological Anthropology*, 25(1), pp. 133–145. DOI: <https://doi.org/10.2114/jpa2.25.133>
- Young, E. S., Doom, J. R., Farrell, A. K., Carlson, E. A., Englund, M. M., Miller, G. E., & Simpson, J. A. (2021). Life stress and cortisol reactivity: An exploratory analysis of the effects of stress exposure across life on HPA-axis functioning. *Development and Psychopathology*, 33(1), pp. 301–312. DOI: <https://doi.org/10.1017/S0954579419001779>
- URL: <https://www.who.int/ru/news-room/fact-sheets/detail/refugee-and-migrant-mental-health> (հասանելի է՝ 03.03.2026)
- URL: <https://dictionary.apa.org/stress> (հասանելի է՝ 03.03.2026)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՈՒՄ

ԷԼԻՆԱ ԱՍՐԻՅԱՆ^{ID}, ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ^{ID}
Երևանի պետական համալսարան

Հոդվածում ներկայացվում են քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրման տարբեր մոտեցումներ, շեշտադրվում դրանց բազմաչափ բնույթը: Հաշվի առնելով քաղաքական դիրքորոշումների հետազոտման վալիդացված մեթոդիկաների խիստ սահմանափակ լինելը և, մասնավորապես, հայալեզու գործիքակազմի բացակայությունը, ինչպես նաև տվյալ ոլորտի համակարգային և համակողմանի ուսումնասիրման կարևորությունը՝ հեղինակները մշակել և սույն հոդվածում առաջարկում են քաղաքական դիրքորոշումների չափման հեղինակային մեթոդիկա, որի հիմնական նպատակը քաղաքական դիրքորոշումների ձևավորման միտումների գնահատումն ու դրանց դրսևորման առանձնահատկությունների բացահայտումն է: Մեթոդիկան մշակվել է Ս. Աշի կոնֆորմիզմի տեսության և Դ. Կանեմանի ու Ա. Տվերսկուի հեռանկարի տեսության հիմնադրույթների և սկզբունքների ինտեգրման հիման վրա:

Հարցարանի մշակումը իրականացվել է երեք հիմնական փուլերի միջոցով՝ տեսական վերլուծություն, փորձագիտական գնահատում և պիլոտային հետազոտություն: Հետազոտության պիլոտային փուլին մասնակցել է 52 հետազոտվող, որի արդյունքները վկայում են սանդղակների բարձր ներքին համաձայնության և հուսալիության մասին. կոնֆորմիզմի սանդղակի համար Կրոնբախի ալֆան կազմել է $\alpha = 0.871$, իսկ ռացիոնալության սանդղակի համար՝ $\alpha = 0.814$: Վերլուծության արդյունքում ստացված տվյալների հիման վրա քվարտիլային վերլուծությամբ սահմանվել են կոնֆորմիզմի և ռացիոնալության մակարդակների մեկնաբանման շեմերը:

* **Էլինա Ասրիյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ

Асриян Элина – кандидат психологических наук, доцент кафедры общей психологии ЕГУ

Elina Asriyan – Candidate of Psychological Sciences, Associate Professor at the Chair of General Psychology, YSU

Էլ. փոստ՝ elina.asriyan@ysu.am ORCID ID:<https://orcid.org/0000-0003-4970-3527>

** **Հասմիկ Սարգսյան** – ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասպիրանտ

Асмик Саргсян – аспирант кафедры общей психологии ЕГУ

Hasmik Sargsyan – PhD student, Chair of General Psychology, YSU

Էլ. փոստ՝ hasmik.sargsyan@ysu.am ORCID ID:<https://orcid.org/0009-0007-2453-5332>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 16.03.2026

Գրախոսվել է՝ 23.03.2026

Հաստատվել է՝ 02.04.2026

© The Author(s) 2026

Բանալի բառեր – քաղաքական դիրքորոշումներ, ռացիոնալություն, կոնֆորմիզմ, կոնֆորմիզմի տեսություն, հեռանկարի տեսություն

Քաղաքական դիրքորոշումների խնդիրը մշտապես գտնվել է գիտական ուսումնասիրությունների հետաքրքրության շրջանակում, սակայն առանձնահատուկ ուշադրության է արժանացել դրանց ձևավորման վրա ազդող հոգեբանական գործոնների բացահայտումը: Հոգեբանության մեջ դիրքորոշումների ուսումնասիրությունը ընդգրկում է տարբեր ուղղություններ: Ներկայումս, օրինակ, մեծ տարածում են գտել ինչպես սոցիալ-հոգեբանական, այնպես էլ ներդոգիտական ուսումնասիրությունները, որոնք միտված են դուրս բերելու անձի դիրքորոշումների բնույթը որպես որոշում կայացնելու հիմք¹:

2003 թվականին Ջ. Ջոսթի և այլ հեղինակների կողմից առաջարկվեց քաղաքական կողմնորոշումը նկարագրող ինտեգրատիվ մոդել: Մոդելի համաձայն՝ պահպանողական կողմնորոշումը պայմանավորված է կոգնիտիվ, մոտիվացիոն և սոցիալական գործոնների փոխազդեցությամբ, իսկ դրանց հիմքում հաճախ ընկած է սպառնալիքի, վախի և անորոշության կառավարման անհրաժեշտությունը²:

Չնայած դիրքորոշումների ուսումնասիրման վերաբերյալ հետազոտությունների բազմազանությանը, հասկացության սահմանումների ընդգրկուն բնույթին՝ այնուամենայնիվ քաղաքական դիրքորոշումների հետազոտման համար նախատեսված մեթոդիկաների առկայությունը խիստ սահմանափակ է, հատկապես՝ հայալեզու գործիքակազմը: Ուստի, հաշվի առնելով այս հանգամանքը, մեր առջև խնդիր ենք դրել ձևավորել հուսալի, վալիդ գործիք, որը միտված կլինի քաղաքական դիրքորոշումների չափմանը և հետազոտմանը:

Նպատակ: Մշակել վալիդ և հուսալի մեթոդիկա, որը կիրառական նշանակություն կունենա քաղաքական դիրքորոշումների հետազոտության ուսումնասիրությունների համար:

Տեսամեթոդաբանական հիմք: Մեթոդիկայի հարցերի ձևավորման տեսական հիմքը Ս. Աշի կոնֆորմիզմի և Դ. Կանեմանի ու Ա. Տվերսկու հեռանկարի տեսություններն են³:

Խնդրի տեսական վերլուծություն: Դիրքորոշումների մասին պատկերացումները ձևավորվել են վաղ ժամանակներից և լայնորեն ուսումնասիրվել են

¹ Տե՛ս **Kanai, R., Feilden, T., Firth, C., & Rees, G.** (2011). Political orientations are correlated with brain structure in young adults. *Current Biology*, 21, 677–680. <https://doi.org/10.1016/j.cub.2011.03.017>: Տե՛ս նաև՝ **Stanley, L.** (2010). To the letter: Thomas and Znaniecki's *The Polish Peasant and writing a life*, sociologically. *Life Writing*, 7(2), 139–151. <https://doi.org/10.1080/14484520903445271>

² Տե՛ս **Jost, J. T., Glaser, J., Kruglanski, A. W., & Sulloway, F. J.** (2003). Political conservatism as motivated social cognition. *Psychological Bulletin*, 129(3), 339–375. <https://doi.org/10.1037/0033-2909.129.3.339>:

³ Տե՛ս **Asch, S. E.** (1951). Effects of group pressure upon the modification and distortion of judgments. In H. Guetzkow (Ed.), *Groups, leadership and men: Research in human relations* (pp. 177–190). Carnegie Press. Տե՛ս նաև՝ **Kahneman, D., & Tversky, A.** (1979). Prospect theory: An analysis of decision under risk. *Econometrica*, 47(2), 263–291:

փիլիսոփայության, հոգեբանության, սոցիոլոգիայի և հարակից գիտակարգերում: Ըստ այդմ՝ անգլիալեզու գրականության մեջ հանդիպում են դիրքորոշումների երկու հիմնական հասկացություններ՝ *attitude* և *set*: Ըստ Ուզնաձեի՝ նախատրամադրվածությունը (*set*) ունի ֆիզիոլոգիական բնույթ, իսկ դիրքորոշումները բնույթով սոցիալական են: Ուզնաձեն, սակայն, չի սահմանափակվում դիրքորոշումների սահմանման նեղ տրամաբանությամբ. ըստ նրա՝ դիրքորոշումները բովանդակային շատ ավելի լայն շրջանակ ունեն և ներառում են ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ սոցիալական հիմքեր⁴: Հարկ է նշել, որ սոցիոլոգիայում առաջին անգամ ատիտյուդ (*attitude*) տերմինը կիրառել են Վ. Թոմասը և Ֆ. Ջաննեցկին: Ըստ նրանց՝ ատիտյուդները ունեն սոցիալական բնույթ և հաճախ ուսումնասիրվել են արժեքների (*value*) հետ, թեպետ այս հասկացությունները միմյանցից էականորեն տարբերվում են⁵:

Հղում տալով նեյրոգիտական մի շարք հետազոտությունների արդյունքներին, որոնք միտված են դիրքորոշումների ձևավորման և որոշման կայացման գործընթացների բացահայտմանը՝ հարկ է նշել, որ առանձնապես արդիական են դիրքորոշումների լիբերալ-ազատական և կոնսերվատիվ հակվածությունների ուսումնասիրմանը միտված հետազոտությունները: Մասնավորապես, նեյրոգիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ անհատների դիրքորոշման և որոշման կայացման առանձնահատկությունները պայմանավորված են ոչ միայն սոցիալական ազդեցություններով, այլև ֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Այս համատեքստում կարևոր են Ռյոտա Կանայի հետազոտության արդյունքները, որոնց համաձայն՝ քաղաքական և սոցիալական դիրքորոշումների տարբերությունները կապվում են ուղեղի որոշ կառուցվածքների ծավալի հետ⁶:

Մասնավորապես, պահպանողական հակվածություններ ունեցող անձանց շրջանում արձանագրվել է նշաձև մարմնի (*amygdala*) հարաբերականորեն մեծ ծավալ, որը կապվում է վախի, սպառնալիքի ընկալման և սոցիալական անորոշությունից խուսափելու հետ, մինչդեռ լիբերալ դիրքորոշումներին առավել հակված անձանց շրջանում ավելի զարգացած է առաջնային գոտկային կեղևը (*anterior cingulate cortex*), որը կապված է կոգնիտիվ ճկունության, անորոշության հանդեպ տոլերանտության բարձր մակարդակի և ոչ ստանդարտ որոշումների կայացման հետ: Նմանատիպ արդյունքներ են ներկայացված նաև Ամոնդիոյի ուսումնասիրությունում, որտեղ ցույց է տրվում, որ լիբերալ և պահպանողական դիրքորոշումներ ունեցող անձինք տարբերվում են կոգնիտիվ վերահսկողության և անորոշության հանդեպ տոլերանտության նեյրոֆիզիոլոգիական

⁴ Տե՛ս **Tetradze, P.** (2022). Alternate unconscious: uznadze's theory of set.

<https://primordialsoup.info/articles/alternate-unconscious-uznadzes-theory-of-set>

⁵ Տե՛ս **Hermanowicz, J. C.** (2019). Change – social and personal: Thomas and Znaniecki's The Polish Peasant for the study of present-day change in global higher education. *Ruch Prawniczy, Ekonomiczny i Socjologiczny*, LXXXI(4), 51–68. <https://doi.org/10.18290/rpeis.2019.81.4-4>

⁶ Տե՛ս **Kanai, R., Feilden, T., Firth, C., & Rees, G.** (2011). Political orientations are correlated with brain structure in young adults. *Current Biology*, 21, 677–680. <https://doi.org/10.1016/j.cub.2011.03.017>

ցուցանիշներով: Այս հետազոտությունները փաստում են, որ դիրքորոշումների ձևավորումը ներառում է ինչպես սոցիալական ազդակների նկատմամբ զգայունությունը, այնպես էլ որոշման կայացման կոգնիտիվ և հուզական նախատրամադրվածությունները: Այսպիսով, ներկայացված նեյրոգիտական ուսումնասիրությունները լրացուցիչ հիմք են տալիս քաղաքական դիրքորոշումը դիտարկելու որպես բազմաչափ և բազմազոր զանգվածային հասկացություն⁷:

Սոցիալ-հոգեբանական համատեքստում անհատների կոնֆորմիստական դիրքորոշումները և խմբային վարքը ուսումնասիրել է Ս. Աշը, ով իրականացրել է բազմաթիվ գիտափորձեր՝ միտված սոցիալական ազդեցության ներքո անձի վարքային փոփոխությունների դուրսբերմանը, որոնք տեղի են ունենում, երբ անձը տարբեր պատճառներով համաձայնեցնում է իր տեսակետները մեծամասնության հետ: Ըստ Ս. Գոշինի, Դ. Գրիգորևի և Պ. Սորոկինի իրականացրած հետազոտության արդյունքների՝ երիտասարդները ավելի քիչ են հակված կոնֆորմիստական վարքի, քան ավելի հասուն սերունդը: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ երիտասարդների մեջ ինքնուրույնության դրսևորումը բացասական նշանակալի կապ ունի կոնֆորմիզմի դրսևորման հետ, իսկ այլոց կողմից ընդունելի լինելու պահանջը ունի դրական նշանակալիություն⁸:

Տեսական վերլուծությունը ակնհայտ է դարձնում այն փաստը, որ քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացում կոնֆորմիզմը ունի էական նշանակություն: Դիրքորոշումների ձևավորման համատեքստում առավելապես կարևորվում են կոնֆորմիզմի տեսության հետևյալ սկզբունքները.

✓ Սոցիալական ազդեցություն: Ըստ այս դրույթի՝ անհատները կարող են փոխել իրենց համոզմունքները՝ համապատասխանեցնելով դրանք նշանակալի խմբի կամ հասարակության համոզմունքներին:

✓ Խմբային ճնշում: Անձի վարքի փոփոխություն, որն առաջանում է ի պատասխան խմբի կողմից կիրառված ճնշման:

✓ Նորմեր և ակնկալիքներ: Այս սկզբունքը պայմանավորված է սոցիալական նորմերին հետևելու և ուրիշների ակնկալիքները բավարարելու ցանկությամբ՝ հաշվի առնելով, որ անհատները հիմնականում խուսափում են քննադատական հետադարձ կապից: Սոցիալական ցանկալիության ֆենոմենը հաճախ պահանջում է համաձայնվել խմբի հետ, նույնիսկ եթե խումբը ակնհայտորեն կատարել է սխալ դատողություն⁹:

⁷ Տե՛ս **Amodio, D. M., Jost, J. T., Master, S. L., & Yee, C. M.** (2007). Neurocognitive correlates of liberalism and conservatism. *Nature Neuroscience*, 10(10), 1246–1247:

⁸ Տե՛ս **Goshin, M., Grigoryev, D., & Sorokin, P.** (2025). Adolescent agency and behavioral characteristics: Conformity, problematic behavior, need for cognition. *Frontiers in Psychology*, 16, Article 1410170. <https://doi.org/10.3389/fpsyg.2025.1410170>

⁹ Տե՛ս **Asch, S. E.** (1951). Effects of group pressure upon the modification and distortion of judgments. In H. Guetzkow (Ed.), *Groups, leadership and men: Research in human relations* (էջ 177–190). Carnegie Press.

Քանի որ քաղաքական դիրքորոշումների առկայությունը պայմանավորում է համապատասխան որոշումների կայացումը, դիտարկել ենք նաև Դ. Կանեմանի և Ա. Տվերսկու հեռանկարի տեսությունը, որը նկարագրում և բացատրում է որոշում կայացնելու գործընթացը: Հեռանկարի տեսության հիմնական գաղափարն այն է, որ մարդիկ տարբեր կերպ են որոշումներ կայացնում շահույթ և կորուստ ենթադրող իրավիճակներում: Կորուստ ենթադրող իրավիճակներում նրանք ավելի հակված են ռիսկային որոշումների, իսկ շահույթ ենթադրող իրավիճակներում հակված են խուսափելու ռիսկից: Սա տարբերվում է դասական ռացիոնալ ընտրության մոտեցումից, որում ենթադրվում է, որ մարդիկ միշտ խուսափում են ռիսկից և իրենց ընտրությունները հիմնավորում են վերջնական արդյունքներով¹⁰: Որոշում կայացնելու այս առանձնահատկությունները քաղաքական վարքում կարող են դրսևորվել նույնիսկ ավելի ուժեղ, քան տնտեսական որոշումների պարագայում¹¹:

Հարցարանը կազմելիս օգտագործվել են հեռանկարի տեսության հետևյալ հիմնադրույթները.

- ✓ Կորուստ - շահույթ ասիմետրիա (Loss Aversion) - կորուստները սուբյեկտիվորեն ավելի ծանր են ընկալվում, քան նույն չափի շահույթները, ինչը պայմանավորում է ռիսկից խուսափող վարք:
- ✓ Հենման կետ / համեմատական ելակետ (Reference Point) - անձը հակված է գնահատելու արդյունքները ոչ թե բացարձակ արժեքով, այլ դրանց «սկզբնական» կետի համեմատությամբ:
- ✓ Ափսոսանքից խուսափում (Regret avoidance) - անձը հակված է խուսափելու ռիսկ պարունակող որոշումներից, քանի որ կարող է սխալվել:
- ✓ Որոշակիության էֆեկտ (Certainty Effect) - ըստ այս դրույթի՝ անձը սովորաբար նախընտրում է լիովին երաշխավորված արդյունքը, նույնիսկ այն դեպքում, երբ ռիսկ պարունակող տարբերակը կարող է ապահովել ավելի մեծ շահույթ:
- ✓ Ֆրեյմային էֆեկտ (Framing Effect) - ըստ այս դրույթի՝ որոշում կայացնելու վրա մեծ ազդեցություն ունի տեղեկատվության ներկայացման ձևը: Եթե տեղեկատվությունը ներկայացվում է դրական ֆրեյմով, և շեշտադրվում է շահույթը, ապա անհատները հակված են ընտրելու ավելի ապահով, ռիսկից խուսափող տարբերակը: Իսկ երբ նույն տեղեկատվությունը ներկայացվում է բացասական ֆրեյմով, և շեշտադրվում են հնարավոր կորուստները, մեծանում է ռիսկային ընտրության հավանականությունը: Թեև տեղեկատվության բովանդակային արդյունքը նույնն է, ներկայացման ձևը ազդում է որոշման կայացման վրա:
- ✓ Հավանականությունների սխալ գնահատում (Probability Weighting) - անձը հակված է գերագնահատելու հնարավոր կորուստները՝ անտեսելով

¹⁰ Տե՛ս **Kahneman, D., & Tversky, A.** (1979). Prospect theory: An analysis of decision under risk. *Econometrica*, 47(2), 263–291:

¹¹ Տե՛ս **Vis, B.** (2011). Prospect theory and political decision-making. *Political Studies Review*, 9(3), 334–343. <https://doi.org/10.1111/j.1478-9302.2011.00238.x>

դրանց իրական հավանականությունը, և միաժամանակ թերագնահատում է որոշումների հնարավոր օգուտները կամ հեռանկարը¹²:

Ամփոփելով դիրքորոշումների մասին տեսական և մեթոդաբանական ուսումնասիրությունները՝ կարող ենք ասել, որ դիրքորոշումը ինտեգրալ հասկացություն է, քանի որ ունի ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ սոցիալական բնութագրիչներ: Դիրքորոշումների ձևավորման վրա ազդող գործոնները ուսումնասիրելիս անհրաժեշտ է դիտարկել երկու կարևոր գործոն՝ անձի կոնֆորմիզմը և ռացիոնալությունը, որոնց ձևավորման մակարդակը մատնացույց կարող է անել քաղաքական դիրքորոշումների անկախությունը և անձի ինքնուրույնության մակարդակը:

Այսպիսով, կոնֆորմիզմի և որոշումների ընդունման հիմքում ընկած գործոնների համակցված չափումը թույլ է տալիս բացահայտել դիրքորոշման ձևավորման ներքին և արտաքին մեխանիզմները: Մեր կողմից առաջարկվող գործիքը մշակվել է քաղաքական դիրքորոշումների ձևավորման հիմքում ընկած կոնֆորմիզմի և ռացիոնալության մակարդակները չափելու և ախտորոշելու նպատակով. այն չի կարող լինել քաղաքական դիրքորոշումների ձևավորման բոլոր գործոնների դուրսբերմանը միտված գործիք:

Հետազոտության մեթոդաբանություն: Հարցարանի մշակման գործընթացը բաղկացած է երեք հիմնական փուլերից՝

1. տեսական վերլուծության հիման վրա հարցապնդումների ձևավորում,
2. ոլորտի մասնագետների հետ քննարկում և խմբագրում,
3. մաթեմատիկական վիճակագրական մեթոդների կիրառմամբ հարցարանի հուսալիության ստուգում, սանդղակների հարաբերական շեմերի ձևավորում:

Հարցարանի մշակման փուլ: Առաջին փուլում ձևավորվել և կազմվել են հարցերը՝ ըստ Աշի տեսության և հեռանկարի տեսության հիմնադրույթների: Արդյունքում կազմվել են ռացիոնալության 16, իսկ կոնֆորմիզմի 18 հարցապնդումներ: Հարցապնդումները մասնակիցների կողմից գնահատվում են 1-5 սանդղակով, հետևյալ կերպ՝ «լիովին համաձայն եմ-5», «համաձայն եմ-4», «դժվարանում եմ պատասխանել-3», «համաձայն չեմ-2», «բացարձակ համաձայն չեմ-1»: Հրահանգի և հարցապնդումների բովանդակության մասին տեղեկատվությունը տրված է հավելվածում (տե՛ս **հավելված 1**):

Հարցարանի նկարագրության և կիրառության ընթացակարգ: Տվյալների վերլուծման ժամանակ անհրաժեշտ է իմանալ, որ ստացված տվյալները համարվում են հում միավորներ և վերափոխվում են վերլուծական միավորների՝

¹² Տե՛ս **Kahneman, D., & Tversky, A.** (1979). Prospect theory: An analysis of decision under risk. *Econometrica*, 47(2), 263–291: Տե՛ս նաև **Kononovich, T. A., & Myasoed, P. A.** (2020). Teoriya perspektiv v protsessakh prinyatiya resheniya. *Psikhologicheskie issledovaniya*, 13(70). **Белянин, А. В.** (2004). *Математическая психология как раздел экономической теории*. Философия, этика, религиоведение. **Довбенко, М. В., & Осик, Ю. И.** (2011). *Современные экономические теории в трудах нобелиантов*. Академия Естествознания:

ըստ մշակված ընթացակարգի: Նշենք նաև, որ վերլուծական միավորների բարձր արժեքը արտացոլում է համապատասխան գործոնի առավել բարձր արտահայտվածություն: Այս սկզբունքը պահպանելու նպատակով որոշ հարցեր վերակողովորում են, որպեսզի պահպանվի հարցարանի միատարրությունը: Հարցերի հաշվարկման ընթացակարգը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 1. Ռացիոնալության` [1, 2, 4, 7, 8, 9, 15, 16] հարցերի պատասխանները հաշվարկվում են հետևյալ կերպ`

Պատասխանի տարբերակ	Տրվող միավոր
1	0
2	1
3	2
4	3
5	4

Աղյուսակ 2. Ռացիոնալության` [3, 5, 6, 10, 11, 12, 13, 14] հարցերի պատասխանները հաշվարկվում են հետևյալ կերպ`

Պատասխանի տարբերակ	Տրվող միավոր
1	4
2	3
3	2
4	1
5	0

Աղյուսակ 3. Կոնֆորմիզմի` [1, 2, 6, 7, 9, 10, 14, 15] հարցերի պատասխանները հաշվարկվում են հետևյալ կերպ`

Պատասխանի տարբերակ	Տրվող միավոր
1	0
2	1
3	2
4	3
5	4

Աղյուսակ 4. Կոնֆորմիզմի` [3, 4, 5, 8, 11, 12, 13, 16, 17, 18] հարցերի պատասխանները հաշվարկվում են հետևյալ կերպ`

Պատասխանի տարբերակ	Տրվող միավոր
1	4
2	3
3	2
4	1
5	0

Արդյունքների վերլուծություն և ներկայացում: Ինչպես արդեն նշեցինք, առաջին փուլում, տեսությունների հիմնադրույթներից էլնելով, ձևավորել ենք հարցապնդումներ, մշակել ենք հարցերի վերլուծության ընթացակարգ: Հարցարանի մշակման երկրորդ փուլում մեթոդիկան ոլորտի մասնագետների կողմից ուսումնասիրվել և խմբագրվել է: Այնուհետև մեթոդիկայի հուսալիության մակարդակը ստուգելու համար իրականացրել ենք պիլոտային հետազոտություն 52 հետազոտվողների հետ: Ստացված տվյալները ըստ ընթացակարգի վերլուծելուց հետո հաշվարկել ենք Կրոնբախի ալֆայի գործակիցը IBM SPSS Statistics վիճակագրական ծրագրի միջոցով: Արդյունքում կոնֆորմիզմի սանդղակի դեպքում Կրոնբախ ալֆայի գործակիցը կազմել է $\alpha = 0,900$. այս սանդղակի համար Կրոնբախ ալֆայի գործակիցը միջինից բարձր է, որը վկայում է հարցերի բարձր հուսալիության մասին (տե՛ս աղյուսակ 5):

Ռացիոնալության սանդղակի համար իրականացվել է Կրոնբախի ալֆայի գործակցի հաշվարկ, որի արդյունքները ցույց են տվել ցածր ներքին համաձայնություն և հուսալիություն: Ելնելով այդ հանգամանքից՝ հարցերին տրված միավորները վերանայվել և վերաբաշխվել են:

Դիրքորոշումների չափման, հարցարանների սանդղակավորման գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը հաճախ դիտարկվում է որպես դիրքորոշման բացակայություն, պայմանական 0 կետ: Այս պարագայում Լիկերտի դասական սանդղակը լիարժեքորեն չի արտահայտում հետազոտության նպատակը, քանի որ այն չի տարբերակում իրական վերաբերմունքի առկայությունը, այլ արձանագրում է դրա բացակայությունը¹³:

Աղյուսակ 5. Կրոնբախ ալֆայի գործակիցը կոնֆորմիզմի սանդղակի համար՝

Reliability Statistics	
Cronbach's Alpha	N of Items
.900	18

Դիրքորոշումների չափման, հարցարանների սանդղակավորման գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը հաճախ դիտարկվում է որպես դիրքորոշման բացակայություն, պայմանական 0 կետ: Այս պարագայում Լիկերտի դասական սանդղակը լիարժեքորեն չի արտահայտում հետազոտության նպատակը, քանի որ

¹³ St' u Aybar, C., Pérez, V. & Pavía, J.M. Scale matters: unravelling the impact of Likert scales on political self-placement. Qual Quant 58, 3725–3746 (2024). <https://doi.org/10.1007/s11135-023-01825-2>

այն չի տարբերակում իրական վերաբերմունքի առկայությունը, այլ արձանագրում է դրա բացակայությունը¹⁴:

Կարևոր է նշել, որ մեր կողմից չի թերագնահատվում Լիկերտի սանդղակավորման մեթոդը, պարզապես տվյալ հարցարանի բովանդակության չափման համար այն բավարար զգայունություն չի ապահովում: Քանի որ դիրքորոշումը ենթադրում է որոշակի վերաբերմունքի առկայություն, «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը մեր հետազոտության շրջանակում դիտարկվել է որպես դիրքորոշման բացակայություն և ստացել նվազագույն միավոր: Այս հիմքով իրականացվել է սանդղակի վերակողմավորում հետևյալ կերպ. «լիովին համաձայն եմ» — 5, «համաձայն եմ» — 4, «համաձայն չեմ» — 3, «բացարձակ համաձայն չեմ» — 2, «դժվարանում եմ պատասխանել» — 1: Վերջին տարբերակը այս դեպքում հայտնվում է վերջում և վերջնական արժեքը կազմում է 0:

Ըստ այդմ նոր ընթացակարգով վերլուծել ենք երկու սանդղակները (կոնֆորմիզմ և ռացիոնալություն) առանձին-առանձին: Յուրաքանչյուր սանդղակի դեպքում համապատասխան հարցերի համար իրականացվել է վերակողմավորում, որից հետո SPSS վիճակագրական ծրագրի միջոցով հաշվարկվել է Կրոնբախ ալֆայի գործակիցը:

Աղյուսակ 6. Կրոնբախ ալֆայի գործակիցը ռացիոնալության ընդհանուր ցուցանիշի համար

Reliability Statistics	
Cronbach's Alpha	N of Items
.814	16

Աղյուսակ 6-ից տեսանելի է, որ 16 հարցի համար Կրոնբախ ալֆայի գործակիցն է $\alpha = 0.871$, որը վկայում է այն մասին, որ սանդղակը համապատասխանում է հուսալիության չափորոշիչներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ $\alpha \geq 0.70$ արժեքը համարվում է բավարար հուսալիության ցուցանիշ կարելի է եզրակացնել, որ ռացիոնալության սանդղակն ունի միջինից բարձր հուսալիություն¹⁵:

Նույն վերլուծությունը իրականացրել ենք ռացիոնալության սանդղակի հուսալիության ստուգման նպատակով:

¹⁴ Տե՛ս Aybar, C., Pérez, V. & Pavia, J.M. Scale matters: unravelling the impact of Likert scales on political self-placement. Qual Quant 58, 3725–3746 (2024). <https://doi.org/10.1007/s11135-023-01825-2>

¹⁵ Տե՛ս Lamm, K. W., Lamm, A. J., & Edgar, D. (2020). Scale development and validation: Methodology and recommendations. Journal of International Agricultural and Extension Education, 27(2), 24–35. Տե՛ս Samokhvalova, A. G., Shipova, N. S., Tikhomirova, E. V., & Vishnevskaya, O. N. (2022). Metodika otsenki psikhologicheskogo blagopoluchiya studentov: Verifikatsiya i validizatsiya. Vestnik of Kostroma State University. Series:

Աղյուսակ 7. Կրոնբախ ալֆայի գործակիցը կոնֆորմիզմի սանդղակի համար(նոր միավորային բաշխմամբ)

Reliability Statistics	
Cronbach's Alpha	N of Items
.871	18

Աղյուսակ 7-ից ելնելով՝ կարող ենք ասել, որ նոր միավորային բաշխմամբ ստացված արդյունքը ($\alpha = 0.871$, $N = 18$) վկայում է բարձր մակարդակի ներքին համասեռության մասին, ինչը թույլ է տալիս ասել, որ այս դեպքում ևս ունենք հարցերի բարձր ներքին հուսալիություն:

Սանդղակների շեմերի նկարագրություն: Հաշվի առնելով մեր ընտրանքի քանակը և այն հանգմանքը, որ հետազոտությունը միտված է մեթոդիկայի նախնական մշակմանն ու հուսալիության գնահատմանը՝ մեր հետազոտությունում նպատահարմար ենք գտել օգտագործել քվարտիլային հաշվարկման տրամաբանությունը՝ շեմերի արդյունավետ բաշխման համար: Քվարտիլները հնարավորություն են տալիս տվյալների բաշխումը համաչափ իրականացնելու և ըստ այդմ օբյեկտիվորեն առանձնացնելու ցածր, միջին և բարձր մակարդակները: Քվարտիլները հաշվի են առնում տվյալների ներքին բաշխումը և թույլ են տալիս բաժանել մասնակիցներին խմբերի՝ հարաբերական, ոչ թե առավելագույն հնարավոր միավորի հիման վրա: Քվարտիլային բաշխման մոտեցումը լայնորեն կիրառվում է հոգեբանական թեստերում, որտեղ շեմերը սահմանվում են նմուշային տվյալների հիման վրա և հետագայում ստանդարտացվում են ավելի լայն խմբերի համար՝ համեմատելի արդյունքներ ապահովելու նպատակով: Այսպիսով, քվարտիլային մեթոդով սահմանված շեմերը ստանդարտացված, սկզբնական, չափման օբյեկտիվ ցուցիչներ են: Սակայն հարկ է նշել, որ ընտրանքի ավելացման դեպքում հնարավոր են շեմերի փոփոխություններ:

Կոնֆորմիզմի սանդղակի մեկնաբանման նպատակով քվարտիլային վերլուծության հիման վրա սահմանվել են հետևյալ շեմերը՝

- ✓ Կոնֆորմիզմի բարձր մակարդակ – 36–39 միավոր,
- ✓ Կոնֆորմիզմի միջին մակարդակ – 25–35 միավոր,
- ✓ Կոնֆորմիզմի ցածր մակարդակ – ≤ 24 միավոր:

Աղյուսակ 8. Կոնֆորմիզմի սանդղակի շեմերի հաշվարկը ըստ քվարտիլների

Statistics		
Կոնֆորմիզմ		
N	Valid	52
	Missing	0
Mean		28.63
Std. Deviation		8.559
Percentiles	25	24.00
	50	31.00
	75	35.00

Նույն վերլուծությունը իրականացվել է ռացիոնալության սանդղակի համար, ըստ այդմ առանձնացվել են հետևյալ շեմերը՝

- ✓ Ռացիոնալության բարձր մակարդակ – 37–52 միավոր,
- ✓ Ռացիոնալության միջին մակարդակ – 23–36 միավոր,
- ✓ Ռացիոնալության ցածր մակարդակ – ≤ 22 միավոր:

Աղյուսակ 9. Ռացիոնալության սանդղակի շեմերի հաշվարկը ըստ քվարտիլների

Statistics		
Ռացիոնալություն		
N	Valid	52
	Missing	0
Mean		29.37
Std. Deviation		9.806
Percentiles	25	22.75
	50	32.00
	75	37.00

Արդյունքների վերլուծություն: Քաղաքական դիրքորոշումների ձևավորումը դիտարկվում է որպես բազմաչափ գործընթաց, որի հիմքում ընկած են ինչպես սոցիալական ազդեցության մեխանիզմները, այնպես էլ անհատի՝ որոշում կայացնելու կոգնիտիվ առանձնահատկությունները: Մեր կողմից մշակված մեթոդիկական հնարավորություն է տալիս առանձին գնահատելու կոնֆորմիզմի և ռացիոնալության մակարդակները, սակայն դրանց համակցված գնահատումն ու վերլուծությունը թույլ կտան անցում կատարել դեպի դիրքորոշումների ձևավորման ինտեգրալ գնահատում:

Տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ անձի դիրքորոշումների ինքնուրույնության աստիճանը պայմանավորված է երկու հիմնական գործոնների հարաբերակցությամբ՝ սոցիալական ազդեցության նկատմամբ զգայունությամբ (կոնֆորմիզմ) և որոշումների կոգնիտիվ հաշվարկվածությամբ (ռացիոնալություն): Այդ համատեքստում առաջարկվում է քաղաքական դիրքորոշումների ձևավորման տիպաբանական մոդել, որը հիմնված է երկու սանդղակների մակարդակների համադրման վրա: Քվարտիլային վերլուծության հիման վրա առանձնացված ցածր, միջին և բարձր մակարդակների համադրությամբ հնարավոր է տարբերակել քաղաքական դիրքորոշումների ձևավորման հինգ հիմնական տիպեր.

1. Բարձր կոնֆորմիզմ և ցածր ռացիոնալություն – բնութագրվում է դիրքորոշումների ձևավորման ցածր ինքնուրույնությամբ, սոցիալական ազդեցության նկատմամբ բարձր զգայունությամբ և արտաքին դետերմինացվածությամբ:

2. Բարձր կոնֆորմիզմ և բարձր ռացիոնալություն – արտացոլում է որոշումների հաշվարկվածության առկայությունը, սակայն պահպանվում է սոցիալական ճնշման ազդեցությունը: Այս տիպը կարելի է բնութագրել որպես «ռացիոնալ կոնֆորմիզմ»:

3. Ցածր կոնֆորմիզմ և ցածր ռացիոնալություն – բնութագրվում է սոցիալական ազդեցության նկատմամբ հարաբերական անկախությամբ, սակայն որոշումների կայացման գործընթացում հնարավոր ինտուիտիվ կամ ոչ համակարգված մոտեցմամբ:

4. Ցածր կոնֆորմիզմ և բարձր ռացիոնալություն – արտացոլում է քաղաքական դիրքորոշումների ձևավորման բարձր ինքնավարություն, կոգնիտիվ ճկունություն և սոցիալական ճնշման նկատմամբ դիմադրողականություն: Տվյալ համակցումը կարելի է դիտարկել որպես առավել հասուն անձի դիրքորոշումների ձևավորման մոդել:

5. Միջին կոնֆորմիզմ և միջին ռացիոնալություն – անցումային, հարաբերական հավասարակշռության տիպ, որը չի արտահայտում ծայրահեղ բևեռացված դիրքորոշում:

Ներկայացված տիպաբանական վերլուծությունից բացի, հետագա հետազոտություններում առավել մեծածավալ ընտրանքի առկայության պայմաններում հնարավոր է կիրառել նաև ինտեգրալ գծային ցուցանիշ՝ հաշվարկված որպես ռացիոնալության և կոնֆորմիզմի ստանդարտացված միավորների տարբերություն: Նման ինդեքսը կարող է արտահայտել քաղաքական դիրքորոշումների ձևավորման ինքնավարության աստիճանը:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ներկայիս հետազոտության պիլոտային բնույթը և ընտրանքի սահմանափակ ծավալը (N = 52), առավել նպատակա-

հարմար է դիտարկել տիպաբանական մոտեցումը՝ որպես նախնական ստանդարտացման մոդել, իսկ ինտեգրալ ինդեքսի կիրառությունը՝ որպես հետագա հետազոտությունների ուղղություն:

Եզրակացություն: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ առաջարկվող մեթոդիկական կիրառման տեսանկյունից համեմատաբար պարզ ընթացակարգ է, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու ստացվող արդյունքների հավաստիությունը տարբեր հետազոտական պայմաններում և ընտրանքներում: Այս համատեքստում մեթոդիկական կարող է ծառայել որպես վալիդ և հուսալի չափման գործիք:

ЭЛИНА АСРИЯН, АСМИК САРГСЯН – Разработка методики оценки политических диспозиций и проверки надежности. – В статье рассматриваются различные подходы к изучению политических установок с акцентом на их многомерный характер. Ограниченное количество валидированных методик исследования политических установок и отсутствие соответствующего инструментария на армянском языке обуславливают необходимость разработки новых диагностических средств. В связи с этим в исследовании представлена авторская методика измерения политических установок, направленная на оценку тенденций их формирования и выявление особенностей проявления. Методика разработана на основе интеграции теории конформизма С. Аша и принципов теории перспектив Д. Канемана и А. Тверски. Процесс разработки опросника включал теоретический анализ, экспертную оценку и пилотное исследование. В пилотной фазе приняли участие 52 респондента. Результаты показали высокую внутреннюю согласованность шкал. Коэффициент альфа Кронбаха составил 0.871 для шкалы конформизма и 0.814 для шкалы рациональности. Дополнительно проведен квартильный анализ для определения пороговых значений интерпретации уровней конформизма и рациональности. Полученные результаты подтверждают надежность методики и ее потенциал для дальнейшей стандартизации и применения в исследованиях политических установок среди молодежи в Армении в будущих эмпирических работах.

Ключевые слова: Политические диспозиции, рациональность, конформизм, теория конформизма, теория перспектив

ELINA ASRIYAN, HASMIK SARGSYAN – Development of a Methodology for Assessing Political Dispositions and Measuring Reliability. – The article presents various approaches to the study of political attitudes, emphasizing their multidimensional nature. Considering the limited availability of validated methodologies for studying political attitudes, particularly the absence of Armenian-language instruments, as well as the importance of systematic and comprehensive research in this field, the study introduces an original methodology for measuring political attitudes. The primary aim of this methodology is to assess the tendencies underlying the formation of political attitudes and to reveal their manifestation patterns. The methodology was developed through the integration of S. Asch's theory of conformity and D. Kahneman and A. Tversky's Prospect Theory principles. The development of the questionnaire involved three main stages: theoretical analysis, expert evaluation, and a pilot study. The pilot phase included 52 participants, and the results indicate a high level of internal consistency and reliability of the scales. Cronbach's alpha was $\alpha = 0.871$ for the conformity scale and $\alpha = 0.814$ for the rationality scale. Based on the obtained data, quartile analysis was conducted to establish interpretative thresholds for the levels of conformity and rationality.

Key words: Political dispositions, rationality, conformity, conformity theory, prospect theory

Հավելված 1

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Հրահանգ: Հարգելի՛ մասնակից, Ձեզ ենք ներկայացնում հարցապնդումներ, որոնք վերաբերում են Ձեր որոշում կայացնելու գործընթացին: Հիշե՛ք, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ: Խնդրում ենք պատասխանել յուրաքանչյուր պնդմանը՝ տալով հնարավորինս անկեղծ պատասխաններ: Խնդրում ենք նշել, թե որքանով եք համաձայն կամ համաձայն չեք հետևյալ պնդումների հետ:

ՌԱՑԻՈՆԱԼՈՒԹՅՈՒՆ
1.Քաղաքական որևէ ծրագրի նկատմամբ կարծիք ձևավորելիս առաջնահերթ գնահատում եմ դրա իրատեսականությունը, ոչ թե իմ նախնական կուսակցական/քաղաքական նախընտրությունները:
2.Քաղաքական կարծիք ձևավորելիս ինձ համար հավասարապես կարևոր են որոշման արդյունքում թե՛ հնարավոր շահերը, թե՛ հնարավոր կորուստները:
3.Քաղաքական դիրքորոշում ձևավորելիս հաճախ պահպանում եմ իմ նախնական դիրքորոշումը՝ սխալվելուց խուսափելու համար, նույնիսկ եթե հայտնվում են նոր փաստեր կամ հիմնավոր տեսակետներ:
4. Քաղաքական հարցերում, երբ ստանում եմ նոր և հիմնավոր տվյալներ, կարողանում եմ վերանայել և անհրաժեշտության դեպքում փոխել իմ նախնական դիրքորոշումը, նույնիսկ եթե դա նշանակում է ընդունել, որ նախկինում սխալվել եմ:
5. Քաղաքական դիրքորոշում ձևավորելիս հաճախ չեմ ընդունում այն փաստերը, որոնք հակասում են իմ դիրքորոշմանը, քանի որ վախենում եմ ընդունել, որ կարող էի սխալ լինել:
6.Կարևոր որոշումներ կայացնելիս ես նախընտրում եմ այն տարբերակը, որը կապահովի ավելի փոքր, բայց գրեթե 100% երաշխավորված շահույթ, քան ավելի շահեկան, բայց ոչ լիովին երաշխավորված տարբերակը:
7.Եթե նոր քաղաքական հնարավորությունը ենթադրում է զգալի ռիսկ, ես հակված եմ աջակցել դրան, նույնիսկ առանց մանրամասն հաշվարկելու հնարավոր կորուստներն ու ձեռքբերումները:
8. Ես պատրաստ եմ հաճախ փոխել իմ քաղաքական դիրքորոշումը նոր տեղեկատվության հիման վրա, նույնիսկ եթե սկզբնական կարծիքս ինձ համար կարևոր է:
9. Որոշումներ կայացնելիս հաճախ ուշադրություն չեմ դարձնում հնարավոր ռիսկերին, եթե անգամ սխալվելու հավանականությունը բարձր է:
10. Ես առավել հակված եմ աջակցելու այն քաղաքական ծրագրին, որը ներկայացվում է որպես արդեն գոյություն ունեցող վտանգների կանխում, քան այն ծրագրին, որը ներկայացվում է որպես նոր հնարավոր շահույթներ ստանալու հնարավորություն:
11. Եթե քաղաքական ծրագիրը ներկայացնելիս ընդգծվում է հնարավոր կորուստներից խուսափումը, իսկ մյուս դեպքում՝ հնարավոր շահույթները, ես նախապատվությունը կտամ առաջին տարբերակին:
12. Քաղաքական ընտրություն կատարելիս երբեմն ինձ վրա ավելի մեծ ազդեցություն է գործում այն, թե ինչպես է ծրագիրը ներկայացված, օրինակ՝ տեսահոլովակը, սլոգանը, քան ծրագրի իրական բովանդակությունը:
13. Նույնիսկ երբ կարիք կա անհապաղ որոշում կայացնելու, բայց տեղեկատվությունը բավարար և հստակ չէ, ես որոշում չեմ կայացնի, մինչև ամեն բան որոշակի չդառնա:
14. Անորոշ իրավիճակներում ես նախընտրում եմ առավել նվազ ռիսկ ունեցող լուծումները, նույնիսկ եթե դրանց հնարավոր արդյունքը աննշան է:
15.Անորոշությունը սովորաբար ինձ չի խանգարում քաղաքական դիրքորոշում ձևավորելիս. ես փորձում եմ գնահատել հնարավոր ռիսկերը:


16. Անորոշ քաղաքական իրավիճակներում, եթե արդեն ունեմ բավարար տեղեկատվություն, ես հակված եմ որոշում կայացնելու և ընդունելու դրա ռիսկը չսպասելով լրացուցիչ լիովին վստահելի տեղեկատվության:

ԿՈՆՖՈՐՄԻԶՄ	
1.Քաղաքական որոշում կայացնելիս, եթե իմ կարծիքը տարբերվում է ընտանիքիս կարծիքից, սովորաբար հարմարվում եմ նրանց կարծիքին:	
2.Քաղաքական որոշում կայացնելիս ընկերներիս կարծիքը շատ եմ կարևորում և սովորաբար չեմ ցանկանում տարբերվել նրանցից:	
3.Անկախ ընտանիքիս քաղաքական նախընտրություններից՝ ես ձևավորում եմ և պահպանում եմ իմ սեփական քաղաքական համոզմունքները:	
4.Քաղաքական որոշումներում ընկերներիս կարծիքը կարևորում եմ, սակայն հաճախ տարակարծություն ենք ունենում, կարծում եմ դա նորմալ է:	
5.Քաղաքական կարծիք արտահայտելիս ես հիմնականում այլոց կարծիքներով չեմ առաջնորդվում, ես ունեմ իմ սեփական տեսակետը:	
6.Իմ որոշումները մեծապես կախված են շրջապատի մարդկանց կարծիքներից, նախընտրում եմ չտարբերվել:	
7.Ինձ համար հասարակության կարծիքը շատ կարևոր է, փորձում եմ հարմարվել բոլորին, միայն թե ոչ ոքի չհիասթափեցնեմ:	
8.Հասարակական կարծիքից անկախ՝ ես սովորաբար ձևավորում եմ իմ քաղաքական դիրքորոշումը՝ հիմնվելով սեփական վերլուծության վրա:	
9.Որոշումներ կայացնելիս անպայման հարցնում եմ հարազատներիս, մտերիմներիս կարծիքը, դժվարանում եմ միայնակ որոշում կայացնել:	
10.Քաղաքական ընտրություն կատարելիս ես սովորաբար հետևում եմ այն տարբերակին, որն ավելի ընդունված է մեծամասնության կողմից:	
11.Քաղաքական նախընտրություն ձևավորելիս հիմնականում անտարբեր եմ հասարակության կարծիքի նկատմամբ:	
12.Քաղաքական որոշումներ կայացնելիս հիմնականում առաջնորդվում եմ իմ սեփական կարծիքով, նույնիսկ երբ մյուսներն ունեն այլ դիրքորոշում:	
13.Քաղաքական հարցերում չեմ վախենում առաջնորդվել իմ սեփական արժեքներով, նույնիսկ եթե դա նշանակում է բախվել շրջապատի քննադատությանը:	
14.Քաղաքական հարցերում ինձ համար անչափ կարևոր է, թե ինչ է մտածում հասարակությունն ու իմ շրջապատի մարդիկ, և իմ որոշումները հաճախ պայմանավորված են այդ ընդհանուր կարծիքով:	
15.Քաղաքական հարցերում հասարակության հավանությանն արժանանալու համար ես հաճախ մեծ ջանքեր եմ ներդնում:	
16.Քաղաքական որոշումներ կայացնելիս հիմնականում հենվում եմ իմ սեփական դատողությունների վրա և պարտադրված չեմ հետևում շրջապատի կարծիքին:	
17.Երբ կարևոր քաղաքական որոշման առջև եմ կանգնում, կարողանում եմ դիմադրել հասարակության ճնշմանը և պահպանել դիրքորոշումս:	
18.Քաղաքական դիրքորոշում ձևավորելիս կարևորություն չեմ տալիս հասարակությունից եկող ազդակներին. փորձում եմ սեփական կարծիք ունենալ:	

Օգտագործված գրականություն / References

- Белянин, А. В. (2004). Математическая психология как раздел экономической теории. Философия, этика, религиоведение./ Belyanin, A. V. (2004). Mathematical psychology as a branch of economic theory. Philosophy, Ethics, Religious Studies.
- Довбенко, М. В., & Осик, Ю. И. (2011). Современные экономические теории в трудах нобелиантов. Академия Естествознания./ Dovbenko, M. V., & Osik, Yu. I. (2011). Modern economic theories in the works of Nobel laureates. Academy of Natural Sciences.
- Amodio, D. M., Jost, J. T., Master, S. L., & Yee, C. M. (2007). Neurocognitive correlates of liberalism and conservatism. *Nature Neuroscience*, 10(10), 1246–1247.
- Asch, S. E. (1951). Effects of group pressure upon the modification and distortion of judgments. In H. Guetzkow (Ed.), *Groups, leadership and men: Research in human relations* (pp. 177–190). Carnegie Press.
- Aybar, C., Pérez, V., & Pavia, J. M. (2024). Scale matters: Unravelling the impact of Likert scales on political self-placement. *Qualitative & Quantitative*, 58, 3725–3746. <https://doi.org/10.1007/s11135-023-01825-2>
- Goshin, M., Grigoryev, D., & Sorokin, P. (2025). Adolescent agency and behavioral characteristics: Conformity, problematic behavior, need for cognition. *Frontiers in Psychology*, 16, Article 1410170. <https://doi.org/10.3389/fpsyg.2025.1410170>
- Hermanowicz, J. C. (2019). Change – social and personal: Thomas and Znaniecki’s The Polish Peasant for the study of present-day change in global higher education. *Ruch Prawniczy, Ekonomiczny i Socjologiczny*, LXXXI(4), 51–68. <https://doi.org/10.18290/rpeis.2019.81.4-4>
- Jost, J. T., Glaser, J., Kruglanski, A. W., & Sulloway, F. J. (2003). Political conservatism as motivated social cognition. *Psychological Bulletin*, 129(3), 339–375. <https://doi.org/10.1037/0033-2909.129.3.339>
- Kahneman, D., D., & Tversky, A. (1979). Prospect theory: An analysis of decision under risk. *Econometrica*, 47(2), 263–291.
- Kanai, R., Feilden, T., Firth, C., & Rees, G. (2011). Political orientations are correlated with brain structure in young adults. *Current Biology*, 21, 677–680. <https://doi.org/10.1016/j.cub.2011.03.017>
- Kononovich, T. A., & Myasoed, P. A. (2020). Teoriya perspektiv v protsessakh prinyatiya resheniya. *Psikhologicheskie issledovaniya*, 13(70).
- Lamm, K. W., Lamm, A. J., & Edgar, D. (2020). Scale development and validation: Methodology and recommendations. *Journal of International Agricultural and Extension Education*, 27(2), 24–35.
- Samokhvalova, A. G., Shipova, N. S., Tikhomirova, E. V., & Vishnevskaya, O. N. (2022). Metodika otsenki psikhologicheskogo blagopoluchiya studentov: Verifikatsiya i validizatsiya. *Vestnik of Kostroma State University*.
- Stanley, L. (2010). To the letter: Thomas and Znaniecki’s The Polish Peasant and writing a life, sociologically. *Life Writing*, 7(2), 139–151. <https://doi.org/10.1080/14484520903445271>
- Tetradze, P. (2022). Alternate unconscious: Uzandze’s theory of set. <https://primordialsoup.info/articles/alternate-unconscious-uznadzes-theory-of-set/>
- Vis, B. (2011). Prospect theory and political decision-making. *Political Studies Review*, 9(3), 334–343. <https://doi.org/10.1111/j.1478-9302.2011.00238.x>
- Caucasus Barometer survey methodology and data (CRRC-Armenia)

**ԻՐԱԿԱՆ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ
ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ ԱՌԿԱ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

ԷՄՄԱ ՍԱՐԳՍՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Վերջին տասնամյակում անձի հոգեբանական բարեկեցության հիմնախնդիրը դարձել է հոգեբանական, սոցիալական և միջառարկայական հետազոտությունների հիմնական թեմաներից: Պատճառն այն է, որ հոգեբանական բարեկեցությունն այլևս չի դիտարկվում որպես բացառապես ներհոգեբանական երևույթ, այլ որպես բարդ իրողություն, որը պայմանավորված է սոցիալական, մշակութային և մի շարք այլ գործոններով: Դրանց թվում հատկապես նշանակալի դեր են խաղում սոցիալ-հոգեբանական գործոնները, քանի որ անձի հոգեբանական բարեկեցության նախադրյալները ձևավորվում են առավելապես դեռահասության տարիքում հաղորդակցության, սոցիալական փոխազդեցության և ինքնիրացման արդյունքում: Ժամանակակից աշխարհում այս գործընթացները ծավալվում են ոչ միայն իրական, այլև թվային պայմաններում՝ էականորեն վերափոխելով սոցիալականացման վերաբերյալ ավանդական պատկերացումները: Թեև թվային սոցիալականացումը նոր հնարավորություններ է ընձեռում սոցիալական կապերի հաստատման և ինքնարտահայտման համատեքստում, այն հաճախ պարունակում է որոշակի հոգեբանական ռիսկեր: Այս միտումներն անհրաժեշտություն են առաջացնում ուսումնասիրելու, թե ինչպես են իրական և թվային սոցիալական փոխազդեցությունները համատեղ ազդում անձի հոգեբանական բարեկեցության և հուզական կայունության վրա: Հողվածի թեմայի արդիականությունը պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ դեռահասության շրջանը անձի ֆիզիկական, սոցիալական, հուզական և մտավոր զարգացման ամենակարևոր փուլերից է, որը կարող է անձին խոցելի դարձնել հոգեկան առողջությանը վերաբերող խնդիրների նկատմամբ: Հետևաբար, սույն հոդվածի նպատակը արդիական է, որը ենթադրում է վերլուծել դեռահասների հոգեբանական բարեկեցությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունը թե՛ իրական, թե՛ թվային պայմաններում և մատնանշել էմպիրիկ հետազոտության ռազմավարությունը:

Էմմա Սարգսյան – ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասպիրանտ

Эмма Саркисян – аспирантка кафедры общей психологии ЕГУ

Emma Sargsyan – PhD Student at the Chair of General Psychology, YSU

Էլ. փոստ՝ emma.sargsyan@ysu.am ORCID ID: <https://orcid.org/0009-0004-9867-9337>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 27.02.2026

Գրախոսվել է՝ 04.03.2026

Հաստատվել է՝ 02.04.2026

© The Author(s) 2026

Բանալի բառեր – անձ, հոգեբանական բարեկեցություն, իրական/թվային սոցիալականացում, ինքնիրացում, կրթական միջավայր, դեռահասության շրջան, կեղծ «ես»

Բարեկեցության գաղափարի խորքային ընկալումն անձի և սոցիալական հոգեբանության ամենաքննարկվող և ուշագրավ արդի թեմաներից է¹: Այս երևույթը մեկնաբանվում է այն բանով, որ մարդու և ընդհանրապես հասարակության ներդրած ջանքերն ուղղված են կենսական բարեկեցության հասնելու նպատակին:

Անձի առողջությունն ու բարեկեցությունը մարդկային պատմության ողջ ընթացքում ամենաշատն ուշադրության արժանացած երևույթներն են, որոնք տարբեր ժամանակներում ստացել են տարաբնույթ սահմանումներ և բնութագրիչներ:

«Հոգեբանական բարեկեցության կառուցվածքը»² աշխատության մեջ Ն. Բրադբուրնը նշում է, որ երկար տարիներ բարեկեցությունը համարվել է բարոյական, քաղաքական կամ տնտեսական հիմնախնդիր, և միայն վերջերս է այն սկսել դիտարկվել հոգեբանական համատեքստում: Չնայած այս հանգամանքին՝ անձի հոգեբանական բարեկեցությունը չափող հայեցակարգված որևէ համակարգ դեռևս չկա: Ավստրիացի հոգեբան Մ. Ջահոդան «Երական հոգեկան առողջության ներկայիս հայեցակարգերը»³ գրքում փաստում է, որ թեև «բարեկեցություն» եզրույթը հաճախ գործածվում է անձի հոգեկան առողջությունը դրական լույսի ներքո բնութագրելու համար, միննույն է, այն չի կարող բավարար չափանիշ լինել: Մինչդեռ հոգեկան առողջության այլ բաղադրիչները, ինչպիսիք են տարբեր իրավիճակներում անձի ցուցաբերած հարմարման ունակությունները, սթրեսակայունությունը և հույզերը, տարածված դասակարգումներ են հոգեկան առողջությունը նկարագրելիս:

Մյուս կողմից, հեղոնիստական բարեկեցության ժամանակակից ամենահայտնի տեսությունը, որը հաստատվել է ոլորտի բազմաթիվ հեղինակների կողմից, պատկանում է Էդ Դիներին, որը սուբյեկտիվ բարեկեցությունը սահմանում է որպես ռեֆլեկտիվ ճանաչողական գնահատումներ, ինչպիսիք են կյանքով և աշխատանքով բավարարվածությունները, կյանքի տարատեսակ իրադարձությունների նկատմամբ աֆեկտիվ արձագանքները, ուրախությունն ու տխրությունը: Սուբյեկտիվ բարեկեցությանն աղերսակցվում են նաև մի շարք հասկացություններ, ինչպիսիք են «լավատեսությունը», «կյանքով բավա-

¹ Sté u **Nesi, J.** (2020). The Impact of Social Media on Youth Mental Health: Challenges and Opportunities. North Carolina Medical Journal, 81(2), 116–121. <https://doi.org/10.18043/ncm.81.2.116>

² Sté u **Bradburn, N.** (1969) The Structure of Psychological Well-being// Aldine Publishing Company, 7-10. https://www.norc.org/content/dam/norc-org/pdfs/BradburnN_Struct_Psych_Well_Being.pdf

³ Sté u **Jahoda, M.** (1958). Current concepts of positive mental health//Basic Books, Inc., Publishers, 168, 18-20:

րարվածությունը», «երջանկությունը», որոնք նույնիսկ որոշ դեպքերում փոխլրացնում են միմյանց, բայցնայնպես, ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, «սուբյեկտիվ բարեկեցությունը» և «երջանկությունը» նույնը չեն: Ներկայումս «սուբյեկտիվ բարեկեցություն» հասկացությունը կարելի է սահմանել երեք չափանիշներով՝ **նորմաստիվ**, որը պայմանավորված է արտաքին գործոններով, ինչպիսիք են առաքինությունը և բարեպաշտությունը, **սուբյեկտիվ**, որոնք ապահովում են անձի ձգտումների և ցանկությունների ներդաշնակ բավարարումը՝ ստիպելով նրան սեփական կյանքը բարեկեցիկ գնահատել, ինչպես նաև **դրական հուզական փորձառությունները**, որոնք օբյեկտիվորեն գերակշռում են անձի կյանքում, կամ վերջինս սուբյեկտիվորեն հակված է դրանց⁴:

Հաջորդիվ անհրաժեշտ է քննարկել մարդու բարեկեցությունը սահմանելու գիտական տարբեր մոտեցումները՝ հաշվի առնելով ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և այլ գործոններ: Օրինակ՝ Կ. Ռոջերսի մարդակենտրոն մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ մարդն ունի հասունության ձգտելու քողարկված հակում և կարողություն: Եթե կան հոգեբանական նպաստավոր պայմաններ, այս հակումը դառնում է պոտենցիալ: Այն դրսևորվում է մարդու՝ ինքն իրեն բացահայտելու ցանկությամբ, որն իր հերթին հանգեցնում է սեփական անձի նկատմամբ դժգոհության: Այս գիտակցումը խթանում է ենթագիտակցական նոր փորձառությունները: Հասունության ձգտումն ընկած է անձի՝ սեփական անհատականության վերաձևակերպման և կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի փոփոխման հիմքում⁵:

Այժմ խոսենք Ալբերտ Բանդուրայի ճանաչողական-վարքաբանական մոտեցման մասին:

Ըստ հեղինակի՝ բարեկեցությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպես է անձը գնահատում ինքն իրեն, իր կարողությունները և շրջակա աշխարհը: Սոցիալական ճանաչողության տեսության շրջանակներում Բանդուրան խոսում է «ինքնարդյունավետություն» եզրույթի մասին, որը ձևավորվում է սոցիալական պայմանների ազդեցության ներքո՝ հիմնվելով անհատի ճանաչողական պարամետրերի վրա: Բանդուրայի պնդմամբ՝ ինքնարդյունավետությունը թույլ է տալիս անձին վերլուծել սոցիալական փոխազդեցության սուբյեկտին, ինչպես նաև գնահատել նրա գործունեության արդյունավետությունը՝ հաշվի առնելով անհատի ներկայիս կարիքները, արժեքներն ու հույզերը, որոնք որպես կանոն որոշում են նրա վարքագիծը⁶:

⁴ Տե՛ս **Diener, Ed.** (1999). Subjective well-being: Three decades of progress.// *Psychological Bulletin*, 125(2), 276–302. <https://docslib.org/doc/6764439/subjective-well-being-three-decades-of-progress>

⁵ Տե՛ս **Роджерс, К.** (1994). Взгляд на психотерапию. Становление человека// М.: "Прогресс", 480, 10-15:

⁶ Տե՛ս **Bandura, A.** (1997). *Self-efficacy: The exercise of control*// W.Փ.Н. Freeman & Company 1977b, 604, 116-159:

Անդրադառնանք մեկ այլ ականավոր հոգեբանի՝ Ա. Մասլոուի մոտեցումներին անձի բարեկեցության համատեքստում: Մարդասիրական հոգեբանության հիմնադիրներից մեկը՝ Մասլոուն, կարծում էր, որ մարդն ի ծնե ձգտում է աճելու, զարգանալու և իր ներուժը առավելագույնս իրացնելու: Մարդկանց ներհատուկ է ստեղծելու կարողությունը, և նրանք ավելի շատ մոտիվացված են աճի ներքին պահանջմունքներով, քան սոսկ կենսաբանական գործոններով⁷: Բարեկեցության մասին խոսելիս հարկավոր է հաշվի առնել այն ձևավորող հիմնական երևույթներից մեկը՝ ինքնիրացումը: «Ինքնիրացում» տերմինն առաջին անգամ կիրառվել է Կ. Գոլդշտեյնի կողմից: Ըստ նրա՝ ինքնիրացումը կյանքի համընդհանուր սկզբունքն է՝ ուղղված անձնական կարողությունների վերականգնմանը, և բնորոշ չէ սոսկ օրգաններին կամ բջիջներին: Հեղինակի կարծիքով՝ ինքնիրացումը մարդու՝ հնարավոր բոլոր ճանապարհներով սեփական բնածին կարողություններն ու ներուժը յուրացնելու միակ դրդապատճառն է⁸: Մակայն ժամանակակից գիտնականների աշխատություններում այս հարցում նկատվում են ավելի համակողմանի մոտեցումներ: Այս առիթով արժե հիշատակել Ե. Ա. Ռիլսկայայի և Է. Ֆ. Յաչչենկոյի աշխատանքները: Ռիլսկայան, ուսումնասիրելով տարբեր ոլորտներում մարդու կենսունակությունը, մեծապես կարևորում է ինքնիրացման գործնական կողմը՝ անձի՝ սոցիումում արդյունավետորեն գործելու կարողությունը, փոփոխությունների նկատմամբ հարմարվողականությունը և իր նպատակներին հասնելու ձգտումը: Գիտնականի հայեցակարգում կարելի է բացահայտել նաև ինքնիրացման հիմնական դրսևորումները: Դրանք են՝ սթրեսային իրավիճակներում բարձր դիմադրողականության ցուցաբերումը, արդյունավետ ինքնակարգավորման մեխանիզմները, զարգացած սոցիալական հմտությունները և նախաձեռնողականությունը: Այս որոշակիորեն ստանդարտացված տվյալները հնարավորություն են տալիս օբյեկտիվորեն գնահատելու անձի ինքնիրացման ներուժը: Մյուս կողմից՝ Է. Ֆ. Յաչչենկոն, կենտրոնանալով անհատի արժեքային-իմաստաբանական ոլորտի վրա, բացահայտում է ինքնիրացման հոգեբանական խորը հիմքերը՝ ցույց տալով, թե որ արժեքներն ու սպասումներն են առաջնորդում անձին ձևավորելու սեփական ինքնությունը⁹: Ըստ ժամանակակից հեղինակների պնդումների՝ սուբյեկտիվ բարեկեցությունը ինքնիրացման անբաժանելի գործոն է: Ինքնիրացման գործընթացը հատկապես կարևոր է ուսումնասիրել դեռահաս տարիքի համատեքստում: Օ. Բ. Միխայլովայի և

⁷ Տե՛ս **Mcleod, S.** (2025). Maslow's Hierarchy of Needs

https://www.researchgate.net/publication/383241976_Maslow's_Hierarchy_of_Needs

⁸ Տե՛ս **Михайлова, О.Б., Сафи, С.М.** (2018). Социальные проблемы самоактуализации в подростковом возрасте // Мир науки. Социология, филология, культурология, № 2 <https://sfk-mn.ru/PDF/10SCSK218.pdf>

⁹ Տե՛ս **Жуйкова, С.А.** (2025). Методики диагностики самоактуализации личности С.Б. Кауфмана и А.В. Лазукина в контексте сравнительно-сопоставительного анализа // Российский университет дружбы народов имени Патриса Лумумбы. М., Т. 18, № 1, 31–33:

Ս. Մ. Սաֆիի աշխատանքներում դեռահասությունը դիտարկվում է որպես ինքնիրացման գործընթացի հիմնական փուլ, քանի որ հենց այս ժամանակահատվածում է առաջին անգամ զարգանում սեփական ներուժը բացահայտելու և անհատի՝ իրեն որպես սոցիալական և անձնական գործունեության սուբյեկտ հաստատելու գիտակցված անհրաժեշտությունը: Հեղինակները պնդում են, որ, ի տարբերություն օնտոգենեզի նախորդ փուլերի, դեռահասության շրջանում ինքնիրացումը որակապես նոր բնույթ է ստանում: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ մանկության շրջանում ինքնիրացումը հիմնականում հարմարվողական և կախյալ է, իսկ դեռահասության շրջանում այն դառնում է ռեֆլեկտիվ, արժեքային և ներքուստ մոտիվացվող: Դեռահասության շրջանում ինքնիրացման կենտրոնական մեխանիզմը ինքնագիտակցության զարգացումն է: Ինքնիրացումը դրսևորվում է սոցիալական տարբեր դերերի ուսումնասիրության, գործունեության տարատեսակ ոլորտների փորձարկումների և անհատականության ընդգծման միջոցով¹⁰: Այս համատեքստում կարևորվում է դպրոցի և վերջինիս սոցիալական ազդեցության նշանակությունը, որը դեռահասների հոգեբանական բարեկեցության որակը որոշող ակտիվ գործոն է: Այստեղ հոգեբանական բարեկեցությունն ընկալվում է որպես բարդ երևույթ՝ ներառելով կյանքով ընդհանուր բավարարվածության, այլոց հետ դրական հարաբերությունների, ինքնագնահատականի և ինքնավարության զգացման, ինչպես նաև կրթական միջավայրին հարմարվելու ունակության ցուցանիշները: Նշված թեման հանգամանորեն քննարկվել է Ի. Ա. Վինոգրադովայի աշխատանքում: Նա դպրոցականների հոգեբանական բարեկեցությունն ուղղակիորեն պայմանավորում է կրթական այն միջավայրի տեսակով, որտեղ նրանք սովորում են: Ավելին, դպրոցը դիտարկվում է ոչ միայն որպես կրթական, այլև որպես տարածական-սոցիալական և անձնական-հոգեբանական միջավայր: Դեռահասների պարագայում հոգեբանական բարեկեցության վրա էական ազդեցություն են ունենում ներդասարանային մթնոլորտը, ուսուցիչների և հասակակիցների հետ հարաբերությունները, գնահատականներն ու խրախուսանքները և այլն¹¹:

Ներկայումս հոգեբանները նաև մատնանշում են դպրոցում հարմարման գործընթացների և անձնական բարեկեցության միջև կապը: Օրինակ՝ Խլոմովի, Բոչավերի և Կորնենի կողմից 2021 թվականին կատարված էմպիրիկ ուսումնասիրության շրջանակներում հետազոտվել է, թե ինչպես է կրթական միջավայրն ազդում դեռահասների կոպինգ ռազմավարությունների, լավատեսության և ընդհանուր հոգեբանական բարեկեցության վրա: Արդյունքները

¹⁰ Տե՛ս **Михайлова, О.Б., Сафи, С.М.** նշվ. աշխ. :

¹¹ Տե՛ս **Виноградова, И. А., Громова, Т. С.** (2024). *Возрастная психология / Developmental Psychology*. https://www.researchgate.net/publication/378241015_VOZRASNAA_PSIHOLOGIA_DEVELOPMENTAL_PSYCHOLOGY_351-354

ցույց են տվել, որ դպրոցը զգալիորեն ազդում է սովորողների կողմից օգտագործվող կոպինգ ռազմավարությունների ինտենսիվության և տեսակի վրա, ընդ որում՝ խրախուսման բարձր մակարդակ ունեցող ուսումնական միջավայրերում գտնվող դեռահասները ավելի հակված են կիրառելու խնդրի լուծմանն ուղղված կոպինգ ռազմավարություններ: Վերը նշված վերլուծությունը փաստում է, որ արդյունավետ կրթական միջավայրը կարևոր է ոչ միայն ակադեմիական առաջադիմություն, այլև հոգեառօրյալական հարմարվողականություն և դիմադրողականություն ձևավորելու համար¹²: Թեմային անդրադարձել են նաև Վ. Պապոյանը և Ա. Գալստյանը իրենց «Անձի հոգեբանական բարեկեցությունը որպես հոգեկան առողջության նախապայման» հոդվածի շրջանակներում: Ուսումնասիրության կարևոր շեշտադրումներից է երիտասարդների հոգեբանական բարեկեցության ձևավորման գործում սոցիալական և խմբային միջավայրի դերը: Ըստ հեղինակների՝ հոգեբանական բարեկեցությունը էականորեն ձևավորվում է կրթական-խմբային համատեքստերում, որտեղ միջանձնային փոխազդեցությունը, համագործակցությունը և սոցիալական փոխադարձ աջակցությունը վճռորոշ դեր են խաղում: Դպրոցական-կրթական միջավայրը, մասնագիտացված խմբակներում ձևավորված համայնքները նպաստում են հասակակիցների հետ դրական հարաբերությունների հաստատմանը և կենսական նպատակների ձևավորմանը: Ուսումնասիրության շրջանակներում Պապոյանը և Գալստյանը¹³ նկատում են, որ հոգեբանական բարեկեցության ավելի բարձր մակարդակ ունեցող անհատները դրսևորում են անձնական աճի և դրական սոցիալական հարաբերությունների առավել տպավորիչ ցուցանիշներ, մինչդեռ ավելի ցածր բարեկեցության մակարդակը փոխկապակցված է խաթարված կամ ոչ բավարար խմբային ինտեգրման հետ:

Քննարկենք թվային սոցիալականացման պայմաններում հոգեբանական բարեկեցության վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնները: Հետազոտությունները ընդգծում են, որ ինքնության ձևավորումը, որն առանցքային դեր ունի դեռահասների հոգեկան առողջության գործում, հիմնականում ձևավորվում է սոցիալական փոխազդեցությունների միջոցով¹⁴: Թվային դարաշրջանում այս գործընթացներն առավելապես ծավալվում են առցանց հարթակներում, որտեղ դեռահասները բախվում են սոցիալական համեմատության, հասակակիցների կողմից գնահատականների արժանանալու և ինքնաներկայացման խնդիրներին:

¹² Տե՛ս **Khlobov, K. D., Bocharov, A. A., & Korneev, A. A.** (2021). Well-being and Coping with Stress among Russian Adolescents in Different Educational Environments. *Psychology in Russia, state of the art*, 14 (3), 68–80. <https://doi.org/10.11621/pir.2021.0305>

¹³ Տե՛ս **Papoyan, V., & Galstyan, A.** (2025). Person's psychological well-being as a prerequisite for mental health, *Georgian Medical News*, 10(367), 81–87:

¹⁴ Տե՛ս **Erikson, E. H.** (1968). *Identity: Youth and crisis*, W. W. Norton & Company 336, 200-250:

Այսպես, օրինակ, ֆիզիոլոգիական զարգացումները, ինչպիսիք են սեռահասունությունը, մարմնի և հորմոնալ փոփոխությունները, կարող են ազդել, թե ինչպես է անձն ընկալում ինքն իրեն: Իր «Դեռահասությունը» դասագրքում Լ. Սթեյնբերգը նշում է, որ դեռահասության շրջանում ֆիզիկական փոփոխությունները դեռահասին կարող են խոցելի դարձնել արտաքին ազդեցությունների նկատմամբ՝ առաջացնելով ցածր ինքնագնահատական, այլոց հետ մշտապես համեմատվելու հակում և հոգեբանական բացասական փորձառություններ¹⁵: Մյուս կողմից՝ Մարսթոնը իր աշխատության մեջ անդրադառնում է ուշ դեռահասության շրջանում կատարվող փոփոխություններին, որտեղ անձը, կենտրոնանալով սեփական թերությունների վրա, փորձում է հավանության արժանանալ թվային սոցիալական փոխազդեցությունների միջոցով¹⁶: Սա արդյունավետորեն իրագործելու համար դեռահասներն ընտրողաբար են ներկայանում՝ զարգացնելով «կեղծ ես»: Այս մասին է խոսում Ջ. Թվենջեն «iGen»¹⁷ աշխատության շրջանակներում: Հեղինակի պնդմամբ՝ իրենց ինքնագնահատականը ձևավորելու նպատակով դեռահասները սովորաբար հիմնվում են սոցիալական արտաքին արձագանքների վրա, ինչպիսիք են համացանցային հավանություններն ու մեկնաբանությունները: Վերջերս կատարված հետազոտությունները ևս փաստում են, որ թվային սոցիալականացման պայմաններում դեռահասների հոգեբանական բարեկեցությունը որոշվում է ոչ միայն առցանց տիրույթում անցկացրած ժամանակով, այլև այնտեղ ձեռք բերված փորձառությունների որակով: Ե. Վոլկովան և Գ. Սորոկոմովան պնդում են, որ դեռահասների սոցիալական վարքագիծը, թվային գրագիտությունը, առցանց տիրույթում անցկացրած ժամանակը և սոցիալական փոխազդեցությունների նկատմամբ վստահությունը համարվում են բարեկեցության գնահատման հիմնական չափանիշներ: Դրանք ենթադրում են, որ թվային սոցիալականացման արդյունքում ձևավորված հոգեբանական բարեկեցությունը պետք է դիտարկել ինչպես ներքին փորձառությունների, այնպես էլ արտաքին կարողությունների զարգացման համատեքստում (օրինակ՝ հաղորդակցական հմտություններ, թվային կարողություններ): Այսպիսով հաստատվում է, որ ժամանակակից աշխարհում թվային սոցիալականացումը դեռահասների ընդհանուր հոգեօժանոցային զարգացման անբաժանելի մասն է¹⁸: Այդուհանդերձ, թվային սոցիալականաց-

¹⁵ Տե՛ս **Steinberg, L.** (2017). *Adolescence* (11th ed.). McGraw-Hill Education. 26-27

¹⁶ Տե՛ս **Marston, Emily G et al.** (2010) Rejection Sensitivity in Late Adolescence: Social and Emotional Sequelae, *Journal of Research on Adolescence*, the official journal of the Society for Research on Adolescence vol. 20,4 (2010): 959-982. doi:10.1111/j.1532-7795.2010.00675.x

¹⁷ Տե՛ս **Twenge, J., iGen (2017)** Ch. 4: Insecure, New York, NY : Atria Books, 342, 71-75 (hardcover edition):

¹⁸ Տե՛ս **Volkova, E. N., & Sorokoumova, G. V.** (2024). **Psychological criteria of adolescent well-being in the context of digital socialization.** *Social Psychology and Society*, 15(2), Moscow State University of Psychology & Education, 12-27

ման ազդեցությունը դեռահասների հոգեբանական բարեկեցության վրա նույնպես տարբերվում է՝ կախված անձի մոտիվացիաներից և վարքագծից: «LifeOnSoMe» ուսումնասիրությունը պարզել է, որ վիրտուալ ինքնաներկայացմամբ չափազանց տարված դեռահասները ցուցաբերել են տագնապայնության և դեպրեսիվ ախտանշանների ավելի բարձր մակարդակ, քան ինքնաներկայացման ավելի ցածր կենտրոնացում ունեցող հասակակիցները¹⁹: Այս պարագայում, փաստորեն, թվային սոցիալականացումը հոգեբանական բարեկեցության բացասական ազդեցության գործոն է: Մյուս կողմից՝ որոշ նոր հետազոտություններ հաստատում են, որ թվային սոցիալականացման և դեռահասների հոգեբանական բարեկեցության միջև կապը միանշանակ բացասական չէ. այն մեծապես կախված է համատեքստային և անհատական գործոններից: Թվային տիրույթում դեռահասների հավասարակշռված ներգրավվածությունը, համադրվելով իմաստալից իրական սոցիալական փոխհարաբերությունների հետ, կարող է դրականորեն անդրադառնալ հոգեբանական բարեկեցության վրա: Այս տեսանկյունից կարևորվում են թվային սոցիալական միջավայրի ընտրությունը, առցանց տիրույթում անցկացված ժամանակի որակը և միջանձնային փոխազդեցությունները²⁰:

Բնականաբար, վերջին տարիներին հոգեբանական բարեկեցության գիտական խնդիրը գրավել է նաև հայ մասնագետների ուշադրությունը, ովքեր այն ուսումնասիրել են երիտասարդների օրինակով և մշակել են այն գնահատելու մեթոդ²¹:

ЭММА САРКИСЯН – Влияние факторов реальной и цифровой социализации на актуальное психологическое благополучие личности. – За последнее десятилетие концепт психологического благополучия приобрел центральное значение в психологических, социологических и междисциплинарных исследованиях. Усиленный интерес к данной проблематике объясняется концептуальным сдвигом: психологическое благополучие перестало рассматриваться исключительно как интрапсихическое или индивидуальное явление и трактуется как многомерная, динамически конструируемая реальность, определяемая социальными, культурными и контекстуальными факторами. Особую значимость в рамках данного теоретического поля приобретают социально-психологические детерминанты, поскольку базовые предпосылки психологического благополучия

¹⁹ Sté u Finserås, T. R., Hella, R. T., Andersen, A. I. O., et al. (2024). “Digital self-presentation and adolescent mental health: Cross-sectional and longitudinal findings from the LifeOnSoMe study”. *BMC Public Health*, 24, Article 2635. BioMed Central (Springer Nature).

²⁰ Sté u Carvalho TP, et al. (2025). **Healthy social network use and well-being during adolescence: A biopsychosocial approach.** *Children*, 10(10), 1649. MDPI., https://www.mdpi.com/2227-9067/10/10/1649?utm_source=researchgate.net&utm_medium=article

²¹ Sté u Ասրիյան Է., Կարապետյան Ն., Մամոնյան Ս. (2022): Ուսանողի հոգեբանական բարեկեցության սանդղակի հայերեն տարբերակի տեղայնացում // Եր., Արդի հոգեբանություն, № 2, էջ 3-10:

Գևորգյան Ս., Խաչատրյան Ն. (2016): Մուբյեկտիվ բարեկեցությունը և այն պայմանավորող գործոնների առանձնահատկությունները երիտասարդների շրջանում / Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., էջ 153-162:

формируются преимущественно в подростковом возрасте через межличностное взаимодействие, социальное общение, процесс становления идентичности и самореализацию. В современном обществе эти процессы реализуются как в офлайн-, так и в цифровой среде, что существенно трансформирует традиционные модели социализации. Цифровые контексты расширяют возможности социального взаимодействия и самовыражения, предоставляя новые формы коммуникации и конструирования идентичности. Вместе с тем они порождают качественно новые психологические риски, включая повышенную восприимчивость к социальному сравнению, киберагрессии и давлению онлайн-валидации. В этом контексте возникает объективная необходимость комплексного исследования взаимосвязи и интерактивного влияния реального и цифрового социального опыта на психологическое благополучие и эмоциональную устойчивость подростков. Особая актуальность исследования обусловлена возрастной спецификой подросткового периода как критической и сенситивной фазы развития, характеризующейся интенсивными физическими, когнитивными, эмоциональными и социальными преобразованиями. Данный этап повышает уязвимость к нарушениям психического здоровья, одновременно являясь формирующей фазой становления адаптивных копинг-стратегий и психосоциальных ресурсов. Цель статьи заключается в системном анализе влияния социально-психологических детерминант на психологическое благополучие подростков в реальных и цифровых социальных контекстах, а также в разработке методологической рамки и стратегического дизайна планируемого эмпирического исследования.

Ключевые слова: личность, психологическое благополучие, реальная/цифровая социализация, самореализация, образовательная среда, подростковый период, ложное «Я»

EMMA SARGSYAN – *The Impact of Real and Digital Socialization Factors on Personality's Current Psychological Well-Being* – Over the past decade, the concept of psychological well-being has emerged as a central focus in psychological, sociological, and broader interdisciplinary research. This growing attention reflects a conceptual shift: psychological well-being is no longer understood as exclusively intrapsychic or individual, but rather as a multidimensional, dynamically constructed phenomenon shaped by social, cultural, and contextual determinants. Within this framework, socio-psychological factors are particularly significant, as the foundational conditions for psychological well-being are predominantly established during adolescence through processes of interpersonal communication, social interaction, identity formation, and self-realization.

In contemporary society, these developmental processes occur across both offline and digital environments, substantially transforming traditional models of socialization. Digital contexts provide expanded opportunities for social engagement and self-expression, offering new modalities for interaction and identity construction. Simultaneously, these environments introduce qualitatively novel psychological risks, including heightened susceptibility to social comparison, cyber-aggression, and pressures to seek online validation. As a result, there is a clear need for a comprehensive investigation into the complex and interactive effects of real-life and digitally mediated social experiences on adolescents' psychological well-being and emotional resilience.

The relevance of this study is further underscored by the developmental specificity of adolescence, a critical and sensitive period characterized by rapid physical, cognitive, emotional, and social changes. This stage of development can heighten vulnerability to mental health difficulties while also serving as a formative phase for the acquisition and consolidation of adaptive coping strategies and psychosocial resources.

Accordingly, the primary objective of this research is to analyze the influence of socio-psychological determinants on adolescents' psychological well-being across both real and digital social contexts. The study also aims to establish a rigorous methodological framework and strategic design for an empirical investigation that addresses these interactions, thereby

contributing to a nuanced understanding of how contemporary social environments shape adolescent psychological health.


Key words: *personality, psychological well-being, real/digital socialization, self-realization, educational environment, adolescence, false self*

Օգտագործված գրականություն / References

- Ասրիյան Է., Կարապետյան Ն., Մամոնիսյան Ա., Ուսանողի հոգեբանական բարեկեցության սանդղակի հայերեն տարբերակի տեղայնացում // Արդի հոգեբանություն, 2022, № 2, էջ 3-10:
- Գևորգյան Մ., Խաչատրյան Ն., Մուրթեկտիվ բարեկեցությունը և այն պայմանավորող գործոնների առանձնահատկությունները երիտասարդների շրջանում / Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր.: 2016, էջ 153-162:
- Виноградова, И. А., Громова, Т. С. (2024). *Возрастная психология / Developmental Psychology*. [https://www.researchgate.net/publication/378241015_VOZRASNAA_PSIHOLOGIA_DEVELOPMENTAL_PSYCHOLOGY_351-354/Vinogradova, I. A., & Gromova, T. S. \(2024\). Vozrastnaya psikhologiya / Developmental psychology \(pp. 351–354\).](https://www.researchgate.net/publication/378241015_VOZRASNAA_PSIHOLOGIA_DEVELOPMENTAL_PSYCHOLOGY_351-354/Vinogradova, I. A., & Gromova, T. S. (2024). Vozrastnaya psikhologiya / Developmental psychology (pp. 351–354).)
- Жуйкова, С.А. (2025) Методики диагностики самоактуализации личности С.Б. Кауфмана и А.В. Лазукина в контексте сравнительно-сопоставительного анализа// Российский университет дружбы народов имени Патриса Лумумбы, Москва, Т. 18, № 1, 31–33/Zhuykova, S. A. (2025). Metodiki diagnostiki samoaktualizatsii lichnosti S. B. Kaufmana i A. V. Lazukina v kontekste sravnitel'no-sopostavitel'nogo analiza. *Rossiyskiy universitet druzhby narodov imeni Patrisa Lumumby*, 18(1), 31–33.
- Михайлова, О.Б. Сафи С.М. (2018) Социальные проблемы самоактуализации в подростковом возрасте // Мир науки. Социология, филология, культурология, №2, [https://sfk-mn.ru/PDF/10SCSK218.pdf/Mikhaylova, O. B., & Safi, S. M. \(2018\). Sotsial'nye problemy samoaktualizatsii v podrostkovom vozraste. Mir nauki. Sotsiologiya, filologiya, kul'turologiya, \(2\).](https://sfk-mn.ru/PDF/10SCSK218.pdf/Mikhaylova, O. B., & Safi, S. M. (2018). Sotsial'nye problemy samoaktualizatsii v podrostkovom vozraste. Mir nauki. Sotsiologiya, filologiya, kul'turologiya, (2).)
- Роджерс, К. (1994) Взгляд на психотерапию. Становление человека// М.: "Прогресс", 480, 10-15/Rodzhers, K. (1994). *Vzglyad na psikhoterapiyu. Stanovlenie cheloveka* (pp. 10–15). Progress.
- Bandura, A. (1997). *Self-efficacy: The exercise of control* (pp. 116–159). W. H. Freeman & Company.
- Bradburn, N. (1969). *The structure of psychological well-being* (pp. 7–10). Aldine Publishing Company. https://www.norc.org/content/dam/norc-org/pdfs/BradburnN_Struc_Psych_Well_Being.pdf
- Carvalho, T., et al. (2025). Healthy social network use and well-being during adolescence: A biopsychosocial approach. *Children*, 10(10), 1649. MDPI. <https://www.mdpi.com/2227-9067/10/10/1649>
- Diener, E. (1999). Subjective well-being: Three decades of progress. *Psychological Bulletin*, 125(2), 276–302. <https://docslib.org/doc/6764439/subjective-well-being-three-decades-of-progress>
- Erikson, E. H. (1968). *Identity: Youth and crisis* (pp. 200–250). W. W. Norton & Company.
- Finslerås, T. R., Hella, R. T., Andersen, A. I. O., et al. (2024). Digital self-presentation and adolescent mental health: Cross-sectional and longitudinal findings from the LifeOnSoMe study. *BMC Public Health*, 24, Article 2635. BioMed Central (Springer Nature).
- Jahoda, M. (1958). *Current concepts of positive mental health* (pp. 18–20). Basic Books.
- Khlovov, K. D., Bocharov, A. A., & Korneev, A. A. (2021). Well-being and coping with stress among Russian adolescents in different educational environments. *Psychology in Russia: State of the Art*, 14(3), 68–80. <https://doi.org/10.11621/pir.2021.0305>

- Marston, E. G., et al. (2010). Rejection sensitivity in late adolescence: Social and emotional sequelae. *Journal of Research on Adolescence*, 20(4), 959–982.
<https://doi.org/10.1111/j.1532-7795.2010.00675.x>
- McLeod, S. (2025). Maslow’s hierarchy of needs.
https://www.researchgate.net/publication/383241976_Maslow's_Hierarchy_of_Needs
- Nesi, J. (2020). The impact of social media on youth mental health: Challenges and opportunities. *North Carolina Medical Journal*, 81(2), 116–121.
<https://doi.org/10.18043/ncm.81.2.116>
- Papoyan, V., & Galstyan, A. (2025). Person’s psychological well-being as a prerequisite for mental health. *Georgian Medical News*, 10(367), 81–87.
- Steinberg, L. (2017). *Adolescence* (11th ed., pp. 26–27). McGraw-Hill Education.
- Twenge, J. (2017). *iGen* (Ch. 4: “Insecure,” pp. 71–75). Atria Books.
- Volkova, E. N., & Sorokoumova, G. V. (2024). Psychological criteria of adolescent well-being in the context of digital socialization. *Social Psychology and Society*, 15(2), 12–27. Moscow State University of Psychology & Education.

**«ԱՆՃԻ ԻՆՔՆԱՓՈՓՈՒՄԱՆ ՆԵՐՈՒԺ» ՀԱՐՑԱՇԱՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ CVI
ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ**

ՄԱՐԻԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում ներկայացվում են «Անձի ինքնափոփոխման ներուժ» հարցաշարի հայերեն տարբերակի տեղայնացման և բովանդակային վավերականացման արդյունքները: Աշխատանքի նպատակն է ստեղծել հուսալի գործիք Հայաստանում մասնագիտության փոփոխության խնդիրներն ուսումնասիրելու համար: Հարցաշարն ուղղված է անձի ինքնափոփոխման պահանջմունքի, ինքնափոփոխման գիտակցված ընդունակության, հնարավորությունների և սեփական փոփոխության հանդեպ սուբյեկտիվ վստահության գնահատմանը: Հարցաշարի լեզվական ադապտացիան իրականացվել է հետ-թարգմանության դասական ընթացակարգով ապահովելով բնօրինակի հետ հայեցակարգային և իմաստային համարժեքությունը: Հետազոտությանը մասնակցել է հոգեբանության ոլորտի 9 փորձագետ (ՀՀ բուհերի դասախոսներ և գիտաշխատողներ), որոնց գնահատականների հիման վրա իրականացվել է խառը մեթոդների վերլուծություն՝ համատեղելով բովանդակային վավերականության ինդեքսի (CVI) քանակական հաշվարկը և փորձագետների մեկնաբանությունների որակական վերլուծությունը: Վերլուծության արդյունքում, հիմնվելով I-CVI ցուցանիշների (ընդունելի շեմ ≥ 0.78) և որակական մեկնաբանությունների վրա, սկզբնական 24 պնդումներից ձևավորվել է հարցաշարի վերջնական՝ 23-կետանոց տարբերակը: Մանդրակի ընդհանուր բովանդակային վավերականության ինդեքսը (S-CVI/Ave) կազմել է 0.90, ինչը գերազանց ցուցանիշ է: Ստացված արդյունքները վկայում են, որ գործիքը կարող է արդյունավետորեն կիրառվել ինչպես հետազոտական նպատակներով, այնպես էլ կարիերայի խորհրդատվության և ՄՌԿ ոլորտներում՝ անձի ներքին ռեսուրսները գնահատելու համար: Արդյունքները վկայում են, որ գործիքի ադապտացված տարբերակն օժտված է բարձր բովանդակային վավերականությամբ և հետագա հոգեչափական ուսումնասիրությունների (հուսալիության և կառուցվածքային վավերականության ստուգում) հուսալի հիմք է:

Բանալի բառեր – *անձի ինքնափոփոխման ներուժ, մասնագիտության փոփոխություն, բովանդակային վավերականություն, CVI, հարցաշարի ադապտացիա, անձնային ներուժ*

* **Մարիամ Մանուկյան** – ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի հայցորդ
Мариам Манукян – соискатель кафедры общей психологии ЕГУ
Mariam Manukyan – Applicant at the Chair of General Psychology, YSU
Էլ. փոստ՝ m.manukyan@ysu.am ORCID ID: <https://orcid.org/0000-0002-7291-4771>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 21.01.2026
Գրախոսվել է՝ 05.02.2026
Հաստատվել է՝ 02.04.2026
© The Author(s) 2026

Ժամանակակից աշխարհում տեխնոլոգիական արագ զարգացումները հանգեցրել են այն բանին, որ մասնագիտության փոփոխությունը դարձել է սովորական երևույթ, ինչը կարևորագույն հարցեր է առաջացնում անձի հարմարման, ճկունության և ներքին ռեսուրսների վերաբերյալ: Այս համատեքստում առանցքային դեր է խաղում անձնային ներուժը, որի կարևորագույն բաղադրիչներից է անձի «ինքնափոփոխման ներուժը»: Բարձր ներուժով անհատներն ավելի պատրաստ են կարիերայի փոփոխության հետ կապված մարտահրավերներին:

Այս կարևորագույն կոնստրուկտի էմպիրիկ ուսումնասիրությունը և գործնական կիրառությունը (օրինակ՝ կարիերայի խորհրդատվության մեջ) պահանջում են հուսալի և վավեր հոգեդիագնոստիկ գործիքի առկայություն: Ներկայումս հայկական դաշտում գոյություն չունի «անձի ինքնափոփոխման ներուժը» չափող ստանդարտացված և վավերացված գործիք, ինչը էականորեն խոչընդոտում է տեղական ընտրանքի վրա հետազոտությունների անցկացումը: Սույն հոդվածի նպատակն է լրացնել այդ բացը՝ ներկայացնելով հարցաշարի ու բովանդակային վավերականացման գործընթացը և արդյունքները՝ հայկական համատեքստում հետազոտ կիրառման համար հուսալի հիմք ստեղծելու նպատակով:

Ինչպես նշեցինք, մարդու փոփոխականության խնդիրը ժամանակակից հոգեբանության հիմնական թեմաներից է: «Անձի ինքնափոփոխման ներուժ» հասկացությունը ներառում է մարդու կարողությունը և պատրաստակամությունը՝ գիտակցելու իրավիճակի առաջ քաշած «մարտահրավերները» և փոփոխությունների անհրաժեշտությունը¹:

Գրիշինան և համահեղինակները իրենց մենագրության մեջ նշում են, որ վերջին տարիներին միջազգային հոգեբանական կոնգրեսներում և կոնֆերանսներում մշտապես քննարկվում է մարդու ինքնագործընթացների (ինքնազարգացում, ինքնակարգավորում) թեման: Նրանք անձի փոփոխությունների թեմային վերաբերող յուրօրինակ մոտեցում են առաջարկում՝ ներմուծելով «ինքնափոփոխության ներուժ» հասկացությունը: Այդ հասկացությունը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ փոփոխությունների կարիքը, գիտակցված ինքնափոփոխությունների ունակությունը, ինքնափոփոխությունների ռեսուրսների առկայությունը և հավատը սեփական ինքնափոփոխությունների հնարավորության հանդեպ²:

¹ Տե՛ս **Гришина Н.В.** «Самоизменения» личности: возможное и необходимое // Вестник Санкт-Петербургского университета. Психология и педагогика. 2018. Т. 8. Вып. 2. С. 126–138. <https://doi.org/10.21638/11701/spbu16.2018.202>

² Տե՛ս **Гришина Н.В., Манукян В.Р., Муртазина И.Р., Аванесян М.О.** Самоизменения личности: Проблемы, модели, исследования. Коллективная монография под ред. Гришиной Н.В.. – СПб., Изд-во С.-Петербург. ун-та, 2021. – 348 էջ:

Վերը նշված հասկացությունը կարելի է ուսումնասիրել «անձի ինքնափոփոխման ներուժը» հարցարանով: Այն կազմվել է Վ. Մանուկյանի, Ի. Մուրտազինայի ու Ն. Գրիշինայի կողմից՝ անձի ինքնափոփոխման ընդունակությունը դուրս բերելու համար: Հարցաշարի հայերեն տարբերակի ադապտացումն իրականացվել է բնօրինակի հեղինակներից մեկի՝ Վ. Ռ. Մանուկյանի կողմից տրված պաշտոնական թույլտվության հիման վրա: Հարցարանը կազմված է 24 հարցից, որտեղ առաջարկվում է գնահատել պնդումներն ըստ համաձայնության աստիճանի՝ 5 բալանոց սանդղակով: Հարցարանի հարցերը դասակարգված են ըստ չորս գործոնների. 1) «Ինքնափոփոխման պահանջունք», որը բնութագրվում է նորոյթին, բազմազանությանը և փոփոխություններին դրական վերաբերմունքի ձգտմամբ («ուզում եմ փոխվել»), 2) «Գիտակցված ինքնափոփոխման ընդունակություն», որը արտացոլում է մարդու ընդունակությունը գիտակցորեն աշխատելու ինքն իր վրա և պլանավորված փոփոխություններին հասնելու կարողությունը («պետք է փոխվել»), 3) «Հավատ ինքնափոփոխությամբ հնարավորության հանդեպ», ինչը ներառում է այն ոչ բացահայտ համոզմունքը, որ մարդիկ կարող են գիտակցաբար փոխել իրենց բնույթը և վարքը կյանքի ընթացքում, 4) «Ինքնափոփոխման հնարավորիություն», որը կապված է հոգեկան ռիզիկոյության հետ և փոփոխություն պահանջող իրավիճակներում ճկունության աստիճանի հետ («կարող եմ փոխվել»)³:

Նախքան բովանդակային վավերականացման փուլին անցնելը իրականացվել է հարցաշարի լեզվական ադապտացիա՝ հետթարգմանության դասական ընթացակարգի կիրառմամբ: Հարցաշարի ռուսերեն տարբերակը սկզբնապես թարգմանվել է հայերեն՝ երկու լեզուների անկախ մասնագետների կողմից:

Այնուհետև ստացված հայերեն տարբերակը մեկ այլ անկախ մասնագետի կողմից, ով ծանոթ չէր բնօրինակ տեքստին, հետ է թարգմանվել ռուսերեն: Վերջին փուլում համեմատել ենք բնօրինակ ռուսերեն տարբերակը և թարգմանված տարբերակը՝ բացահայտելու և լուծելու իմաստային և ոճական անհամապատասխանությունները: Այս գործընթացի նպատակն էր ապահովել ոչ թե բառացի, այլ հայեցակարգային և իմաստային համարժեքություն՝ ստանալով հարցաշարի նախնական հայերեն տարբերակը, որն էլ արդեն ներկայացվել է փորձագիտական գնահատման:

Բովանդակային վավերականության գնահատման համար ձևավորվել է փորձագիտական խումբ՝ բաղկացած 9 մասնագետից (ՀՀ բուհերի դասախոսներ և գիտաշխատողներ), որոնց կողմից գնահատվել է հարցաշարի 24 պնդումը: Հետազոտությունը իրականացվել է առցանց: Հարցաշարի ամեն պնդում փորձագետներին ներկայացվել է առանձին, որտեղ նշված է եղել, թե ինչ գործոն է չափում տվյալ պնդումը, ինչպես նաև՝ պնդման բնօրինակ (ռուսերեն)

³ Sté u Манукян, В.Р., Муртазина, И.Р., Гришина, Н.В. (2020). Опросник для диагностики потенциала самоизменений личности. *Консультативная психология и психотерапия*, 28(4), 35–58. <https://doi.org/10.17759/cpp.2020280403>

տարբերակը: Փորձագետներին առաջարկվել է գնահատել պնդման հայերեն թարգմանության համապատասխանությունը գործոնին: Իսկ գնահատումը իրականացվել է 1-5-բալանոց սանդղակով, որտեղ 1 միավոր է տրվում, եթե ընդհանրապես չի համապատասխանում, իսկ 5 միավոր՝ երբ լիովին համապատասխանում է: Քանակական գնահատումից բացի, փորձագետները թողել են մեկնաբանություններ և առաջարկներ: Վերջինիս որակական վերլուծության հիման վրա էլ իրականացրել ենք փոփոխություններ: Արդյունքների վերլուծության համար կիրառել ենք խառը մեթոդների հետազոտությունը, որը համատեղում է որակական ու քանակական մեթոդները: Մենք կիրառել ենք հաջորդական բացատրական մոտեցումը, որտեղ քանակական տվյալները վերլուծվել են նախապես, իսկ դրանից հետո վերլուծվել են որակական տվյալները՝ լրացնելով նախորդները⁴:

Քանակական տվյալների վերլուծության համար մենք կիրառել ենք բովանդակային վավերականության ինդեքսի (Content Validity Index - CVI) մեթոդը: Բովանդակային վավերականությունը սահմանվում է որպես աստիճան, որը գնահատում է, թե որքանով են գնահատման գործիքի բաղադրիչները համապատասխանում չափվող կոնստրուկտին: Իսկ վերջինիս քանակական ցուցիչ է բովանդակային վավերականության ինդեքսը (CVI)⁵:

Այս մեթոդը թույլ է տալիս քանակականորեն գնահատել փորձագետների համաձայնության աստիճանը յուրաքանչյուր պնդման բովանդակության վերաբերյալ: Մեր դեպքում 5-բալանոց գնահատման սանդղակը դիտարկել ենք երկու մասով, որտեղ 4 (տեղին է) և 5 (լիովին տեղին է) գնահատականները համարել ենք համապատասխան, իսկ 1, 2, 3 գնահատականները՝ անհամապատասխան: Վերլուծությունը կենտրոնացրել ենք երկու հիմնական ցուցանիշի վրա. I-CVI (Item-CVI): Առանձին կետի վավերականության ինդեքս, որը հաշվարկվում է որպես «համապատասխան» գնահատական տված փորձագետների համամասնությունը (թիվը՝ բաժանած փորձագետների ընդհանուր թվի վրա): 9 փորձագետից բաղկացած խմբի համար որպես նվազագույն ընդունելի շեմ մենք սահմանեցինք 0.78-ը: S-CVI/Ave (Scale-CVI, Average): Ամբողջ սանդղակի միջին վավերականության ինդեքսը մենք հաշվարկել ենք որպես վերջնական սանդղակում պահպանված բոլոր կետերի I-CVI ցուցանիշների միջին թվաբանական: Ընդունված է S-CVI-ի ≥ 0.90 ցուցանիշը գնահատել որպես գերազանց: Յուրաքանչյուր պնդման վերաբերյալ վերջնական որոշում

⁴ St' u **Taherdoost H.** What are Different Research Approaches? Comprehensive Review of Qualitative, Quantitative, and Mixed Method Research, Their Applications, Types, and Limitations. Journal of Management Science & Engineering Research, 2022, 5 (1), էջ 53-63. ff10.30564/jmsr.v5i1.4538ff. ffhal-03741840f

⁵ St' u **Yusoff MSB.** ABC of content validation and content validity index calculation. Education in Medicine Journal. 2019;11(2):49-54. <https://doi.org/10.21315/eimj2019.11.2.6>

կայացնելու համար մենք մշակել ենք որոշումների կայացման կանոնների համակարգ՝ հիմնվելով Polit-ի և Beck-ի սահմանած CVI-ի շեմային արժեքների վրա և ինտեգրելով դրանք փորձագետների կողմից տրված որակական մեկնաբանություններին: Այն պնդումները, որոնց I-CVI ցուցանիշը ցածր էր 0.78 շեմից, հեռացվել են: Բարձր I-CVI ունեցող և էական դիտողությունների չարժանացած պնդումները պահպանվել են, իսկ սահմանային (I-CVI = 0.78) կամ կարևոր որակական մեկնաբանություններ ունեցող կետերը ենթարկվել են վերանայման՝ փորձագետների առաջարկների հիման վրա⁶:

Սանդղակի ընդհանուր բովանդակային վավերականության ինդեքսը կազմել է 0.89 (S-CVI/Ave), որը վկայում է այն մասին, որ բովանդակային վալիդության ցուցանիշը բարձր է (S-CVI/Ave \geq 0.90 համարվում է գերազանց, S-CVI \geq 0.80 համարվում է լավ): Այսինքն՝ վիճելի պնդումների հեռացումից կամ վերանայումից հետո սանդղակը բովանդակային առումով բարձր կիրառելիություն կունենա: Սանդղակի CVI ցուցանիշները, ըստ յուրաքանչյուր պնդման, կարող ենք տեսնել աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հարցարանի բովանդակային վավերականացման քանակական ցուցանիշներ

№	Պնդում	CVI	Որոշում
1	Ցանկացած փոփոխություն ինձ դիսկոմֆորտ է պատճառում:	0.89	Պահպանել
2	Ես սիրում եմ ռիսկ և արկածներ:	0.78	Վերանայել
3	Ինձ համար կարևոր է կյանքում շատ տարբեր գործեր անելը:	0.78	Վերանայել
4	Մարդիկ ընդունակ չեն փոխելու իրենց որոշակի ուղղությամբ:	1	Պահպանել
5	Ես փորձում եմ օգտագործել տարբեր հնարավորություններ՝ նոր փորձ ձեռք բերելու և սեփական կարողությունները զարգացնելու համար:	1	Պահպանել
6	Ինձ դուր է գալիս տիրապետել գործունեության նոր տեսակների:	1	Պահպանել
7	Ես սիրում եմ դնել նպատակներ և պլանավորել դրանց իրականացումը:	0.78	Վերանայել
8	Ես ձգտում եմ զարգացնել իմ պոտենցիալ կարողությունները:	1	Պահպանել
9	Կարծում եմ, որ մարդիկ ի գործու չեն էականորեն փոխելու իրենց բնավորությունը:	1	Պահպանել

⁶ Sté u Polit DF, Beck CT. The content validity index: are you sure you know what's being reported? Critique and recommendations. Res Nurs Health. 2006 Oct;29(5):489-97. doi: 10.1002/nur.20147. PMID: 16977646

10	Ես դժվարությամբ եմ փոխում իմ համոզմունքները:	1	Պահպանել
11	Մարդիկ կյանքի ընթացքում հոգեբանական փոփոխություններ են կրում:	0.67	Հեռացնել
12	Ընտրության անհրաժեշտության դեպքում ես սովորաբար նախընտրում եմ լավ ծանոթը և հասկանալին, քան նորը և անսովորը:	0.89	Պահպանել
13	Ես բաց եմ ամեն նոր բանի համար:	0.78	Վերանայել
14	Փոխվելու, «անձնային աճի» անհրաժեշտությունը ինձ դրական հույզեր է պատճառում:	0.89	Պահպանել
15	Ես շատ եմ մտահոգվում, երբ ստիպված եմ լինում հրաժարվել սեփական տեսակետից և ընդունել մեկ այլը, նույնիսկ եթե հասկանում եմ դրա անհրաժեշտությունը:	0.78	Վերանայել
16	Ես ուրախությամբ ձեռնամուխ եմ լինում աշխատանքին, եթե գիտեմ, որ այն ինձանից նոր հմտություններ է պահանջելու:	0.89	Պահպանել
17	Ես ընդունակ եմ իմ մեջ որոշակի որակներ զարգացնելու:	0.89	Պահպանել
18	Ինձ համար կարևոր է, որ ունենամ մշտական տեղ աշխատավայրում, սեղանի շուրջը, պարավունքների ժամանակ և այլն:	0.89	Պահպանել
19	Մարդկանց սովորաբար հաջողվում է ազատվել այն սովորություններից, որոնք իրենց դուր չեն գալիս:	1	Պահպանել
20	Ես համարում եմ, որ ցանկության դեպքում մարդը կարող է փոխել իր բնավորությունը:	0.78	Վերանայել
21	Ընտրության դեպքում ես կնախընտրեմ նորը, քան սովորականը:	0.89	Պահպանել
22	Անհրաժեշտության դեպքում մարդիկ կարող են փոխել իրենց վարքը, բայց ոչ հիմնական գծերը:	0.78	Վերանայել
23	Իմ կյանքը շատ քիչ է կախված հանգամանքներից, քանի որ ես փորձում եմ ինքս փոփոխություններ անել:	1	Պահպանել
24	Ես ինձ զգում եմ իմ կյանքի «հեղինակ»:	0.89	Պահպանել

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 24 պնդումներից 16-ի I-CVI ցուցանիշը 0.89 կամ 1 միավոր է, սակայն ունենք 7 կետ, որոնց ցուցանիշները սահմանային են՝ 0.78 միավոր (պնդումներ 2, 3, 7, 13, 15, 20, 22). քանի որ սա ընդունելիության նվազագույն սահմանն է, պնդումները ենթարկվել են վերաձևակերպման՝ հիմնվելով փորձագետների տված մեկնաբանությունների որակական վերլուծության վրա: Առավել «խնդրային է» 11-րդ պնդումը,

որի I-CVI ցուցանիշը 0.67 միավոր է, որը զգալիորեն ցածր է ընդունելիության 0.78 շեմից: Հաշվի առնելով սա՝ որոշում է կայացվել հետազննել այս կետը հարցաշարի վերջնական տարբերակից:

Թեև հաջորդիվ քննարկվող բոլոր պնդումների ցուցանիշները ֆորմալ առումով ընդունելի են (CVI = 0.78), հարկ ենք համարել վերանայել դրանք՝ հիմնվելով փորձագետների տված պատասխանների որակական վերլուծության արդյունքների վրա: Դիտարկենք հետևյալ պնդումը. «2. Ես սիրում եմ ռիսկ և արկածներ», որը հարցաշարում հանդես է գալիս որպես «ինքնափոփոխման պահանջումնք» գործոնի հակադարձ ցուցիչ, փորձագիտական գնահատման ընթացքում քննադատության արժանացավ, քանի որ փորձագետները համաձայն չէին դրա հակադարձ լինելու տրամաբանությանը: Չնայած այս դիտարկմանը՝ որոշում կայացրինք պահպանել այն. ստորև ներկայացված է հիմնավորումը: Ըստ հարցաշարի հեղինակների՝ «ինքնափոփոխման հնարավորություն» գործոնը մեկնաբանվում է որպես հոգեբանական ռիզիկոյության ցուցիչ, այսինքն՝ փոփոխություններ պահանջող իրավիճակում ճկունության աստիճան⁷: Այս համատեքստում կարելի է ենթադրել, որ նպատակաուղղված ինքնափոփոխումը պահանջում է որոշակի «դրական ռիզիկոյություն» հետևողականություն, որը «Մեծ հնգյակի» տեսության մեջ համապատասխանում է «Բարեխղճություն» անձնային գծին: Միևնույն ժամանակ, «ռիսկի և արկածների» նկատմամբ հակվածությունը «Մենսացիաների որոնման» (Sensation Seeking) դրսևորում է⁸, որը, ըստ մի շարք հետազոտությունների, բացասական փոխկապակցվածություն ունի «Բարեխղճության» հետ⁹: Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ ռիսկի և արկածների նկատմամբ հակվածությունը կարող է վկայել այն հետևողականության և ինքնակարգավորման պակասի մասին, որը անհրաժեշտ է ինքնափոփոխման համար, ինչն էլ հիմնավորում է պնդման հակադարձ բնույթը:

Հաջորդ պնդումը՝ «3. Ինձ համար կարևոր է կյանքում շատ տարբեր գործեր անելը», ենթարկվել է վերանայման՝ հիմնվելով փորձագետների որակական մեկնաբանությունների վրա: Վերջնական տարբերակում այն

⁷ Տե՛ս **Манукян, В.Р., Мургазина, И.Р., Гришина, Н.В.** (2020). Опросник для диагностики потенциала самоизменений личности. *Консультативная психология и психотерапия*, 28(4), 35–58. <https://doi.org/10.17759/cpp.2020280403>

⁸ Տե՛ս **Zuckerman, M.** (2007). Sensation Seeking. In M. Zuckerman, *Sensation seeking and risky behavior* (էջ 3–49). American Psychological Association. <https://doi.org/10.1037/11555-001>

⁹ Տե՛ս **Aluja, A., Garcia, Ó., & Garcia, L. F.** (2002). A comparative study of Zuckerman's three structural models for personality through the NEO-PI-R, ZKPQ-III-R, EPQ-RS and Goldberg's 50-bipolar adjectives. *Personality and Individual Differences*, 33(5), 713-725:

ձևակերպվել է հետևյալ կերպ. «Ինձ համար կարևոր է կյանքում շատ տարբեր բաներով զբաղվելը»: Հաջորդ պնդումն է՝ «7. Ես սիրում եմ դնել նպատակներ և պլանավորել դրանց իրականացումը»: Փորձագետներից երկուսի կարծիքով՝ արժե պնդման վերջին հատվածը վերաձևակերպել, դարձնել՝ դրանց հասնելը, երկու այլ փորձագետների առաջարկում են փոխել պնդման սկզբի հատվածի շարադասությունը: Այսպիսով՝ պնդման վերջնական տարբերակն է «Ես սիրում եմ նպատակներ դնել ու պլանավորել դրանց հասնելը»: Հաջորդ պնդումն է «13. Ես բաց եմ ամեն նոր բանի»: Փորձագետների կարծիքները կիսվել են. նրանցից երկուսը առաջարկում են վերջում ավելացնել *համար* բառը, իսկ մյուս երկուսը՝ *առջև* բառը: Մենք հակված ենք «Ես բաց եմ ամեն նոր բանի համար» տարբերակին: Հաջորդ պնդումն է «15. Ես շատ եմ մտահոգվում, երբ ստիպված եմ լինում հրաժարվել սեփական տեսակետից և ընդունել մեկ այլը, նույնիսկ եթե հասկանում եմ դրա անհրաժեշտությունը»: Մեկնաբանությունները հաշվի առնելով՝ պնդման վերջնական տարբերակն է. «Ես շատ եմ անհանգստանում, երբ հարկադրված եմ լինում հրաժարվել սեփական տեսակետից և ընդունել մեկ այլ տեսակետ, նույնիսկ եթե հասկանում եմ դրա անհրաժեշտությունը»: Հաջորդ պնդումն է՝ «20. Ես համարում եմ, որ ցանկության դեպքում մարդը կարող է փոխել իր բնավորությունը»: Փորձագետներից երեքը առաջարկել են ավելացնել «բավականին ուժեղ», երկուսը՝ «էականորեն» արտահայտությունները: Պնդման վերջնական տեսքն է «Ես համարում եմ, որ ցանկության դեպքում մարդը կարող է էականորեն փոխել իր բնավորությունը»: Վերջնական տարբերակում նախապատվությունը տրվեց «էականորեն» մակբային, քանի որ այն բնութագրում է փոփոխության որակական խորությունը, ի տարբերություն «բավականին ուժեղ» տարբերակի, որը նկարագրում է միայն դրա ինտենսիվությունը: Վերջին պնդումն է. «22. Անհրաժեշտության դեպքում մարդիկ կարող են փոխել իրենց վարքը, բայց ոչ հիմնական գծերը»: Փորձագետները առաջարկել են փոփոխել պնդման վերջին հատվածը, այսպիսով, վերջնական տարբերակն է՝ «Անհրաժեշտության դեպքում մարդիկ կարող են փոխել իրենց վարքը, բայց հիմնական գծերը անփոփոխ են»:

Այսպիսով, 24 պնդումներից 7-ը ենթակա էին վերանայման, որից 6-ում կատարեցինք փոփոխություններ՝ հիմնվելով փորձագետների կարծիքների որակական վերլուծության վրա: Հարկ է նշել, որ վերանայման ենթակա պնդումները չէին վերաբերում մեկ գործոնին, այլ հինգ գործոնների մեջ բաշխված էին հավասարաչափ: Մանդակի կրած փոփոխությունները բարձրացրին S-CVI/Ave գործակիցը՝ դարձնելով այն ավելի վավերական: Հետաքրքիր է նշել, որ թեև սկզբնական (24 կետ) և վերջնական (23 կետ)

սանդղակների S-CVI/Ave ցուցանիշները կլորացնելիս երկուսն էլ 0.89 են, դրանց իրական արժեքները և մեթոդաբանական նշանակությունը տարբեր են, քանի որ 11-րդ պնդման հետազոտմից հետո միջինը կազմեց 0.895, իսկ մինչ այդ 0.885 էր, թվային տարբերությունը թվում է չնչին, բայց նշանակությունը կարևոր է: Իրականացված բովանդակային վավերականացման արդյունքում ձևավորվեց հարցաշարի 23-կետանոց տարբերակը:

Սույն գործիքը հետազոտողներին հնարավորություն է տալիս ուսումնասիրելու անձնային աճի, կարիերայի կառավարման հետ կապված հիմնախնդիրներ, իսկ պրակտիկայում կարող է կիրառվել հոգեբանության տարբեր ճյուղերում՝ ՄՌԿ-ում, որպես հոգեդիագնոստիկ միջոց՝ գնահատելու անձի պատրաստակամությունը ու ներքին ռեսուրսները սեփական կյանքում փոփոխություններ մտցնելու հարցում: Սույն աշխատանքը «Անձի ինքնափոփոխման ներուժ» հարցաշարի ադապտացիայի գործընթացի առաջին փուլն է, բովանդակային վավերականացումը: Այն հիմք է ստեղծում հետագա հետազոտությունների համար, պլանավորվում է հետագայում իրականացնել կառուցողական վալիդության և ներքին հուսալիության չափում:

Այսպիսով, սույն հետազոտության շրջանակներում իրականացվեց «Անձի ինքնափոփոխման ներուժ» հարցաշարի հայերեն տարբերակի ադապտացիա և բովանդակային վավերականացում: 9 փորձագետի մասնակցությամբ իրականացված քանակական (CVI) և որակական վերլուծության արդյունքում ձևավորվեց գործիքի վերջնական՝ 23-կետանոց տարբերակը, որն օժտված է բարձր բովանդակային վավերականությամբ (S-CVI/Ave = 0.90): Այս աշխատանքը ոչ միայն հայկական գիտական դաշտը համալրում է նոր վավերացված գործիքով, այլև ստեղծում է անհրաժեշտ մեթոդաբանական հիմք՝ ատենախոսական ավելի լայն հետազոտության շրջանակներում էմպիրիկորեն ուսումնասիրելու անձի ինքնափոփոխման ներուժի գործառական ազդեցությունը մասնագիտության փոփոխության որոշում կայացնելու վրա:

МАРИАМ МАНУКЯН – Оценка содержательной валидности опросника «потенциал самоизменений личности» с использованием метода CVI. – Цель данной статьи – представить результаты адаптации и содержательной валидизации армянской версии опросника «Потенциал самоизменений личности» с целью создания инструмента для последующего изучения его влияния на смену профессии в Армении. Опросник направлен на оценку таких ключевых компонентов, как потребность в изменениях, способность к сознательному самоизменению, личностные ресурсы и вера в возможность самоизменений. Языковая адаптация опросника проводилась с использованием процедуры обратного перевода (back-translation), обеспечивающей концептуальную и смысловую эквивалентность оригиналу. В исследовании приняли участие 9 экспертов в области психологии (преподаватели и научные сотрудники вузов РА), на основе оценок которых был проведен смешанный анализ, сочетающий количественный расчет индекса содержательной валидности (CVI) и качественный анализ комментариев

экспертов. В результате анализа, на основе показателей I-CVI (допустимый порог ≥ 0.78) и качественных комментариев, из первоначальных 24 утверждений была сформирована окончательная, 23-пунктная версия опросника. Общий индекс содержательной валидности шкалы (S-CVI/Ave) составил 0.90, что является превосходным показателем. Полученные результаты свидетельствуют о том, что инструмент может эффективно применяться как в исследовательских целях, так и в практике карьерного консультирования и управления персоналом (HRM). Адаптированная версия обладает высокой содержательной валидностью и служит надежной основой для дальнейших психометрических исследований, включая проверку надежности и конструктивной валидности.

Ключевые слова: потенциал самоизменений личности, смена профессии, содержательная валидность, CVI, адаптация опросника, личностный потенциал

MARIAM MANUKYAN – Content Validity Assessment of the "Personal Self-Transformation Potential" Questionnaire Using the CVI Method. – The purpose of this article is to present the results of the adaptation and content validation of the Armenian version of the "Potential for Personal Self-Transformation" questionnaire, with the aim of creating an instrument to study its impact on career change in Armenia. The questionnaire is designed to assess key components such as the need for change, conscious self-transformation ability, personal resources, and belief in the possibility of self-change. The linguistic adaptation of the questionnaire was carried out using the back-translation procedure, ensuring conceptual and semantic equivalence with the original. The study involved 9 experts from the field of psychology (university lecturers and researchers), based on whose ratings a mixed-methods analysis was conducted, combining quantitative (Content Validity Index - CVI) calculation and qualitative analysis of the experts' comments. As a result of the analysis, based on the I-CVI scores (acceptable threshold ≥ 0.78) and qualitative feedback, a final 23-item version of the questionnaire was formed from the initial 24 items. The overall content validity index of the scale (S-CVI/Ave) was 0.90, which is considered an excellent score. The findings suggest that the instrument can be effectively utilized both for research purposes and in career counseling and Human Resource Management (HRM) to assess personal resources. The adapted version possesses high content validity and serves as a reliable basis for future psychometric studies, including reliability testing and construct validation.



Key words: potential for personal self-transformation, career change, content validity, CVI, questionnaire adaptation, personal potential

Չբախանալիքի ցանկ / References

- Гришина Н.В. (2018). «Самоизменения» личности: возможное и необходимое. *Вестник Санкт-Петербургского университета. Психология и педагогика*, 8(2), 126–138. <https://doi.org/10.21638/11701/spbu16.2018.202> / Grishina, N. V. (2018). «Samoizmeneniya» lichnosti: vozmozhnoe i neobkhodimoe ["Self-changes" of personality: possible and necessary]. *Vestnik Sankt-Peterburgskogo universiteta. Psikhologiya i pedagogika [Sankt-Petersburg University Gazette. Psychology and Pedagogy]*, 8(2), 126–138.
- Гришина Н.В., Манукян В.Р., Муртазина И.Р., Аванесян М.О. (2021). Самоизменения личности: Проблемы, модели, исследования. Коллективная монография. СПб., Изд-во С.-Петерб. ун-та. / Grishina, N. V., Manukyan, V. R., Murtazina, I. R., & Avanesyan, M. O. (2021). *Samoizmeneniya lichnosti: Problemy, modeli, issledovaniya* [Self-changes of personality: Problems, models, research]. Kollektivnaya monografiya. SPb.: Izd-vo S.-Peterb. un-ta.
- Манукян, В.Р., Муртазина, И.Р., Гришина, Н.В. (2020). Опросник для диагностики потенциала самоизменений личности. *Консультативная психология и психотерапия*, 28(4), 35–58. <https://doi.org/10.17759/cpp.2020280403> / Manukyan, V. R., Murtazina, I. R., & Grishina, N. V. (2020). Oprosnik dlya diagnostiki potentsiala samoizmeneniy lichnosti [Questionnaire for diagnosing the potential for self-changes of personality]. *Konsul'tativnaya psikhologiya i psikhoterapiya [Counseling Psychology and Psychotherapy]*, 28(4), 35–58. <https://doi.org/10.17759/cpp.2020280403>

- Aluja, A., García, L. F., & García, O. (2002). A comparative study of Zuckerman's three structural models for personality through the NEO-PI-R, ZKPQ-III-R, EPQ-RS and Goldberg's 50-bipolar adjectives. *Personality and Individual Differences, 33*(5), 713-725.
- Polit, D. F., & Beck, C. T. (2006). The content validity index: are you sure you know what's being reported? Critique and recommendations. *Research in Nursing & Health, 29*(5), 489-497. <https://doi.org/10.1002/nur.20147>
- Taherdoost, H. (2022). What are Different Research Approaches? Comprehensive Review of Qualitative, Quantitative, and Mixed Method Research, Their Applications, Types, and Limitations. *Journal of Management Science & Engineering Research, 5*(1), 53-63.
- Yusoff, M. S. B. (2019). ABC of content validation and content validity index calculation. *Education in Medicine Journal, 11*(2), 49-54. <https://doi.org/10.21315/eimj2019.11.2.6>
- Zuckerman, M. (2007). *Sensation seeking and risky behavior*. American Psychological Association.

**ՔԱՂՑԿԵՂ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ
ՓՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ՄՏԵՐԻՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ, ԿՅԱՆՔԻ
ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԵՎԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ 
Ուռուցքաբանության ազգային կենտրոն
ԵՎԱ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Քաղցկեղը համարվում է 21-րդ դարի առողջապահական ոլորտի մարտահրավերներից մեկը: Հիվանդության փաստը հաճախ վերաձվում է էքզիստենցիալ ճգնաժամի՝ ուղեկցվելով հուսահատությամբ, ապագայի հանդեպ անորոշությամբ և կյանքի վերաիմաստավորման անհրաժեշտությամբ: Հատկապես պալիատիվ բուժման փուլում գտնվող պացիենտների համար հիվանդությունը վերաձվում է ոչ միայն բժշկական, այլև հոգեբանական բարդ փորձության, որը պահանջում է հարմարողական նոր մոտեցումներ:

Հոդվածում ներկայացվում են հիվանդության փուլի վերաբերյալ պալիատիվ բուժում ստացող՝ քաղցկեղ ունեցող անձանց տեղեկացվածության և նրանց կյանքի իմաստավորման, մտերիմների հետ կապվածության առանձնահատկությունների ու հուսահատության դրսևորումների միջև առկա կապի հետազոտության արդյունքները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ պալիատիվ բուժման փուլում քաղցկեղ ունեցող անձանց կյանքի վերաիմաստավորման, մտերիմների հետ կապվածության և հուսահատության արտահայտվածության վրա, որպես կարևոր հոգեբանական գործոն, էական ազդեցություն ունի հիվանդության փուլի մասին պա-

* **Եվա Ղուկասյան** – Ուռուցքաբանության ազգային կենտրոնի կլինիկական հոգեբան

Ева Гукасян – клинический психолог Национального центра онкологии

Yeva Ghukasyan – Clinical psychologist at the National Center of Oncology

Էլ. փոստ՝ yeva.ghukasyan1@gmail.com ORCID ID:<https://orcid.org/0009-0000-9506-600X>

** **Եվա Ասրիբաբայան** – ԵՊՀ սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի դասախոս

Ева Асрибабаян – преподаватель кафедры социальной и клинической психологии ЕГУ

Yeva Asribabayan – Lecturer at the Chair of Social and Clinical Psychology, YSU

Էլ. փոստ՝ yeva.asribabayan@gmail.com ORCID ID:<https://orcid.org/0009-0008-8250-3707>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 16.02.2026

Գրախոսվել է՝ 22.02.2026

Հաստատվել է՝ 02.04.2026

© The Author(s) 2026

ցինտների տեղեկացվածությունը: Մասնավորապես, հիվանդության փուլի մասին տեղեկացված անձանց շրջանում կյանքի իմաստի որոնումն առավել արտահայտված է, նրանք փորձում են վերաարժեքել իրենց գոյությունը, վերաիմաստավորել սեփական փորձառությունները, հարաբերությունները և հասարակական կապերը: Դրա հետ մեկտեղ տեղեկացվածությունը կարող է նպաստել նաև հիվանդության ընդունմանը, հուզական կարգավորմանը և մտերիմների հետ ավելի անկեղծ ու խորը հարաբերությունների ձևավորմանը, ինչը որոշ դեպքերում նպաստում է հուսահատության մակարդակի նվազմանը:

Բանալի բառեր – *պալիատիվ խնամք, կյանքի վերաիմաստավորում, հուսահատության դրսևորումներ, մտերիմների հետ կապվածություն, հիվանդության փուլի մասին տեղեկացվածություն*

Քաղցկեղ ունեցող անհատները ախտորոշման պահից մինչև վիրահատական և օժանդակ բուժում ստանալու փուլը առերեսվում են անցանկալի կենսական բազմաթիվ փոխակերպումների հետ, որոնց դիմակայելու համար հոգեբանական և ֆիզիկական հարմարողականության զգալի ներուժ է պահանջվում: Քաղցկեղի ախտորոշումը և բուժումը համարվում են ճգնաժամային փուլ, որը առաջացնում է հուզական բացասական արձագանքներ՝ հուսահատություն, տագնապ, զայրույթ, անորոշություն, մեղքի զգացում, վախ և հուզական անհանգստություն¹: Հիվանդության բարդ ընթացքն ու անկանխատեսելի ելքը կարող են էսպես ազդել անձի կյանքի որակի վրա՝ խաթարելով նրա հոգեկան կայունությունը, նվազեցնելով ապրելու մոտիվացիան, վատթարացնելով սոցիալական հարաբերությունները²:

Հիվանդության պատճառով գոյաբանական ճգնաժամում հայտնված անձանց համար առանցքային նշանակություն է ձեռք բերում կյանքի իմաստավորման գործընթացը: Վ. Ֆրանկլը պնդում է, որ «կյանքի իմաստի անհրաժեշտությունը մարդկային փորձի հոգևոր բաղադրիչ է: Մարդը միտք, մարմին և ոգի է, և հետևաբար՝ իմաստի զգացում ունենալն ու այն պահպանելը տալիս են բարեկեցություն, խաղաղություն և բավարարվածություն զգալու հնարավորություն, նպաստում են նրա ինքնագարգացմանն ու այլոց, ինչպես նաև իրենից շատ ավելի ավազի հետ կապվածության ներքին զգացման ձևավորմանը»³:

¹ Sté u **Fan-Ko Sun, Ming-Kung Wu, YuChun Yao, Chun-Ying Chiang, Chu-Yun Lu.** Meaning in life as a mediator of the associations among depression, hopelessness and suicidal ideation: A path analysis, Journal of Psychiatric and Mental Health Nursing, Volume 29, Issue 1, էջ 57-66. (08.02.2021) Available at: <https://doi.org/10.1111/jpm.12739>

² Sté u **Michael H. Antoni, Patricia I. Moreno, and Frank J. Penedo,** Stress Management Interventions to Facilitate Psychological and Physiological Adaptation and Optimal Health Outcomes in Cancer Patients and Survivors. Annual Review of Psychology Vol. 74, 2023, էջ 423-455. Available at: <https://doi.org/10.1146/annurev-psych-030122-124119/>

³ **William Breitbart, and Karen S. Heller.** Reframing Hope: Meaning-Centered Care for Patients Near the End of Life. Journal of Palliative Medicine Vol. 6, No. 6 (07.07.2004). <https://doi.org/10.1089/10966210332265490>

Նման պայմաններում առանձնապես կարևորվում են քաղցկեղ ունեցող մարդկանց կողմից սեփական կյանքի վերախմաստավորման գործընթացի հետազոտությունն ու հուսահատության առաջացման հիմնական պատճառների բացորոշումը: Բժշկության առաջընթացի շնորհիվ քաղցկեղն ալյուս չի դիտարկվում որպես մահացու դատավճիռ. այսօր այն համարվում է քրոնիկ հիվանդություն, որի հետ մարդիկ կարող են ապրել տարիներ շարունակ: Սակայն, ֆիզիկական ցավից բացի, ինչպես վերը նշվեց, քաղցկեղն ուղեկցվում է նաև հոգեբանական լուրջ մարտահրավերներով: Այս համատեքստում առավել մեծ կարևորություն է ստանում հիվանդության փուլի վերաբերյալ պացիենտի տեղեկացվածության հիմնախնդիրը, քանի որ այդպիսի իրազեկվածությունը կարող է նպաստել հուսահատության դրսևորումներին կամ, ընդհակառակը, նվազեցնել դրանք, ինչպես նաև խթանել կամ սահմանափակել կյանքի իմաստի որոնման և պահպանման կարիքը: Ինչպես նշում են Կրիստիալ Լ. Պարկը և Ս. Ֆոլկմենը՝ «կյանքի իմաստը կարող է դիտարկվել որպես հաղթահարման գործընթաց և հաջող հաղթահարման գործընթացի արդյունք, որն ինքնին ճկունության կարևոր տարր է»⁴:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել պալիատիվ բուժման փուլում գտնվող քաղցկեղ ունեցող անձանց կյանքի իմաստավորման և հուսահատության դրսևորումները, հիվանդության փուլի վերաբերյալ նրանց տեղեկացվածությունը և դրանց կապը:

Հետազոտության խնդիրներն են՝

- ✓ Բացահայտել պալիատիվ բուժման փուլում գտնվող քաղցկեղ ունեցող մարդկանց շրջանում մտերիմների հետ կապվածության, կյանքի իմաստավորման և հուսահատության դրսևորումների կապը հիվանդության փուլի մասին նրանց տեղեկացվածության հետ:
- ✓ Դուրս բերել կյանքի իմաստավորման և հուսահատության դրսևորումների, ինչպես նաև մտերիմների հետ կապվածության առանձնահատկությունների ձևավորման վրա հիվանդության փուլի մասին հիվանդների տեղեկացվածության ազդեցության չափը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝

- ✓ Ա. Բեկի «հուսահատության» գնահատման սանդղակը (BHS)⁵:
- ✓ Մայք Ֆ. Ստեգերի «կյանքի իմաստի» գնահատման սանդղակը (MLQ)⁶:

⁴ Annina Seiler, Josef Jenewein. Resilience in cancer patients, Department of Consultation-Liaison Psychiatry and Psychosomatic Medicine, University Hospital Zurich, Zurich, Switzerland; Clinic Zugersee, Center for Psychiatry and Psychotherapy, Oberwil-Zug, Switzerland. (05.04.2019) Available at: <https://www.frontiersin.org/articles/10.3389/fpsy.2019.00208/full/>

⁵ St u A. T. Beck, A. Weissman, D. Lester and L. Trexler (1974). The measurement of pessimism: The Hopelessness Scale. Journal of Consulting and Clinical Psychology, 42(6), էջ 861–865. Available at: <https://doi.org/10.1037/h0037562>

⁶ St u Frank Martela, Michael Steger. The three meanings of meaning in life: Distinguishing coherence, purpose, and significance. The Journal of Positive Psychology (27.01.2016), 11(5):1-15 Available at:

✓ Ն. Քոլինզի «մեծահասակների կապվածության» գնահատման սանդղակը (AAS, 1996)⁷:

Հետազոտության մասնակիցները եղել են 30-80 տարեկան քաղցկեղ ունեցող 80 մարդ՝ 40 կին և 40 տղամարդ: Հետազոտությունն իրականացվել է Վ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնում՝ պալիատիվ ծառայության բաժնում: Հետազոտությունը կատարվել է 2024 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսներին:

Հետազոտության արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն

Աղյուսակ 1

Տարիքի և հուսահատության համահարաբերակցություն

Հուսահատություն		0-3 Բացակայում է կամ շատ քիչ է	4-8 Թեթև	9-14 Չափավոր*	15-20 Ծանր**	Ընդհանուր
Տարիք	Խումբ 30-50	11	4	1	0	16
	Խումբ 50-70	20	20	11	2	53
	Խումբ 70+	1	4	4	2	11
Ընդհանուր		32	28	16	4	80

Աղյուսակ 1-ից երևում է, որ 30-50 տարեկանների խմբում (16 հետազոտվող) հուսահատությունը քիչ արտահայտված է: Հետազոտվողներից 11-ի մոտ այն բացակայում է, 4-ի մոտ ունի թեթև և 1-ի մոտ՝ չափավոր արտահայտվածություն:

50-70 տարիքային խմբում (53 հետազոտվող) դիտվում է հուսահատության միջին արտահայտվածություն: Հետազոտվողներից 20-ի մոտ այն բացակայում է, 20-ի մոտ՝ թեթև, 11-ի մոտ՝ չափավոր և 2-ի մոտ ծանր աստիճանի է:

70+ տարիքային խմբում (11 հետազոտվող) դիտվում է հուսահատության արտահայտվածություն: Հետազոտվողներից 1-ի մոտ հուսահատությունը բացակայում է, 4-ի մոտ թեթև է արտահայտված, 4-ի մոտ՝ չափավոր և 2-ի մոտ՝ ծանր:

DOI:10.1080/17439760.2015.1137623: Տե՛ս նաև՝ **Steger, M. F., Frazier, P., Oishi, S., & Kaler, M.** The Meaning in Life Questionnaire: Assessing the presence of and search for meaning in life. *Journal of Counseling Psychology*, 2006, 53, էջ 80-93:

⁷ Տե՛ս **N. L. Collins. Adult Attachment Scale.** In **J. A. Simpson & L. Campbell** (Eds.) (2008). *The Handbook of Relationship Science and Couples Therapy* (էջ 3-30). New York: Guilford Press.

Ընդհանուր առմամբ 80 հետազոտվողներից 32-ի մոտ հուսահատությունն արտահայտված չէ կամ շատ քիչ է արտահայտված, 28-ի մոտ գրանցվել է թեթև, 16-ի մոտ՝ չափավոր և 4-ի մոտ՝ ծանր արտահայտվածություն: Ամբողջական ընտրանքի հետազոտվողներից (80 մասնակից) 40%-ը հուսահատություն ընդհանրապես չունի, կամ շատ թույլ է արտահայտված, 35%-ի մոտ արտահայտվածությունը թեթև է, 20%-ի մոտ՝ չափավոր, և 5%-ի մոտ՝ ծանր:

Այս տվյալները վկայում են, որ տարբեր տարիքային խմբերում հուսահատության դրսևորման աստիճանը տարբեր է, սակայն ընդհանուր պատկերը ցույց է տալիս, որ հուսահատությունը մեծ մասամբ արտահայտվում է թեթև կամ չափավոր մակարդակներով: Մասնավորապես, 30-50 տարիքային խմբում 68.8%-ի մոտ հուսահատությունն արտահայտված չէ, 25%-ի մոտ այն թեթև է արտահայտված և միայն 6.2%-ի մոտ չափավոր: Սա կարող է վկայել, որ այս տարիքային խմբում մարդիկ դեռևս ունեն ներքին ռեսուրսներ դժվարությունները հաղթահարելու համար:

50-70 տարիքային խմբում 37.7%-ի մոտ հուսահատությունն արտահայտված չէ, մյուս 37.7%-ի մոտ թեթև է արտահայտված, 20.7%-ի մոտ՝ չափավոր և 3.8%-ի մոտ՝ ծանր: Այստեղ նկատվում է ավելի ակնհայտ հուսահատություն, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես հիվանդության ընթացքով, այնպես էլ տվյալ կենսափուլին հատուկ հոգեբանական ճնշմամբ:

70+ տարիքային խմբում հետազոտվողների 9.1%-ի մոտ հուսահատությունն արտահայտված չէ, 36.4%-ի մոտ թեթև է, 36.4%-ի մոտ՝ չափավոր և 18.2%-ի մոտ՝ ծանր: Այս խմբում նկատվում է հուսահատության արտահայտվածության ամենաբարձր աստիճանը, ինչը կարող է պայմանավորված լինել կյանքի վերջնամոտ փուլի գիտակցումով և ընդհանուր առողջական վիճակի կտրուկ վատթարացմամբ:

Աղյուսակ 2

Հիվանդության բուժման փուլի մասին տեղեկացվածություն և հուսահատության համահարաբերակցություն

Հուսահատություն	0-3 Բացակայում է կամ շատ քիչ է	4-8 Թեթև	9-14 Չափավոր*	15-20 Ծանր**	Ընդհանուր
Տեղեկացված է	18	14	10	3	45
Տեղեկացված չէ	14	14	6	1	35
Ընդհանուր	32	28	16	4	80

Նայելով աղյուսակ 2-ին՝ կարող ենք տեսնել, որ հիվանդության փուլի մասին տեղեկացված խմբում, որը ընդգրկում է 45 անձ, հուսահատությունը քիչ արտահայտված է: Հետազոտվողներից 18-ի մոտ այն բացակայում է, 14-ի մոտ թեթև է արտահայտված, 10-ի մոտ՝ չափավոր և 3-ի մոտ՝ ծանր:

Մյուս՝ հիվանդության փուլի մասին չտեղեկացված խմբում (35 հետազոտվող) հուսահատությունը շատ քիչ է արտահայտված: Հետազոտվողներից 14-ի մոտ բացակայում է, 14-ի մոտ թեթև է արտահայտված, 6-ի մոտ՝ չափավոր և 1-ի մոտ՝ ծանր:

Այս տվյալները կարող են վկայել, որ, անկախ բուժման փուլից, տեղեկացված լինելու հանգամանքից, հուսահատության մակարդակը հետազոտվողների մոտ ընդհանուր առմամբ բարձր է: Մակայն, միննույն ժամանակ, կարող ենք նշել, որ տեղեկացվածության մակարդակը կարող է որոշակի դրական ազդեցություն ունենալ հոգեկան վիճակի կայունության վրա: Այս տվյալները ցույց են տալիս նաև, որ 80 մասնակիցներից շատերի մոտ հուսահատությունն առկա է, սակայն հիմնականում չի հասնում ծանր մակարդակի, որովհետև տարեց պացիենտները ավելի խոցելի են կյանքի ավարտի գիտակցության, մեկուսացման և կորստի հանդեպ⁸:

Աղյուսակ 3

Տարիքի և կյանքի իմաստի համահարաբերակցություն

Կյանքի իմաստ		Իմաստի առկայություն	Իմաստի որոնում	Ընդհանուր
Տարիք	Խումբ 30-50	6	10	16
	Խումբ 50-70	23	30	53
	Խումբ 70+	9	2	11
Ընդհանուր		38	42	80

Աղյուսակ 3-ում 30-50 տարիքային խմբի 16 հետազոտվողներից 6-ի մոտ տեսնում ենք իմաստի առկայություն, 10-ի մոտ՝ իմաստի որոնում:

50-70 տարիքային խմբի թվով 53 հետազոտվողից 23-ի մոտ արտահայտված է իմաստի առկայություն և 30-ի մոտ՝ իմաստի որոնում:

70+ տարիքային խումբը կազմող հետազոտվողից 9-ի մոտ արտահայտված է իմաստի առկայություն, 2-ի մոտ՝ իմաստի որոնում:

Ընդհանուր ընտրանքի 80 հետազոտվողից 38-ի մոտ նկատվում է իմաստի առկայության արտահայտվածություն, և 42-ի մոտ՝ իմաստի որոնման արտահայտվածություն:

Այս տվյալները վկայում են, որ 30-50 տարիքային խմբում գերակշռում է իմաստի որոնումը, ինչը կարող է ցույց տալ, որ այս տարիքում մարդիկ կյանքի իմաստի որոնումների մեջ են՝ հաշվի առնելով հնարավոր առողջական

⁸ Sté u **Sigrid Helene Kjørven Haug, Lars J. Danblot, Kari Kvigne, Valerie Demarinis**. Older people with incurable cancer: Existential meaning-making from a life-span perspective (14.04.2015) Available at: DOI:10.1017/S1478951515000644

խնդիրները և հիվանդության հետ կապված անհանգստությունները: 50-70 տարիքային խմբում կյանքի իմաստի առկայությանը և դրա որոնման միջև ավելի հավասարաչափ բաշխվածությունը վկայում են այն մասին, որ այս տարիքում մարդիկ ավելի հաճախ սկսում են վերաարժևորել իրենց կյանքը և սկսում են հասկանալ դրա իմաստը՝ հիվանդության ընթացքում ապրած փորձառություններից հետո: 70+ տարիքային խմբում գերակշռում է իմաստի առկայությունը, ինչը կարող է վկայել այն մասին, որ այս տարիքում մարդիկ կենսական հարուստ փորձառության շնորհիվ ավելի հաճախ են հասնում այդ իմաստին, գտնում են հոգևոր հանգստություն ու կայունություն՝ անկախ այն բանից, թե ինչպիսի բարդություններ են հաղթահարել: Ընդհանուր ընտրանքում 47.5%-ի մոտ նկատելի է կյանքի իմաստի առկայություն, իսկ 52.5%-ի մոտ՝ իմաստի որոնում: Այս թիվը ցույց է տալիս, որ հետազոտվողների մեծ մասը դեռևս գտնվում է կյանքի իմաստի որոնման ընթացքում, ինչը կարող է կապված լինել անորոշության, հիվանդության ընթացքի և դրա անկանխատեսելիության հետ: Այստեղ տեղին է նշել, որ անբուժելի հիվանդություն ունեցող մարդկանց հետ իր շփումներում Քյուրլեր-Ռոսը պարզել է, որ հուսահատության զգացումը մոտալուտ մահվան նշան է: Սակայն հիվանդությունն ընդունելը, դրական վերաբերմունքը և ինքնախոհության մեջ ներգրավվելը համարվում են հույզերը կենտրոնացած հաղթահարելու միջոցներ, որոնք օգնում են և թույլ են տալիս պացիենտներին վերակառուցելու սեփական անձի մասին իրենց պատկերացումը⁹:

Աղյուսակ 4

Հիվանդության բուժման փուլի մասին տեղեկացվածություն և կյանքի իմաստի համահարաբերակցություն

Կյանքի իմաստ	Իմաստի առկայություն	Իմաստի որոնում	Ընդհանուր
Տեղեկացված է	22	23	45
Տեղեկացված չէ	16	19	35
Ընդհանուր	38	42	80

Աղյուսակ 4-ում ներկայացված՝ հիվանդության փուլի մասին տեղեկացված խումբը ներառում է 45 հետազոտվող: Նրանցից 22-ի մոտ տեսնում ենք իմաստի առկայություն, 23-ի մոտ՝ իմաստի որոնում: Մյուս՝ հիվանդության փուլի մասին չտեղեկացված խմբում (35 հետազոտվող) 16-ի մոտ տեսնում ենք իմաստի առկայություն, 19-ի մոտ՝ իմաստի որոնում:

Այս տվյալները վկայում են, որ հիվանդության փուլի մասին տեղեկացված հետազոտվողների խումբը (N=45) ավելի հավասարաչափ բաշխում ունի, քան

⁹ Տե՛ս **Francisca Rego and Rui Nunes**. The interface between psychology and spirituality in palliative care, Volume 24, Issue 3 (15.08.2016) Available at: <https://doi.org/10.1177/1359105316664138>

կյանքի իմաստի առկայության և դրա որոնման խումբը. 22 մասնակիցների մոտ արտահայտվում է կյանքի իմաստի առկայություն, իսկ 23-ի մոտ՝ իմաստի որոնում: Սա կարող է նշանակել, որ հիվանդության փուլի մասին տեղեկացված անձինք, չնայած հիվանդության անորոշությանը և բարդությանը, երբեմն հաջողում են գտնել կյանքի իմաստ, բայց միաժամանակ շարունակում են որոնել հոգեբանական կայունություն ու ապագայի ապահով տեսլական, որը կապված է նրանց հիվանդության ընթացքի հետ:

Մյուս կողմից, հիվանդության փուլի մասին չտեղեկացված խմբում (N=35) իմաստի որոնման մակարդակն ավելի բարձր է, քանի որ 19 մասնակցի մոտ արտահայտվում է իմաստի որոնում, իսկ 16-ի մոտ՝ իմաստի առկայություն: Սա կարող է մատնանշել, որ ինֆորմացիայի պակասը հանգեցնում է ավելի շատ ներքին անհանգստության, և անձի մոտ ձևավորում է կյանքի իմաստի որոնման ձգտում՝ հաշվի առնելով հիվանդության անորոշությունն ու նրա զարգացման հնարավորությունները:

Ընդհանուր ընտրանքի 80 հետազոտվողներից 47.5%-ի մոտ արտահայտվում է իմաստի առկայություն, իսկ 52.5%-ի մոտ՝ իմաստի որոնում: Սա ցույց է տալիս ընդհանուր միտում, որ հետազոտվողների մեծ մասը դեռևս գտնվում է կյանքի իմաստը գտնելու և վերապրելու փուլում՝ հատկապես հաշվի առնելով նրանց առջև ծառայած առողջական մարտահրավերները:

Աղյուսակ 5

Տարիքի և մեծահասակների կապվածություն համահարաբերակցություն

Տարիք և մեծահասակների կապվածություն					
		Մտերմություն	Կախվածություն	Անհանգստություն	Ընդհանուր
Տարիք	Խումբ 30-50	2	1	13	16
	Խումբ 50-70	3	1	49	53
	Խումբ 70+	0	2	9	11
Ընդհանուր		5	4	71	80

Աղյուսակ 5-ից երևում է, որ 30-50 տարեկան 16 հետազոտվողներից 2-ի մոտ դրսևորվում է մտերիմ, 1-ի մոտ՝ կախված և 13-ի մոտ՝ անհանգիստ կապվածություն:

50-70 տարիքային խմբի 53 հետազոտվողներից 3-ի մոտ դրսևորվում է մտերիմ, 1-ի մոտ՝ կախված, 49-ի մոտ՝ անհանգիստ կապվածություն:

70+ տարիքային խմբի 11 հետազոտվողներից 2-ի մոտ դրսևորվում է կախված, 9-ի մոտ՝ անհանգիստ կապվածություն:

Ընդհանուր ընտրանքի 80 հետազոտվողներից 5-ի մոտ շփումներում նկատվում են մտերմության բացակայություն կամ շատ թույլ արտահայտվածություն, 4-ի մոտ՝ կախվածություն և 71-ի մոտ՝ անհանգստություն:

Այս տվյալները ցույց են տալիս, որ բոլոր տարիքային խմբերում գերակշռում է կապվածության՝ անհանգստությամբ ուղեկցվող տեսակը, ինչը կարող է պայմանավորված լինել հոգեբանական և սոցիալական այնպիսի գործոններով, ինչպիսիք են հիվանդության ծանրությունը և պալիատիվ խնամքի միջավայրի առանձնահատկությունները (կյանքի ավարտի փուլի գիտակցումը, բժշկական որոշումների բարդությունը, հատկապես երբ բուժումն այլևս ուղղված է ոչ թե ապաքինմանը, այլ ցավը, անհանգստությունը մեղմելուն, ինչը նոր մոտեցումներ է պահանջում թե՛ բժիշկներից, թե՛ ընտանիքի անդամներից):

Այս հանգամանքներն անշուշտ ազդում են պացիենտների և նրանց ընտանիքների հուզական վիճակի վրա՝ առաջացնելով անհանգստություն, ինչն էլ, հնարավոր է, արտահայտվում է կապվածության մեջ դրսևորվող անհանգստության տեսքով: Կախվածության դրսևորումների շատ ցածր ցուցանիշները (5 մասնակից) կարող են հուշել, որ հետազոտվողների մեծ մասը միտված է պահպանելու հուզական անկախությունը՝ կախվածության փոխարեն դրսևորելով անհանգստություն, որն առաջանում է հիվանդության ընթացքից ու դրա հետ կապված անորոշությունից:

Աղյուսակ 6

Հիվանդության փուլի մասին տեղեկացվածություն և կապվածության համահարաբերակցություն

Հիվանդության փուլի մասին տեղեկացվածություն և մեծահասակների կապվածություն				
	Մտերմություն	Կախվածություն	Անհանգստություն	Ընդհանուր
Տեղեկացված է	2	0	43	45
Տեղեկացված չէ	3	4	28	35
Ընդհանուր	5	4	71	80

Աղյուսակ 6-ից երևում է, որ հիվանդության փուլի մասին տեղեկացված խմբի 45 հետազոտվողից 2-ի մոտ դրսևորվում է մտերիմ կապվածություն, և 43-ի մոտ՝ անհանգիստ կապվածություն:

Մյուս՝ հիվանդության փուլի մասին չտեղեկացված խմբում (35 հետազոտվող) 3-ի մոտ արտահայտված է մտերիմ կապվածություն, 4-ի մոտ՝ կախված կապվածություն, և 28-ի մոտ՝ անհանգիստ կապվածություն:

Ընդհանուր առմամբ 80 հետազոտվողից 5-ի մոտ նկատվում է շփման մեջ մտերմության բացակայություն կամ շատ թույլ արտահայտվածություն, 4-ի մոտ կախվածություն, և 71-ի մոտ անհանգստություն:

Այս տվյալները վկայում են, որ հիվանդության փուլի մասին տեղեկացված խմբում կապվածությունն ուղեկցվում է անհանգստությամբ, ինչը կարող է հուշել, որ հիվանդության փուլի մասին տեղեկացվածությունը, չնայած հիվանդության ծանրությանը, ոչ միշտ է հանգեցնում ավելի բարձր կախվածության կամ մտերմության դրսևորման: Այնինչ հիվանդության փուլի մասին չտեղեկացված խմբում նկատվում է կապվածության դրսևորումների բազմազանություն, ինչը կարող է լինել, այսպես կոչված, ինֆորմացիայի պակասից առաջացած հոգեբանական հակազդման և անհանգստությունների հետևանք: Ընդհանուր ընտրանքի 80 մասնակիցներից 71-ը (88.75%) կապվածության մեջ դրսևորում են անհանգստություն, մանավանդ երբ անձը նախընտրում է պահպանել հուզական անկախություն, բայց զգում է նաև խորը հոգեբանական անհանգստություն՝ կապված սեփական հիվանդության ընթացքի և դրա հանգուցալուծման անհայտության հետ:

Արդյունքները հստակ ցույց են տալիս, որ ընտրանքի տարբեր տարիքային խմբերում հուսահատության ընդհանուր մակարդակը համեմատաբար ցածր է ինչպես տեղեկացված, այնպես էլ չտեղեկացված հետազոտվողների խմբերում: Առավել հաճախ արձանագրվում է հուսահատության թեթև դրսևորում կամ բացակայություն, ինչը վկայում է պացիենտների համեմատաբար կայուն հոգեկան վիճակի մասին:

Կյանքի իմաստի որոնումը գերակշռում է ինչպես տեղեկացված, այնպես էլ չտեղեկացված հետազոտվողների խմբերում, սակայն տեղեկացված պացիենտների շրջանում իմաստի առկայության տոկոսը փոքր-ինչ բարձր է, ինչը կարող է վկայել, որ իրազեկվածությունը նպաստում է գոյաբանական հարցերի ակտիվացմանն ու իմաստային կառուցվածքների վերագնահատմանը: 30–50 տարիքային խմբում առավել արտահայտված է իմաստի որոնումը, 50–70-ում դիտվում է իմաստի որոնման և առկայության հարաբերական հավասարակշռություն, իսկ 70+ խմբում գերակշռում է իմաստի առկայությունը, ինչը կարող է կապված լինել կյանքի փորձի և հոգևոր կայունության ձևավորման հետ:

Բոլոր տարիքային խմբերում գերակշռում է կապվածության անհանգիստ ձևը, ինչը կարող է պայմանավորված լինել հիվանդության ծանրությամբ և պալիատիվ խնամքի միջավայրի հոգեբանական առանձնահատկություններով: Հիվանդության փուլի մասին տեղեկացված հետազոտվողների խմբում կապվածության անհանգիստ ձևի գերակշռությունը հուշում է, որ իրազեկվածությունը ոչ միշտ է ուղեկցվում ավելի բարձր մտերմությամբ, մինչդեռ չտեղեկացված հետազոտվողների խմբում նկատվում է կապվածության դրսևորումների ավելի մեծ բազմազանություն, որը կարող է պայմանավորված լինել

ինֆորմացիայի պակասից առաջացած հոգեբանական հակազդմամբ և անհանգստություններով:

Ընտանեկան աջակցությունը և սոցիալական աջակցությունը կարևոր գործոններ են քրոնիկ, կյանքին սպառնացող հիվանդությունների դեմ պայքարելու համար: Այդպիսի հիվանդությունների շարքին է դասվում նաև քաղցկեղը, որը բացասաբար է ազդում քաղցկեղ ունեցող մարդկանց ընդհանուր բարեկեցության վրա:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ անձի՝ հիվանդության հետ կապված ապրումները խթանում են իմաստավորման ներքին գործընթացները, որոնք ունեն հոգեբանական և միջանձնային հստակ ազդեցություն:

Քաղցկեղ ունեցող անձանց մտերիմները հաճախ ապրում են սթրեսային վիճակներ, որոնք բացասաբար են անդրադառնում նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության վրա՝ առաջացնելով հուզական ծանրաբեռնվածություն, որը կրկին մատնանշում է, որ պացիենտի և հարազատի միջև բաց և ուղիղ հաղորդակցումը կարող է նպաստել այդ ծանրաբեռնվածության նվազմանը¹⁰:

Ուսումնասիրության արդյունքների մեկնաբանության ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել ընտրանքի սահմանափակ ծավալը և ուսումնասիրված փոփոխականների բազմազանությունը, որոնք կարող են որոշակիորեն սահմանափակել արդյունքների ընդհանրացման հնարավորությունը:

ЕВА ГУКАСЯН, ЕВА АСРИБАБАЯН – Роль информированности о стадии заболевания у лиц с онкологическими заболеваниями в контексте привязанности к значимым другим, смыслообразования жизни и проявлений безнадежности. – Рак считается одной из наиболее серьезных проблем здравоохранения XXI века. Факт наличия онкологического заболевания нередко перерастает в экзистенциальный кризис, сопровождающийся чувством отчаяния, неопределенностью в отношении будущего, а также необходимостью переосмысления смысла и ценностей жизни. Особенно для пациентов, находящихся на этапе паллиативного лечения, заболевание становится не только медицинским состоянием, но и глубоко психологическим переживанием, требующим формирования новых адаптационных подходов. В настоящей работе изучаются особенности осмысления жизни, привязанности к значимым другим и проявления отчаяния у лиц с онкологическими заболеваниями, находящихся на этапе паллиативного лечения, в контексте информированности пациентов о стадии заболевания. Полученные результаты подчеркивают, что информированность пациентов о стадии заболевания оказывает существенное влияние на осмысление жизни, характер привязанности к близким и выраженность отчаяния, выступая важным психологическим фактором в паллиативной фазе. В частности, лица, осведомленные о стадии своего заболевания, чаще демонстрируют более выраженный поиск смысла жизни и стремление к переоценке ценности собственного существования, личного опыта, межличностных отношений и социальных связей. В то же время информированность может способствовать принятию заболевания, эмоциональной регуляции и формированию более открытых и глубоких отношений с близкими, что в ряде случаев приводит к снижению уровня отчаяния.

¹⁰ Sté u **Zahra'a H. Saimaldaher and Dhuha Y. Wazqar.** Relationships between caregiving stress, mental health and physical health in family caregivers of adult patients with cancer: implications for nursing practice. Department of Medical Surgical Nursing, Faculty of Nursing, King Abdulaziz University, Jeddah, Saudi Arabia. Nordic College of Caring Science. (21.11.2019) Available at: doi: 10.1111/scs.12795

Ключевые слова: *паллиативная помощь, осмысленность жизни, поиск смысла жизни, проявления безнадежности, привязанность к близким, информированность о стадии заболевания*

YEVA GHUKASYAN, YEVA ASRIBABAYAN – *The Role of Awareness of the Disease Stage Among Individuals with Cancer in the Context of Attachment to Relatives, Meaning in Life, and Manifestations of Hopelessness.* – Cancer is considered one of the most serious health challenges of the 21st century. The diagnosis of cancer often turns into an existential crisis, accompanied by feelings of despair, uncertainty about the future, and the need to reconsider the meaning and values of life. Especially for patients in the palliative care stage, the illness becomes not only a medical condition but also a profound psychological experience that requires the development of new adaptive approaches. The present study examines the characteristics of meaning-making in life, attachment to significant others, and manifestations of despair among individuals with cancer undergoing palliative care, from the perspective of patients' awareness of the stage of their illness. The findings highlight that patients' awareness of their disease stage has a significant impact on life meaning-making, attachment to close others, and the intensity of despair, functioning as an important psychological factor in the palliative phase. In particular, individuals who are informed about the stage of their illness tend to demonstrate a more pronounced search for meaning in life and strive to re-evaluate the value of their existence, personal experiences, relationships, and social connections. At the same time, such awareness may facilitate acceptance of the illness, emotional regulation, and the formation of more open and deeper relationships with close others, which in some cases leads to a reduction in levels of despair.

Key words: *palliative care, meaning in life, search for meaning in life, manifestations of hopelessness, attachment to close others, disease stage awareness*

Օգտագործված գրականության ցանկ / References

- Annina Seiler, Josef Jenewein: Resilience in cancer patients, Department of Consultation-Liaison Psychiatry and Psychosomatic Medicine, University Hospital Zurich, Zurich, Switzerland; Clinic Zugersee, Center for Psychiatry and Psychotherapy, Oberwil-Zug, Switzerland. (05.04.2019) <https://www.frontiersin.org/articles/10.3389/fpsy.2019.00208/full/>
- Beck A. T., Weissman A., Lester D. and Trexler L. (1974). The measurement of pessimism: The Hopelessness Scale. *Journal of Consulting and Clinical Psychology*, 42(6), 861–865. <https://doi.org/10.1037/h0037562>
- Collins N. L.. Adult Attachment Scale. In J. A. Simpson & L. Campbell (Eds.), *The Handbook of Relationship Science and Couples Therapy* (pp. 3-30). New York: Guilford Press. (2008)
- Fan-Ko Sun, Ming-Kung Wu, YuChun Yao, Chun-Ying Chiang, Chu-Yun Lu. Meaning in life as a mediator of the associations among depression, hopelessness and suicidal ideation: A path analysis, *Journal of Psychiatric and Mental Health Nursing* Volume 29, Issue 1 p. 57-66. (08.02.2021) <https://doi.org/10.1111/jpm.12739>
- Francisca Rego and Rui Nunes. The interface between psychology and spirituality in palliative care, Volume 24, Issue 3 (15.08.2016) <https://doi.org/10.1177/1359105316664138>
- Frank Martela, Michael Steger. The three meanings of meaning in life: Distinguishing coherence, purpose, and significance. *The Journal of Positive Psychology* (27.01.2016), 11(5):1-15 DOI:10.1080/17439760.2015.1137623
- Michael H. Antoni, Patricia I. Moreno, and Frank J. Penedo, Stress Management Interventions to Facilitate Psychological and Physiological Adaptation and Optimal Health Outcomes in Cancer Patients and Survivors. *Annual Review of Psychology* Vol. 74, 2023, pp. 423-455 <https://doi.org/10.1146/annurev-psych-030122-124119/>
- Sigrid Helene Kjørven Haug, Lars J. Danblot, Kari Kvigne, Valerie Demarinis. Older people with incurable cancer: Existential meaning-making from a life-span perspective (14.04.2015)

- DOI:10.1017/S1478951515000644 Steger, M. F., Frazier, P., Oishi, S., & Kaler, M.. The Meaning in Life Questionnaire: Assessing the presence of and search for meaning in life. *Journal of Counseling Psychology*, 2006, 53, 80-93.
- William Breitbart, and Karen S. Heller. Reframing Hope: Meaning-Centered Care for Patients Near the End of Life. *Journal of Palliative Medicine* Vol. 6, No. 6 (07.07.2004) <https://doi.org/10.1089/10966210332265490>
- Zahra'a H. Saimaldaher RN and Dhuha Y. Wazqar. Relationships between caregiving stress, mental health and physical health in family caregivers of adult patients with cancer: implications for nursing practice. Department of Medical Surgical Nursing, Faculty of Nursing, King Abdulaziz University, Jeddah, Saudi Arabia. *Nordic College of Caring Science*. (21.11.2019) doi: 10.1111/scs.12795

Խմբագրության հասցեն՝ Երևան, Խ. Աբովյան փող., 52ա
Адрес редакции: Ереван, ул. Абовяна 52а
Address: 52a, Kh. Abovyan str., Yerevan

Չայք՝ journals.y-su.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հրատարակչական խմբագիր և
թողարկման պատասխանատու
Издательский редактор и ответ-
ственный выпуска
Publishing Editor and Issued by

Արմեն Հովակիմյան

Армен Овакимян

Armen Novakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան

Гаяне Григорян

Gayane Grigoryan

Տեխնիկական խմբագիր՝
Технический редактор:
Technical Editor:

Աննա Մկրտչյան

Анна Мкртчян

Anna Mkrtchyan

Ստորագրված է տպագրության 02. 04. 2026: